

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.— ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ . . . Մեծարեցեան մթնոլորտ
- 4.— \* \* \* . . . Միսաք Մեծարեցեաց թուականներով եւ  
քիւերով
- 22.— Մ. ԻՇԵԱՆ . . . Երկու կիրակմութեք
- 25.— Մ. ՄԵՇԱՐԵՆՑ . . . Կիրակմութ
- 25.— ԻՆՏՐԱ . . . «Ներաշխարհ»
- 26.— MISSAG METSARENTS . . . Prayer For The New Year  
(Translated by Diana Der Hovannessian)
- 27.— Մ. ՄԵՇԱՐԵՆՑ . . . Արդի մարդուն հայր մերը
- 29.— » » . . . Ջուրէն դարձին
- 30.— Պ. ՇԱՀԲԱԶԵԱՆ . . . Հայաստանեայց եկեղեցին եւ Միսաք  
Մեծարեցեաց գրական ժառանգութիւնը
- 33.— Մ. ՄԵՇԱՐԵՆՑ . . . Նուակները
- 34.— Ե. ԶԱՐԵՆՑ . . . Մ. Մ.
- 34.— Գ. ՄԱՀԱՐԻ . . . Անանձնական
- 35.— Թ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . Համայնապաշտ ապրումներու գուարթուն  
Հրաւիրակը
- 42.— Ն. ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ . . . Միանուում բնութեան հետ
- 45.— Փ. ՃԵՐԱՆԵԱՆ . . . Բուրմունքի գիշեր...
- 46.— Լ. ՄԿՐՏՉԵԱՆ . . . Խորասուզումների բանաստեղծը
- 52.— Մ. ՄԵՇԱՐԵՆՑ . . . Իրիկունը
- 53.— ՇԱՀԱՆԿՈՒԿԵՑ . . . Հարս հովիտ
- 55.— Մ. ՄԵՇԱՐԵՆՑ . . . Ի՞նչ արեցաւքեանք...
- 56.— Գ. ՄԱՀԱՐԻ . . . Մեծարեցեաց փառոցում
- 57.— Թ. ՊԵՐՊԵՐԵԱՆ . . . Մեծարեցեան կախարհամբ

Շար. Կողքի Յրդ էջ

# Բազմը

## ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ի. Ե. ՕՒՐԻ. Ի Ի Ի 11 - 12 Ն.Ց. - ԳՆԿ. 1986 ՉԵՐՏԱԻՐ



ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

### ՄԵԾԱՐԵՆՅԵԱՆ ՄԹՆՈՂՈՐՏ

Մեծարենցի ծննդեան 100ամեակը բնականորեն առիթ պիտի տայ զբազէտներու, բանաստեղծներու, գրադատներու յատուկ սեւեռումի, խոր քննարկման տակ դնելու եւ նոր արժեւորումի բարձրացնելու տաղանդաւոր բանաստեղծին վաստակը, նշելով իր բանաստեղծական արուեստին, հոգեմտաւոր աշխարհին, բանաստեղծական զգայութեան, իւրայատուկ ոճին այլազան երեսներն ու երանգները:

Ինձի համար, Մեծարենցի գրական աւանդին մէջ ամենէն գրաւիչը այն մթնոլորտն է, զոր ոչ մէկ ուրիշ բառով կարելի է բնորոշել, բայց միայն՝ մեծարեցեան տարազով՝ այսինքն՝ շեշտակիորէն ինքնադրոշմ, եզակիորէն առանձնայատուկ մթնոլորտ մը, որուն համար գտնել հասարակաց գիծեր, հանգիտութիւններ այլ բանաստեղծական ոլորտներու հետ, պարզապէս անկարելի է: Իր բոլոր բանաստեղծութեանց մէջէն զի՞ծ ու գոյն, կերպ ու կեանք առնող մթնոլորտը կը հանգիստադրէ այնպիսի՝ ապրումներու հոսանք մը, որ իր անձին զգայութիւններուն եւ մարդուն, բնութեան, յատկապէս գեղջկական միջավայրին հետ իր բացառիկ մտերմութեան շունչովն է բարախուն:

Կը ջանամ արագ նշումներով բնութագրել միայն գէթ երկու այն երեւոյթները, որոնք այդ մթնոլորտին լինելութեան եղա-

նակները կը բարացուցեն, առանց այդ մթնոլորտը ամբողջութեամբ կարենալ պարագրելու, նկարագրելու կամ վերարտագրելու։

ա. Բնութեան հետ իր մտերմութիւնը, գիւղին, հիւղին, հովին, ծառերուն, տերեւներուն, աքախաներուն, ուռիներուն, վարդին, անձրեւին ու ձիւնին, ջրաուքին ու մառախուղին, եւ բնութեան այլ հազար ու մի ճառագայթումներուն հետ իր հազորութիւնը անձնացած երեւոյթներ են։ Ուրիշ խօսքով՝ անոնք իր մէջ խորասուզուած պարզ ներկայութիւններ չեն, այլ՝ կերպրեցնելու եւ պայծառակերպոյ ներգործութիւններ եւ ոչ թէ իրմէ դուրս գիտուած ու գրչով նկարագրուած իրականութիւններ։

Այդ մտերմութիւնը տարօրինակ զուգակցութեամբ մը միտքս կը բերէ ուրիշ տեսակի կենսապատկեր մը, որ միջազգայնորէն ճանչցուած այն մտերմութիւնն է, զոր Սուրբ Ֆրանսիս Ասիզացին (St. Francis of Assisi) ունեցած էր բնութեան եւ կենդանիներու աշխարհին հետ, անոնց բոլորին մէջ տեսնելով Աստուծոյ շունչին անսպառելի ներկայութիւնը։ Մեծարենցեան աշխարհը, նեղ իմաստով հասկցուած՝ կրօնական-աստուածաբանական մտեցումէն շատ տարբեր պատճառաւորութեամբ մը կը բացատրուի եւ ըստ այնմ կը յատկանշուի. ասիկա իր անձին բնական թարմութեան եւ պարզութեան ու անսահման բարութեան ցոյճն է բնութեան մէջ երկարաձգուած։ Իր բանաստեղծութեանց մէջէն բնութիւնն ու իր անձը կը բարբախեն մէ՛կ տրոփով, ըլլա՛յ այդ գիշերուան մէջ կամ այգերգի պահուն, կամ աշնան, կամ մըթընշաղին, կամ կիրակնամուտքին, բայց մասնաւորաբար երեկոյեան պահերուն, երբ կարծէք իր հոգին կը գտնէ իր ամէնէն հարգատ աշխարհը՝ «Ըլլայի՛, ըլլայի՛» ներու այնքան խորասոյգ եւ առինքնող բաղձանքներու ոսկեհիւսքով մը դրասանգուած։

բ. Մեծարենցեան մթնոլորտին մէջ բնութեան անուշ այս յաճախանքին հետ, եւ անկէ անբաժան, կայ իր անհուն ու անպարագիծ մարդկայնութիւնը։ Մարդերը իրեն համար այնպիսի՛ էակներ են, որոնք կարծէք իր անձին բաղկացուցիչ մասնիկներն են։ Կեանքի անուշութիւնը՝ կեանքէն պարպուելու վտանգէն բռնուած այս երիտասարդ տղուն համար բացատրիկ գրաւույթիւն մը ունի։ Իր ձայնը՝ կեանքին, մարդուն կամ Աստուծոյ անողորութեան դէմ պոռթկում մը չէ, ոչ այ յուսահատական աւաշ մը կամ դառնաշունչ ճիշ մը, այլ՝ կեանքին անուշութիւնը իր պարզութեան մէջ վայելելու գոյապաշտական ձգտում մը, որ իր գաղաթնակէտին է բարձրացած «Արդի մարդուն շայր մեր»ով, մարդերէն զատ այդ ուրախութիւնը բնութեան տարրերէն իսկ քաղելու տարերային իղձով մը յատկանշուած։

«Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնակեան ժողովե՛լ՝ հոգւոյն մէջ ամէնուն, համայնական հոգւոյն ամէն մասնիկներումս մէջ՝ ամէն ժամ։

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն ամանձնական»:

\* \*

Մեծարենցեան մթնոլորտը նկարագրումով ու վերլուծումով չի կրնար ճանչցուիլ. շատ աւելի շնչաւոր ու շարժուն բնութեամբ մը օժտուած՝ ան ինքզինք կը յայտնաբերէ կենդանի եւ ուղղակի հաղորդութեամբ մը, առանց մեկնաբանական միջնորդութեան եւ լուսարանիչ կամ պարզաբանական նեցուկներու: Արդի մարդը իր տարապայմանօրէն արդիականացեալ կեանքին մէջ այլեւս բնութեան զգայարանքը կորսնցուցած եւ ճարտարարուեստականութեան հեղձուցիչ մթնոլորտովը նուաճւած, որքա՛ն պէտք ունի մեծարենցեան այդ մթնոլորտին եւ անոր մարդկայնացնող ներգործութեան: Երբ այսօր մարդուն շուրջ ամէն ինչ մարդահնար սարքուածք է, երբ բնութեան շուշին թափանցումը մարդուն մէջ վատ հաղորդական արգելակներու ահաւոր ցանկապատերով ամէն օր քիչ մ'աւելի կը խափանուի, համակարգիչի (computer) եւ այլ ինքնագործ մեքենաներու տիրապետութեան այս օրերուն, Մեծարենցի բանաստեղծութեամբ վերստեղծուած բնութիւնը, մարդկայնացած տարերքը աստուածաստեղծ այս նիւթեղէն աշխարհին, պարզապէս կրնան բալասան դառնալ հոգիներուն համար անոնց՝ որոնք առաւօտ երբ արթըննան, արեւուն լոյսն անգամ օտար կը զգան արուեստական լոյսօրէն այնքան համագրաւուած եւ գերեզմարուած կենցաղային կացութեամբը... (condition humaine):

Աշխարհը իսկապէս սկսած է «իրիկնանայ»՝ բնութեան հանդէպ մարդու մարդկայնական վերաբերումին այս հետզհետէ արեւամարող ընթացքին հետեւանքով: Մեծարենցեան բանաստեղծութիւնը, ինձի այնպէս կը թուի, որ կրնայ առաւօտ բանալ մեզի համար, մեզ աւելի հարազատօրէն տանելով մեր գոյութեան ակունքներուն եւ մեր մէջ վերադառնել տալով մեզի մեր լինելութեան բնութենական ու մարդկային հարազատութիւնը:

Եւ այժմ բառերն իրմէ առնելով կ'ընծայեմ զանոնք ձեզի իրրեւ 100ամեակին գունբացէք.

«Ա՛հ, սա առտո՛ւն ըլլայի ես.  
 ու կաթիլ մը տայի անճիւթ նեկտարէս,  
 ու գէթ ցո՛լք մը տայի ոսկի իմ հուրէս  
 մութ հոգիի ճըրագներուն ցրտահար:  
 Ա՛հ, սա առտո՛ւն ըլլայի ես»:

Առաւօտեանդ վերալուսածագին իրր ուխտաւոր կու գանք քեզի Արեւագայի այս պաշտամունքը՝ ընծայելու 100ամեակիդ խորանին վրայ:



Մեծարեց պատանի

Հետագայ էջերուն տրուած Մեծարեցի կենսագրականը կազմած ենք՝ աղբիւր ունենալով դիտաւորաբար Քորոս Ազատեանի տնի կեանքն իտարգրուած հատորը, միակի արիշիմ օտակ ժողովածուին յաւաքաբանը, ճշայնմիջ ամապրին մէջ ստորագրած Յ. մ. Սիրունիի մեծարեցեան յօդուածը, մեր արտմագրութեան տակ գրած Արտաշէ Տէր Պաշտօտեանի կարգ մը հանդէսները, տարրեր գրութիւններու մէջ յայտնարեան հայրենի մտաւորական Ալեքեոս Շարտրեանի տուեալները, Մեծարեցի գործին թեր կամ դէմ տրտայտըւած մամանուկեցեանքուն վկայութիւնները, եւայլն, եւայլն:

Ու եթէ թերութիւններ կան այս բաժնին մէջ, ու անպայման թերիներ կան, պատճառը պէտք է փնտռել ուղղակի մեր պայմաններուն մէջ: Տեղափոխուած ու իրենց տըր յարկերուն տակ զեռ դասուորուած չլին ճեմարանի եւ Հայկազեան զոյգէնի մասնագարանները, Անթիլիասի մասնագարանին կը պակսէին մեզ հետաքրքրող մամոյ հաւաքածուներէն սմանք, անհատ բարեկամներու զըրազարանները մասշին չլին մեզի, իսկ արտասահման յոգուած մեր կարգ մը նամակներուն պատասխանները հաւանարար նետուած են նամակատան անյայտ մէկ անկիւնը:

Հոս տրուած նիւթերը պատճենաւանուած են ուղղակի իրենց աղբիւրներէն:

# ՄԻՍԱԿ ՄԵՃԱՐԵՆՑ

## թուականներով եւ թիւերով

1886

Մնած է կարապետ Մեծատուրեանի եւ Իսկուհի Աւագեանի յարկին տակ, 1886 Յունուարին, Ակնայ շրջանի Բիւնկեան գիւղը:

● Կրտսերը՝ մէկ քոյր եւ երկու եղբայրներու՝ Քազուհի, Գեորգ, Սարգիս:

1892

Քաղէ ու աղմուկէ հետոս ապրիլու իր շեշտըւած հակումին պատճառով, զեռ վեց տարեկան չեղած՝ կը գրուի տեղւոյն Մեսրոպեան վարժարանը, ուր կը պարզէ բնասորութեան միեւնոյն գի-

Բաճառտեղծական սիրուն հատորիկ մը, որ տպագրութեան յանձնուեցաւ այս օրերու, կը խառնուայ համակրելի տեղ մը գրաւել մեր նորահաս գրագետներու հեղինակութեանց շարքին մէջ: Միտա՛ Մեծարեմ, նայելի՛ն սան կնդրոնական վարժարանի, որ 1903-1906 տարիներուն «Մասիս»ներուն մէջ իր հրատարակած գեղեցիկ ստանաւորներով ծանօթացաւ ու գնահատուեցաւ, ամենէ փառասիրութիւնը կ'ունենայ իր ամտեղ քերթուածներն հատորի մը մէջ ամփոփելու: Իր զարդացկամ շրջանը ընդհատած էր ձեռագործութեան պատմաւանդ, բայց չընդհատուեցաւ իր բանաստեղծական աւիմը: Ի՛նչ մի որ սկիզբազանութիւնը աւելի՛ հրապուրելի կը գարձնէ բանաստեղծութիւնը ու ինքնուրուի մըսմ կու տայ այդ հուկամի՛ն: Միտա՛ Մեծարեմց տառփն վայրկեանէն ուշադրութիւն զըբաւեց: Նորու-նիմց ստանաւորներ՝ եւ արզէն իսկ կը հարցընելին, թէ ո՛վ է այդ զայրահար ու ներդաշնակ տաղբեր հեղինակը: Յետոյ քննախնայք ունեցաւ ընտրելու «Շաւաթ» միտածն գրական ծածկանունը, որ այսօր սիրելի գարձած ըլլայ կ'երեսի իրեն — ինչպէս եղաւ ընթերցողներու — որ իր ստանաւորներու անդրաբնիկ անունը մկրտն տայ անունով՝ «Միտածն» («Արեւիկ», 10 Մարտ 1907):

ԳԱՄԵՐ (ՏԻՓՈՒՆ ԱՐՓԻԱՐՄԱՆ)



Մեծարեմցի ծննդավայրը՝ Բրնկեան, Ս. Նրեշտակապետաց քաղը, ուր կը գտնուէր Մեծաստրեաններու բնակարանը

*Ժերը, միտածանակ զի կարելորութիւն ընծայելով դասերուն, ա՛յնքան՝ որ վարժարանին արջն ու սուտըցիլը կը ստիպուին ծնողներուն իմացնել մանուկին շօռլը, անընդունակ եւ ապուշ աշակերտ մըջ ըլլալու պարագան:*

1895

*Ինչ տարեկանին՝ մօրը հետ կը փոխադրուի Սվազ, աւազ եղորո՛ր՝ փաստարանի Գէորգ Մեծաստրեանի մօտ: Բնակութեան համար կ'ընտրեն Հայոց թաղը եւ Միտաց կը յաճախէ անդուրէն Արամեան վարժարան: Հոս ո՛չ միայն մտքնեկ կու տայ իր անընդունակութեան մասին կազմուած տպաւորութիւնները, այլեւ օւղիմութեան բացառիկ նշաններ կը յայտնարծէ:*

● *Շրջան մը կը յաճախէ նաեւ Սահակ Սէրայտարեանի մասնաւոր վարժարանը:*

1895-1899

*Կը կատարէ բանաստեղծութեան անդրանիկ փորձերը:*

1899

*Մօտիկ պարագաներու տղոց հետ կը զրկուի Մարդուանի միսիոնարական «Անաթոլիան» գոլէ՛նը: Իրրեւ անչափահաս կը գրուի առանձին յարկարարփին մը, ուր մինչեւ 14 տարեկան հասակը կը վայելէ հսկողութիւնն ու հողածութիւնը ամերկուհի Միսիս Ռիբսի: Գոլէ՛նին մէջ անցուցած հինգ տարիներուն ընթացքին միշտ առաջինը կը հան-*

դիսանայ լիզուի դաօերուն մէջ ու պարապոյ ժամերուն մեծ մասը կը յատկացնէ ընթերցումներու:

● Կը մասնակցի զօլէնի Գրական միութեան աշխատանքներուն:

● Գրական միութեան բեմադրած Վոլթերի «Ալլիբի կամ ամերիկացիները» թատերադրան մէջ կը խաղայ գլխաւոր հերոսուհին՝ Ալլիբի դերը:

● Կը շարունակէ բանաստեղծական փորձերը, որոնց մէկ մասը կը հրատարակէ աշակերտական «Սոխակ» խմբարտօպ թերթին մէջ:

1901

Գոլէնի նախապատրաստական շրջանը հաջիւ աւարտած՝ արձակուրդով կու գայ Սվլագ եւ այլեւս չի վերադառնար Մարզուան:

● Հօրը հրուէրին ընդառաջելով՝ կը պատաստուի մեկնել Գոլիս:

● Կը գրէ «Մուփին տակ», «Արեւագայ», «Մարմնի վերք, սրտի վերք» եւ «Նրգ» բանաստեղծութիւնները:

● Մինչեւ մեկնումը, աւելի քան տարի մը՝ կ'աշխատի եղբորը՝ Մարդիսի եւ Հօրեղբոր տղուն՝ Վարդանի վաճառատունը իրրեւ հսկել: Միւս կողմէ՝ Քափ կու տայ ինքնաշխատութեան, կը կարգայ Հայերէն օրաթերթերն ու հանդէսները եւ անգլիացի հեղինակներէ որչա՛ գործեր:



Մեծտաւրեան ընտանիքին խմբանկարը, Միսակ Մեծարեանց՝ երրորդ կարգ, ռուի՛ չորրորդը



Մեծարեանց՝ փոքր տարիքին

Անաստիկ պատանի մը, որ իր արփեղանց էութեան խռովմամբ ու ըզձամբները կ'երգէրուն մը տաղերու մէջ. եւ այդ տաղերը մեծ մասամբ գեղեցիկ ու դիւքիչ են, ազնուագոյն շղարշներու Յրբիմ ու հրաշարւետու երեսումքն ունին. անոնց սակեհու՛ յամախ մարգարտայեռ տողերուն անձկայից հոգիի մը անդրանիկ ջուկերը կը խուսին, կը վառվահին՝ գործըստ ազանանդի մը երեսակներուն պէս. այնքան պայծառութեամբ կը շողան, որ ինծի կը թուի, թէ գարնան ազուր անտու մը՝ արեւին գարբնումին հանդիսատես կ'ըլլամ:

Ծագող արշալոյսը ինքնին շատ կը նմանի օծտաւրեանա-

տեղծի մը առաջին յայտնու-  
 րեան: Օժտեալ կ'ըսէ՛, որովհե-  
 տև աճէ՛ն նոր յայտնուող բա-  
 նաստեղծ յուստու: շրջաբ ինչ-  
 պէս այս պատահին, ոչ ալ այս-  
 պէս մտածանա արեւի մը աւե-  
 տիսը կը բերէ: և արշայտյանը  
 կան, որոնք՝ հազիւ բացուած՝  
 արդէն իսկ մարմնուս վերջա-  
 յայտնիտ ստգտեք կու տան  
 մեր հագոյն: Բայց գոյնիտ,  
 լոյսերու, բոցի ու մշուշի այն  
 հրաշայի փոքրիկը, որ կենա-  
 րար արեւին ծնունդը կը պատ-  
 րաստէ՝ հարգատ պատկերն  
 իսկ է այս նորահաս բանաստեղ-  
 ծին էսքրեան (սժիածանս - 1907,  
 յառաջարկ):

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



Արամ Անտոնեան


1902

Կը յայտնուի նշանները Թոքախտին, որ  
 իր սրտին բոյն գրած էր Թուրք մտախաճառներու  
 ստահակներուն կողմէ իր վրայ կատարած խոշ-  
 տանգուածի մը հետեւանքով: Կը յանձնուի սոցթ-  
 Յարութիւն Երրինեանի խնամքին և անոր խոր-  
 հուրգով աւագ եղբայրը գինք կը տեղաւորէ Սվա-  
 գի Ս. Յակոբ Վանքը, ուր կ'անցընէ քանի մը ամիս  
 և աշնան, գրեթէ բուժուած, կը մեկնի Պոլիս, հօ-  
 րը քով, որ կը բնակէր Ղալաթիոյ Տէլիբաճէն խանի  
 մէկ սենեակը: Պոլիս մեկնելէն առաջ կը գրէ եօթը  
 բանաստեղծութիւն, իսկ Պոլսոյ մէջ՝ երեք:

● Մանկութեան ընկերը՝ Վահան Արաւան-  
 եան, իր բանաստեղծութիւններէն փունջ մը  
 կը զրկէ «Մասիս» շաբաթաթերթին, որուն այն  
 օրերու խմբագիրը՝ Տիգրան Արփիարեան, «Գրա-  
 կան ծիւրախտ» խորագրուած յօդուածով մը կը  
 կշտամբէ Միտոքը՝ բանաստեղծելու և սպազըր-  
 ւելու հիւանդութեամբ վարակուած ըլլալուն հա-  
 մար:

● Դպրոցական տարեմուտին՝ կը յաճախէ  
 Ղալաթիոյ Կեդրոնական վարժարանը:

● Պոլսոյ մէջ իր սպրած առաջին ամիսնե-  
 րուն ընթացքին, դպրոցական ու գրական պա-  
 րապտուներէն զատ՝ կ'օգնէ հօրը, գնումներ  
 կ'ընէ, կերակուր կ'եփէ, ամանները կը լուայ,  
 և այլն:



Մեծաբնոց՝ Կեդրոնականի իր դասընկերնե-  
 րուն հետ, ձախէն աջ, ուսի՝ երրորդը



1903

*Մինչև Փետրուար 15 կը գրէ ինը բանաստեղծութիւններ:*

● «Մասիս» խմբագրութիւնը կը յայտարարէ բանաստեղծական մրցում մը՝ «Բաժնուած արտեր» վերնագիրով:

● Փետրուարի կեսն էտք, «Բարախումներ» անունին տակ կը կազմէ բանաստեղծութիւններու իր առաջին ժողովածուն ու կը յանձնէ Կեդրոնականի իր Հայերէնի ուսուցիչներէն Հրանա Ասատուրին:


● Ուրիշ քառասուն թեկնածուներու հետ կը մտնակցի «Մասիս» շարաթաթերթի բացած գրական մրցումին: Ետանգամ դատակազմը՝ Մկրտիչ Աճեմեան, Թովմաս Թէրզեան եւ Աղեքսանդր Փանոսեան, առաջին չորս մրցանակները կը շնորհէ Գարբիէլ Խանճեանին, Հայկանոյ Մառքէն, Արմէն Չրաքեանին եւ Մերուժան Պարսամեանին, իսկ հինգերորդ մրցանակը՝ Միտք Մեծարենցին, ձգելով նաեւ դնահատական արձանագրութիւն մը՝ Մկրտիչ Աճեմեանի կողմէ կազմուած 17 Մայիս 1903 թուակիր տեղեկագրին մէջ:

● «Հանրագիտակ» Հանդէսի 10 Մարտ 1903 թուակիր Համարին մէջ լոյս կը տեսնէ տպագիր իր առաջին բանաստեղծութիւնը՝ «Փունջեր», Մ. Մեծատուրեան ստորագրութեամբ:

● Միջայէլ Եամատանեանի «Ծաղիկ» Հանդէսին մէջ լոյս կ'ընծայէ «Թրքումներ» եւ «Դեղին վարդեր» բանաստեղծութիւնները՝ Սիրանայ Պերպերեան ծածկանունով:

● «Հանրագիտակ» եւ «Մասիս» մէջ յաջորդաբար լոյս կ'ընծայէ չորս եւ երեք բանաստեղծութիւններ:

● Կը գրէ «Աշնան ծով» բանաստեղծութիւնը, իսկ Յուլիսի սկիզբը Պետրոս Դուրեանի շիրիմին տուած այցելութեան մը առիթով՝ «Պետրոս Դուրեան»ը:



Ծ. Տէր Անդրեասեան

Համակ գգայնիկ, աղուր պարուրուած, նախարախուած բացատրութիւններ՝ Մեծարենցի տաղերը համայնքի մը բարձուքիւն ունին եւ նարդոսի բոյ մը, որ կը զոյտէ: ... Այնքը գոց կը տեսնէ, եին տեսնողներուն պէ: Կը մղուի իրն նման գգալու, այնմա՛ն անուշ կը գգայ, կը բովէ ինչ մը լեզուովը, յամգովը, բայց ամէնէն աւելի գգացումովը: ... Իր տաղերուն մէջ այնքան գեղցիկ արտեստ մը կայ յեզուի տեսակէտով, որ նուազ ներդասիտները նրբամոյ մը պիտի ենթադրեն գայն: Բայց երբե՛ւ անք լեզուն ալ տրուեստակեալ չէ, ինչպէս գգացումը («Մանգումէ» էջքեր», 18, 19 Մայիս 1907):

Ծ. Տ. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Եւ մ'աւանդ Վարդապետ յա-  
 ճաւմներ> ի՛նչ տեսակ բան է  
 արդեօք այդ կապոյտ յաճումը-  
 կրնա՞ն նկարագրել: Կրնո՞յ  
 նշյն ինքն նկարագրել ամբո հե-  
 ղինակը: Անիմաստ սեւպոյիստի  
 մը նմանողական գայրումներն  
 են մէկ էանի բանաստեղծներու  
 փորձած այս մտար կապկու-  
 թիւնները, որոնցմէ ազէկ կ'ընեն  
 զգուշանալով Յորտանները,  
 որովհետեւ ի՛նչ անունով որ ալ  
 ներկայացուին անոնք մեր գրա-  
 կանութեան, զազափարական  
 սեւպոյիստի մը արշախն մէջ,—  
 այն սեւպոյիստի՞ գոր մասնաւո-  
 ղապէտ փրանացի եւ պիմնիֆա-  
 ցի բանաստեղծներ կը մշակեն,  
 ոչ ինչ համաձայն իրենց հիմ-  
 նած դպրոցին,— ծիծաղիլի  
 կապկուրիւններ կը մնան մե-  
 րիններուն յառական սեւպոյիս-  
 տի այլանդակութիւնները, զորս  
 յաճախ շարաշար ծայրայեղու-  
 թիւններու կը մզեն («Մարտ», Թ  
 Յունիս 1907, թիւ 28-29):

ԽՍՐ. ԱՆՆ

«Մահանալը աւմբի մը պէս  
 պայթեցաւ: Այդ վտիտ հաստը  
 Պոլսոյ գրականութիւնը դզր-  
 րդեց: Ետտեղ տեսան հորիզոնին  
 վրայ երեւցող աստղը: Թերթերը  
 յօգուածներով, նայնիսի յըմ-  
 րագրականներով լցուցեցան՝  
 զրուատելու համար ծնող տա-  
 զանը: Ու, ո՞վ տարօրինակու-  
 թիւնը բախտին, Բիւզանդ Քէշ-  
 եան «Բիւզանդիոն»-ի մէջ, եւ  
 երուանդ Տէր Անդրէասեան  
 «Մանգուսէի էֆէնտեր»-ի մէջ  
 առաջնորդող յօդուածներ նուի-  
 րեցին «Մահանալ»-ին («Նայրե-  
 նիք» ամսագիր, 1923, թիւ 10):

Յ. Ճ. ՄԻՐՈՒՆԻ

● Աշնան՝ մայրը Գոլիտ կ'երթայ եւ Ղալա-  
 Քիայէն ընտանեօք կը փոխադրուին Սկիւտար:

1904

«Մասիս»-ի մէջ լոյս կ'ընծայէ 13 բանաստեղ-  
 ծութիւններ եւ կը գրէ երկու ուրիշներ:

● «Մազիկ»-ի մէջ տպագրութեան կը յանձնէ  
 «Գիրկընդիտանու» եւ «Սիրոյ թափառում»-  
 ներ» բանաստեղծութիւնները՝ զորածէնով այս  
 անգամ Եւուսապ Միաման ծածկանունը:

● Սկիւտարէն կը փոխադրուին Ենի Գափու  
 Թաղը՝ ծովաւայեաց տուն մը:

1905

«Բիւզանդիոն»-ի մէջ լոյս կ'ընծայէ «Յայգա-  
 նուագ» արձակ ստեղծագործութիւնը, իսկ «Մա-  
 սիս»-ի մէջ՝ 19 կտոր,— բանաստեղծութիւն, ար-  
 ձակ, Թարգմանութիւն, ըննադատութիւն:

*Անցալիք*  
 Գրքի մասին հարց տրուելու  
 էջ ուսուցչու ընդ ինքեւ,  
 Խոսք տուելու ընդ ինքեւ շատ  
 Եւ ինքեւ ինքեւ սեփական պատմութիւն,  
 Մեկտեղ եղանակ տրուելու պէտք:  
 Մեկտեղ եղանակ տրուելու պէտք  
 Ինքեւ կարգին կարգ տրուելու.  
 Ան ըստի ինքեւ կարգի ինքեւ  
 Գրքի կարգ տրուելու պէտք ու  
 Ինքեւ կարգ տրուելու պէտք:  
 1905 թիւ 15

● «Մասիս»-ի մէջ լոյս տեսած «Երկու սիրեր-  
գ»-ին առիթով, առաջին անգամ ըլլալով կը դիմէ  
Միսաք Մեծարեանց ծածկանունին:

● 10 Յունուարին, «Մազիկ»-ի մէջ լոյս ըն-  
ծալով «Թրքահայ գրականութիւնը 1904ին» ա-  
նուն իր յօդուածին մէջ, Յովհաննէս Գազանճեան  
կը դրուատէ Շաւասայ Միսածանի բանաստեղծու-  
թիւնները:

● Կը նախաձեռնէ Կեդրոնական վարժարա-  
նի Գ դասարանի «Բահ-հահ» աշակերտական եր-  
գիծաթերթի հրատարակութեան՝ զստնալով անոր  
խմբագիրը: Լոյս կ'ընծայէ հինգ թիւ:

● Փետրուարի վերջաւորութեան, հիւան-  
դութեան հետեւանքով կը հեռանայ Կեդրոնակա-  
նէն, Գ դասարանը լաւարտած:

● Ամառնամուտին հիւանդութիւնը կը  
սաստկանայ եւ բժիշկներու խորհուրդով ընտա-  
նիքին հետ կը փոխադրուի Թոփ Գափու:

● «Բիւզանդիոսն» օրաթերթի Օգոստոս 2  
թիւին մէջ լոյս ընծալով «Մեր արդի քանաստեղ-  
ծութիւնը» անուն իր յօդուածին մէջ, Ննովք Ար-  
մէն դրապէս կ'արտայայտուի Մեծարեանցի բա-  
նաստեղծութիւններուն մասին:

1906

Կը ձեռնարկէ առաջին հատորը կազմելու աշ-  
խատանքին.

● Մինչև Մայիսի վերջը «Մասիս»-ի մէջ լոյս  
կ'ընծայէ 5 բանաստեղծութիւններ:

● Մայիսի վերջաւորութեան կ'աւարտէ Հա-  
տորին կազմութիւնը, կը կ'ըջէ զայն «Ռսկի արի-  
շիմ տակ» ու կը յանձնէ գրաքննիչներուն:

● «Մասիս»-ի մէջ լոյս կ'ընծայէ 5 բանաս-  
տեղծութիւն եւս ու մէկ արձակ թարգմանութիւն,



Գեղամ Բարսեղեան

«Միսածան»-ի — հերթաւճե-  
րու իր առաջին ժողովածուին  
— երգին իր այս երկրորդ եր-  
կին մէջ կը յայտնուի աւելի կա-  
տարիլագործուած, իր գիծերուն  
ու հրապոյրներուն մէջ աւելի  
ժշուած: Իր տաղանդն ար-  
բունքի մասն կ'անձի մը հա-  
ստանութիւնն ունի, եւ ստոր  
համար քերես յարգումներն  
աւելի թանձր են իր նոր հերթը-  
ւածներուն մէջ, և իր յաջում-  
ներն աւելի կենսարարալի: Տախ  
շունչ մը, սարսուգին աւիւն մը  
կը կենդանացնեն զանոս, բա-  
զանգալի համերգութիւնն հե-  
շիշ ձայն մը կ'երկաթի, եւ կա-  
թագին հոգի մ'է, որ քնները կը  
բանայ: Թուեքը կը բանայ ըզ-  
ճագին եւ կ'ուզէ գրիկ ու ապ-  
րիլ բոյր գեղեցկութիւններն  
ու յոյր կնամէքը, որ կան  
քնութեան մէջ: ... Գառկեր-  
ներ, խորքաճշտական մնա-  
նութիւններ, յետոյ զիւանք, ու  
անակնկալներ, իրարու կը յա-  
շարեն, կը յառնեն հետզհետէ,  
իւրանցիւր տուէ, կը թշտան'  
ինչպէս գտնակներ, եւ հերթա-  
ւոր կը յարձնեն գունագեղ ու  
ճամբանցիկ («Բիւզանդիոսն», 1  
Գեղամեմբեր 1907):


ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ

... Միսաֆ Մեծարեանց լա՛հ բանաստեղծ մըն է, եւ առաջին հարուածով իսկ իր դէմքը կը շտկիւմըաի արդի ճարտարապետայ բանաստեղծներու պատկերաշարին մէջ: Եթէ այն միւսները այնքան շատ կը նմանին իրարու, Միսաֆ Մեծարեանցի լատգոյն արժանիքներէն մին է քիչ նմանիլ անոնց ու մեծաւ մասամբ չնմանիլ անոնց: ...: Անիկա նշմարիտ բանաստեղծ մըն է, խորին եւ մարդկային անկեղծութեամբ մը բարակում: Զգացումներ ունի, որոնց կենսային բնութիւնն այնքան տարաբնոյթիկ է, ունի առանձնաշնորհեալ զգացողութիւն մը, որուն զանազանակ հարստութիւնը չէ կարելի ուրանալ (*«Արեւելեան ժամուշ», 1907, քիւ 20*):

ԱՐՏԱՇԷՍ ԵՍԱՌՈՒԹԻՒՆԵԱՆ



Արտաշես Եսապտիւնեան



Իսփ Գափուի այն տունը, ուր բնակեցաւ Մեծարեանց 1906-1907ին

*Իսկ «Սարեանդակ»-ի մէջ մէկ բանաստեղծութիւն, մէկ Թարգմանութիւն եւ արձակ չորս ստեղծագործութիւն:*

1907

*Մինչեւ Մայիսի կէտը կը դրէ երկու բանաստեղծութիւն, «Անտիպ բանաստեղծ մը» գերլուծական յօդուածը, կը կատարէ Թարգմանութիւն մը եւ «Մասիս»-ի մէջ յոյս կ'ընծայէ երեք շերթուած:*

● *Մարտ ամսոյն սկիզբները, «Արեւել»-» օրաթերթի «Օրուան նշմարներ» սիւնակին տակ, Գամբեր ծածկանունով՝ Տիգրան Արփիարեան ընթերցողին կը հաղորդէ տպագրութեան յանձնըւած ըլլալու «Միաժամ»-ի պարագան:*

● *Մայիսի կէտերուն՝ Արամ Անտոնեանի յառաջարանով յոյս կը տեսնէ «Միաժամ»-ը, որ կը մէկտեղէ 1903-1906ին գրուած 38 շերթուած:*

● «Մանգուսիէ Էփֆեար» օրաթերթի Մայիսի 18 եւ 19 թիւերուն մէջ լոյս կը տեսնէ Երուանդ Տէր Անգրեասեանի «Միսսիս Մեծարեանցի «Միսսիս» յօդուածը:

● «Մասիս» Յունիս 9ի թիւին մէջ լոյս կը տեսնէ «Միսսիս» Նուրուսի Տիգրան Չօկիւրեանի գրախօսականը՝ Ենոպէ Արմէնի ծանօթագրութեամբ:

● «Արեւիկ»-ի, «Մանգուսիէ Էփֆեար»-ի, «Արեւիկ»-ի մամուլի եւ «Փունջ»-ի մէջ յաջորդաբար լոյս կը տեսնեն Մեծարեանցի եւ իր «Միսսիս»-ի մասին գրուած Էգուարդ Գոյանեանի, Գեորգի, Արտաշէս Յարութիւնեանի, Յակոբ Տէր Յակոբեանի, Յովհաննէս Գաղանեանի եւ Վահան Լարիանի յօդուածները:

● Մինչեւ Նոյեմբերի կէսը՝ «Մազիկ»-ի, «Արեւիկ»-ի մամուլի եւ «Մանգուսիէ Էփֆեար»-ի մէջ լոյս կ'ընծայէ երեք թարգմանութիւն, երեք բանաստեղծութիւն եւ քննադատական մէկ յօդուած՝ «Բնագիտութիւն»:

● Յունիսի վերջին օրերէն սկսեալ՝ Արտաշէս Յարութիւնեանի, Օֆէլիա Ներկարարեան-Գասպարեանի ու Վարդան Քահանայ Արշալանեանի կը հարողէ «Նոր տաղեր» հատորին պատրաստութեան հանգամանքները:

● Ընթանիչին հետ կը փոխադրուի Մամուլի Քաղը, երկարականի եւ ծովահայեաց տուն մը:

● Նոյեմբերի կէսերուն՝ լոյս կը տեսնէ «Նոր տաղեր»:

● Նոյեմբեր 17 թուակիր «Մասիս» մէջ, Ենոպէ Արմէն կը հրատարակէ «Գրական նոր հասանքի փորձ մը» յօդուածը, ուր կը յարձակի Մեծարեանցի եւ իր «Նոր տաղեր»-ուն վրայ:

● «Բիւզանդիստ»-ի, «Մանգուսիէ Էփֆեար»-ի եւ «Արեւիկ»-ի մամուլի մէջ լոյս կը

Ազնի բանաստեղծ, կ'ողջունեմ «Նոր տաղեր»-ը մէջ ճշմարիտ բանաստեղծ մը, որ գիտէ զգալ եւ զգացունելի բացարձակը, եւ որոյ մտնանք մը կըրցումք տեսնել վերջին բան տարուան անքիւ անհամար հայ քերթողներուն մէջ («Արեւիկ»-ի մամուլ, 1907, թիւ 51):

Յ. Գ. ՄԱՐԿԵԱՆ

Միսսիս Մեծարեանցի իր բանաստեղծ իր անդրանիկ հաստորով օրուան նորութիւնն եղաւ մեր գրական աշխարհին մէջ: Բանաստեղծութիւնն իրենց աննշանորդ կարողութեան մը յաւակնորդներ շատ զարմացած ըլլալու են համեստ պատասխանի մէջ ոտուամով պատճառեանք յարձրութիւններ, վերջնականներ տեսնելու: Ունի հարուստ, հիւսն եւ գունագեղ հայերէն մը, որ մեծ մասամբ իր շնորհք կ'առնէ անտառներէն, պարտէզներէն, ծաղիկներէն, միրգերէն ու կանաչներէն, որոնց դրացնութենէն շատ կ'ախարժի, խոնկաբար հեռի մնալով բարոյ ինչիւրեքէն: Թտուած է զգայուն, չափազանց զգայուն արմատաբար հեռի մնալով ինքն իսկ կամ իր միտքը հարուստով իր զգայնութեանց մէջ, նոյնապէսով անոնց հետ, անհարմարանալով («Բիւզանդիստ», 2 Յունուար 1908):

ԲԻՒԶԱՆԴԻ ԳԵՂԵԱՆ

Նպաստները չէին բարձր, վերջերս նոր մըն այսպիսի քիւրիք վրայ այս երբանիկ մահակամացուներուն, թուին տակ Մեծաբնեցի, Առիթունով ներսերը շակ գրականութիւնը մշակելու բանդագուշակին. աճալը պըն. վտերամ Քարալի մը: Իրերգովակամ իրենց ուխտին մըշա հաւատարիմ, զայն առաջ քըշեր են այս անգամ, պաշտպանելու համար իրենց Հաւատքին Հանգանակը, նոր բանաստեղծութիւնը, շատ մը պարտաներով — առանց ատանց շլլա՛ր արդէն — հինին դէմ, եւ շա՛տ մըն տլ — աղ տլ պայման է — քեռտամամ խոնարհութիւններով, երկիւզած պաշտամաններով, խաչակնաւմներով, ինկարկու՛մներով և ներքոյներով՝ քաղցին առջեւ նոր արւեստի էութիւն, ինկելի շատուածիս — չէ՛հ կուտեր ինքնութիւնը — Պառնտի երեքարճակ ներշնչեալ նորարարաւ քերթաշունչ պատգամախօսը՝ պանծալին աւ մեծն Մեծարեմցին: Առե՛նով իր «Պարտանքը Վասիտի» Մատենադարան» ընենելու եւ «Վասիտի» մէջ իրմէ քերթուածներ հրատարակած ըլլալու պարագայի մը առջեւ, հակառակութեան վերագրում մը վանելու համար՝ կանխեմք շտեյլու թէ՛ Մեծարեմցը այսօր չենք մանկար գեղեցիկ խոստումներով «Վարտան» հեղինակը՝ որ «Նոր տաղերը» փոխած է («Վասիտ», 1 Մարտ 1908, թիւ 14-15):

Երևի վ. ԱՄԵՆ

տեսնեն ճոր տաղեր» ու մասին գրուած Գեղամ Բարսեղեանի, Գառնիկ Թողանեանի, Յակոբ Տէր Յակոբեանի եւ Յարութիւն Մըմըրեանի յօդուածներն ու նամակները:

● «Վասիտ» Դեկտեմբեր 8 թիւին մէջ լոյս կը տեսնէ Ենոյզ Արմէնի յարձակողական մէկ նոր յօդուածը՝ «Գրական Օլիգ... Մեծ հաճեարեներու»:

● «Արեւելեան մամուլի» մէջ լոյս կ'ընծայէ «Հոգեհանգիստ» բանաստեղծութիւնը:

● կը ծանրանայ առողջական վիճակը:

1908

Կը գրէ «Աղեղ եւ կապար» յօդուածը:

● Ժամանակակից մամուլին մէջ լոյս կ'ընծայէ 13 բանաստեղծութիւն եւ քննադատական ու վերլուծական երեք յօդուածներ:

● «Բիզանդիոն» 2 Յունուար թիւին մէջ լոյս կը տեսնէ Բիզանդ Քէլեանի «Տարւոյն գրականութիւնը» խորագրուած յօդուածը, որ կ'ընտառուի Մեծարեմցի բանաստեղծութիւնները:

● «Արեւելեան մամուլի» Յունուար 9 թիւին մէջ Յովհաննէս Գաղանեան կը հրատարակէ «Թուրքահայ գրականութիւնը 1907ին» աշուշ իր տարեկան տեսութիւնը, որ զնաւատութեան կ'ենթարկուին նաեւ Մեծարեմցի հատորները:

● «Լոյս» թերթին մէջ լոյս կ'ընծայէ «Սէն-պոլիզմը» աշուշ երգիծական բանաստեղծութիւնը, Հրաչեայ ծածկանունով:

● «Վասիտ» Փետրուար 11 թիւին մէջ կը տպագրուի Փայլակի «Սեպտիզմ» ոտանաւորը՝ իբրեւ պատասխան Մեծարեմցի «Սէնպոլիզմ» շափածոյին:

● «Մասիս»ի Մարտ 1 Համարին մէջ կը տպագրուի Ենոպէ Արմէնի «Փայտօթէնները» յօդուածը, ուր կրկին եւ աւելի սանձարձակ յարձակումներ կը գործուին Մեծարեանցի դէմ:

● «Արեւելք»ի Մարտ 11 Թիւին մէջ լոյս կը տեսնէ «Նոր տաղեր»ուն մասին գրած Փայլակի գրախօսականը:

● «Բիւզանդիոն»ի Մարտ 13ի Թիւին մէջ լոյս կը տեսնէ իր «Յետամնաց բարեկեան» խորագրուած յօդուածը՝ ուղղուած Փայլակի գրախօսականին դէմ:

● «Արեւելեան մամուլ»ի Մարտ 25 Թիւին մէջ կը տպագրուի Արզամի «Պոլսեցիի մը խօսքերը» թղթակցութիւնը, ուր կը դատապարտուի Մեծարեանցի դէմ շղթայազերծուած ճետու պայքարը:

● «Արեւելեան մամուլ»ի Ապրիլ 15 Թիւին մէջ կը տպագրուի Ենոպէ Արմէնի «Ճշմարտութեան վարագոյրը» անուն յօդուածը, որ կը պատասխանէ Արզամի ու կը մեղադրէ Մեծարեանցը:

● Ամառնամուտին՝ առողջական փինակը կը ծանրանայ եւ ծնողները Հալէի կղզիին մէջ կը վարձեն իրեն սենեակ մը՝ օդափոփութեան համար:

● «Մասիս»ի Մայիս 30ի Համարին մէջ կը տպագրուի Փայլակի «Կանխահաս Ջատիկ մը» յօդուածը՝ ուղղուած Մեծարեանցի «Յետամնաց բարեկեան» յօդուածին դէմ:

Հիւանդութիւնը չափազանց կը ծանրանայ:

● Յունիս 21ի դիւշերը կը մեռնի:

● Յաջորդ օրը, Երկուշաբթի, մարմինը կը փոխադրեն Սամաթիա:



Վարդան Բենյ. Արսլանեան

Ստացանք իրիտասարդ բանաստեղծ Միսաք Մեծարեանցի «Նոր տաղեր»ը, շքեղ հաւաքածայ մը անտիպ բանաստեղծութիւններու: Անոնք, որ արդէն ասկից առաջ կարդացած էին «Միսաճան»ը, վայելած են այն փափուկ եւ զմայլելի արուեստը, որով Մեծարեանց այսօր պատուարեր տեղ մը գրուած է մեր նոր գրականութեան մէջ: Երիտասարդ հեքթաղին այս նոր գործն ալ արժանի է ամէն քաջալերութեան եւ յանձնարարելի ամէն անոնց, որոնք գրական նշմարիտ վայելքներ կը փնտռեն («Մարտի», 1908, Թիւ 27):

«ՄԱՂԻԿ»

Մեկնելու պատրաստ, երկտող մը կը ձգեմ իր հասցէին՝ «Գիրկ մը զուրգուրտ»ը. ինչ մը խանդաղատանք նաւագայթ գաւիթը, խուրձ մը ծպի՛ւ, ա՛մոյ մը անմբու պիճաւո՛ր «Միսման»ը:

Բայց ահա Մեծարեանցն է, որ կուգայ: Օն, իր Թիւնը վեր՝ Վարդա-



Տիգրան Գառապեան

մին չես, չոյր համբոյրներ ծծելու համար Միտաբէն:

Վայելու՛մ որ մըն ալ:

Կը խօսի՜նք Վիճաճանձին զբախտականներուն վրայ: Հազիւ մերթ կը հրնու՛ի Մեծարե՛նց՝ զնա-հատականներէ՛ր: Իրտա ու արդարազատ վճիռներու կ'անձկայ մա-նաւանդ: Սիպիլին բերանաջի գնահատականը, թէ սիրանայ է Վիճաճանձը, թէ բան մը կ'ուզէ գրել վրան», մասնաւոր Հանդիպո՞ղ կը լսէ Շաւառայ, իրրեւ հեղինակաւոր բանաստեղծուհի մը զիտակից գնահատու՛մը:

Նոր ծագիկներ կը վայելնէք իր-մէ, եւ սի՛նչ արքեպիսթամբ» (եիր կիսմեքէ, Թորոս Ազատեան, էջ 30-31):

ՏԻԳՐԱՆ ԳԱՍԱԳԵԱՆ

Վերջն շաւր միտքը եւ շէնգ-ւոցը կ'արտատեմէ Շախպագ-եան վարդապետ ու կարգը կու գայ քափօրին: Ո՛չ ծոպ է ոչ ալ կիբան կ'ըլլայ, բայց այդ ձեւա-պաշտութեանն աւելի բան մը կ'ընեն տարարայտ բանաս-տեղծին տարկից բարեկամնե-րը Գեղամ Բարսեղեան, Շա-ւարշ Միտաբեան, Յակոբ Յէր Յակոբեան, Արամ Անտանեան եւ Ծնովի Շահէն, իրենց ուսերուն

● Երեքշաբթի, Յունիս 24ին, Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ կը կատարուի յուզարկաւորութեան արարողութիւնը, որուն ներկայ կ'ըլլան վարդապետներ, քահանայներ եւ ծանօթ գէմքեր, — Մկրտիչ Աճէմեան, Աղեքսանդր Փանոսեան, Հը-բանտ Նազարեան, Օննիկ Զիֆթէ Սարաֆ, Յ. Հինգլեան, Տիգրան Զօհիրեան, Ենոպէ Շահէն, Կեղորնական վարժարանէն Ա. Կամսարական, Հ. Համբարձումեան եւ աշակերտներ:

● Եկեղեցւոյ մէջ զամբանականը կը խօսի բանաստեղծին ազգականներէն Գէորգ վարդապետ Արշալանեան:

● Իր 21 Յունիս 1908 համարով հազորգած Միտաք Մեծարե՛նցի մահուան բօթին հետ, Արամ Անտոնեանի «ԼՈՂԱՆ»ը կը հրատարակէ բանաստեղծին մէկ մեծկակ նկարը: Թիկնաթուրի մը վրայ, ձեռքին՝ Թերթ մը, էջ 877:

● «Արեւիքեան մամուլ» շաբաթաթերթի 8 Յուլիս թուակիր համարին մէջ, Մեծարե՛նցի մահուան առիթով Արտաշէս Յարութիւնեան կը ստորագրէ «Առուպ մը» խորագրուած երեք էջնոց յօդուած մը (էջ 648-651):

1914

«Մուրթիմ տալ» եւ «Երգը» բանաստեղծու-թիւններուն հետ, իր խմբադրած «ԼՂԱՂԱՆ տարե-ցոյց»ին մէջ Մահակ-Մեքրոպ լոյս կ'ընծայէ Մե-ծարե՛նցի նկարներէն մէկը, եղբորորդւոյն հետ նկարուած (էջ 118):

1915

Ազգային եւ պետական բարձր պաշտօններ վարած Մեծարե՛նցի աւագ եղբայրը՝ փաստարան եւ օսմանեան խորհրդարանի երեսփոխան Գէորգ Մեծատուրեան, տարագրութեան օրերուն կը նա-հատակուի Կարնոյ մէջ:

● Իր միակ ջոյրը՝ Թագուհին, որ ամուսնա-ցած էր Վարդան քահանայ Արշալանեանի հետ, անհետ կը կորսուի 1915ի գաղթի ճամբաներուն վրայ:



1918

**Պոսթընի «Փիւնիկ» ամսագրի թիւ 6 Համարին մէջ, Յովհաննէս Աւագեան կը ստորագրէ «Միսաբ Մեծարեանց» խորագրուած եօթ լէնոց յօդուած մը, վեր Հանելով բանաստեղծին կարգ մը յատկանշական կողմերը (էջ 328-335):**

● **Պոսթընի «Փիւնիկ» ամսագրի թիւ 11ին մէջ, Նդիա Երուանդ Մելիքեան կը ստորագրէ «Դուրեան եւ Մեծարեանց» խորագրուած ութ էջ-նոց յօդուած մը, բազմատկան տուեալներու հիմամբ վեր առնելով եղբարբախտ երկու բանաստեղծներու էական գիծերը (էջ 665-672):**

1922

**«Միսաբ Մեծարեանց» անունին տակ, Քորոս Ազատեան Պոլսոյ մէջ կը կազմէ եւ լոյս կ'ընծայէ բանաստեղծին կենսագրականը, պատկերազարդ, 80 էջ:**

● **Պոլսոյ մէջ, Խորհրդային Հայաստանի պատուիրակներէն Արտուշէս Կարինեան Յակոբ Օշականին կ'առաջարկէ վերուծել Մեծարեանցի գրականութիւնը՝ Հայաստանի մէջ պատրաստուող մեծարեանցեան Հատորի մը Համար:**

1924

**Յ. Օշական Ամերիկայի «Կոչնակ»-ին կը դրկէ Մեծարեանցի մասին պատրաստած իր ուսումնասիրութիւնը, բայց շարաթաթերթը կը մերժէ լոյս ընծայել խնդրոյ առարկայ գրութիւնը:**

1933

**Երեւանի մէջ լոյս կը տեսնէ Վահան Թոթովեանցի գրութեան «Կենսագրութեան» վեցերորդ հիմն հրատարական ճանապարհի վրայ», ուր տեղ գտած մեծարեանցեան ողակոչումին Համար շեքիբրդային Հայաստանի խմբագրութիւնը խտտորէն կը կշատմէր գրագէտը:**

● **Պէլյուքի մէջ Վ. Կաթակ լոյս կ'ընծայէ իր «Ներքաբախտ փրքոյններ» անուն գրքոյնը:**

վրայ կրելով դազադը մինչեւ եկեղեցիին հրապարակը, մասնաւորապէս երկու երիտասարդ գրագետներ՝ Շ. Միսաեան եւ Գ. Բարսեղեան, որոնք երբեք մը պէ կ'ու լային:

Երբ եկեղեցւոյ շրջափակին մէջ դազադը վար կը դուրս, յաշորդարար դամբանակամներ կը կարդան եղ. Գոյանեան, որ Մեծարեանցը կը նկատէ *Կեանքի եւ արեւի երգիչ*՝ նշմարիտ բանաստեղծ մը: Եւսո՞ւ ինչպէս անանց կը կարդայ յուզիչ փրքուած մը՝ *«Տոյնի»* գրքուած՝ խորագրով, իսկ Կեչարեանցին նոյն տարւոյ ընթացաւարտներու կողմէ՝ Ա. Գրքեան:

Թափօրը իր համբան կը շարունակ գոյիներու յուզիչ երգեցողութեան հետ: մաս մը յազարկաւորներ կը հետեւին դազադին մինչեւ Պալլըրի գերագամատունը, ուր ծառի մը հովանին տակ Մեծատուրեանց դամբարանին մէջ կ'ամփոփեն բանաստեղծին մարմինը: Գոչ-ու հողակոյտին վրայ, ճնով Տանին, ոչքերգակ արուեստագետի իր շէտով ու արտայայտութեանը կը կարդայ հակիրճ դամբանական մը՝ բանաստեղծ Գր. Ծալեանի կողմէ գրուած (*Շիր Կեանքը*, էջ 63):

ԹՈՐՈՍ ԱԶՏԵԱՆ



Գեորգ վրդ. Ալպանեան



Ծնով Ծառեն

որուն 14 էջերը նուիրուած են Միսաք Մեծարեացի (էջ 23-36):

1934

Վահրամ Ալազանի եւ Վաղարշակ Նորենցի ստորագրած յառաջարանով ու կազմած ծանօթագրութիւններով՝ Երեւանի մէջ լոյս կը տեսնէ «Երկերի լիակատար ժողովածու»:

● «Ոսկի արիշին տակ» խորագրին ներքեւ, եւ 13 էջնոց մանրատառ յառաջարանով մը՝ Թորոս Ազատեան կը մէկտեղէ ու լոյս կ'ընծայէ Մեծարեացի արձակ երկերը, պատկերագրագ, 182 էջ:

1935

Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան 1500ամեակին առիթով, 23 Նոյեմբերին սարքուած փառատօնին, ուսմանացի դերասանուհի Լիլի Փօփոյիլ Պուքրէշի մէջ ուսմաներէնով կ'արտասանէ «Վայրի ծաղիկ» բանաստեղծութիւնը:

1936

Հայ մշակոյթը ուսմանացիներուն ծանօթացրեցելու համար՝ 1935ին Պուքրէշի մէջ կը հիմնուի «Անի» պարբերականը, ուր Վահան Կէմիճեանի եւ Հայկ ու Արշաիր Աջօրեաններուն թարգմանութեամբ կը ներկայացուին Մեծարեացի ջերթուածներէն հինգը, — «Հիւզը», «Վայրի ծաղիկ», «Նաւակները», «Լիւսիւնները շուփիմ տակ» եւ «Սիրերգ» (1936, թիւ 2):



3— Մեծարեացի շիրիմը

1946

Գահրէի մէջ լոյս տեսած «Փառորդ դար գրականութիւն» անունի իր հատորին մէջ՝ Գուրգէն Միթարեան կարճ գրութեամբ մը կ'ընդգծէ Միսաք Մեծարեացի արուեստին էական գիծերը (էջ 242-247):

1954

«Գլխուքի շեփան» Հրատարակչութիւնը Հատորով մը լոյս կ'ընծայէ «Միաժամ», «Եւր տա-  
զեր» եւ «Քերթուածներ» անուաներու ն տակ  
ծանօթ գործերը, 140 էջ:

1956

Երեւանի մէջ կը վերահրատարկուի Վահրամ  
Ալազանի եւ Վաղարշակ Նորինցի կազմած «Նը-  
կերթի լիակատար ժողովածու»-ն, 387 էջ, տպա-  
քանակ՝ 20 հազար:

1958

Երեւանի մէջ լոյս կը տեսնէ Մեծարենցին  
նուիրուած Էդուարդ Զրբաշեանի մենագրու-  
թիւնը, 130 էջ, տպաքանակ՝ 3 հազար:

1959

Հ. Մեսրոպ Զանաշեանի խմբագրու թեամբ ու  
յառաջարանով՝ Վենետիկի Ս. Ղազար տպարանը,  
«Գլխուքի»-ի գործաձուլութեան համար», լոյս  
կ'ընծայէ «Միաժամ»-ն ու «Եւր տազեր»-ը, 111 էջ:

1963

Ծանօթ գրութիւններու կողքին, Մեծարենցի  
երեւանեան թէ՛ առաջին եւ թէ՛ յաջորդ Հրատարա-  
կութիւններուն մէջ տեղ գտած էին շարք մը ան-  
տիպ գրութիւններ, ի շարս որոնց բացառաբար  
Ենովջ Արմէնի գրական ըմբռնումները խնդրոյ  
առարկայ դարձուցած «Ազիզ եւ կապարն» յօդ-  
ւածը: Մեծարենցի մահէն յետուհին, իսկ խընդ-  
րոյ առարկայ գրութեան առաջին տպագրութենէն  
բառատուն տարի ետք, Ենովջ Արմէն Փարիզի  
«Աշխարհ» շաբաթաթերթին մէջ լոյս կ'ընծայէ  
«Լոյս գրակալն անցնիրու վրայ» անուն յօդուած  
մը, ուր Հին բառաձեւերով, ռճով ու ոգիով նոր  
յարմակում մը կը գործուի Մեծարենցի յիշատա-  
կին դէմ (7 Սեպտեմբեր 1963, թիւ 150):

● Հայրենի բանաստեղծներէն երեքը՝ Վա-  
ղարշակ Նորինց, Գուրգէն Մահարի եւ Վահագն  
Դաւթեան, ընդգրկելով իր Հին քնարանդութիւնը



Մեծարենց եւ իր եղբորդին

... Իր մանուկ սրտին գահար  
գգայութիւնները գահար տողե-  
րու մէջ ծրարելէ յետոյ ամ  
սկսած էր նաեւ մեզի տալ հա-  
մայնական եւ համամարդկային  
երգեր, որոնց մէջ գեղեցիկիմ  
հետ կը խօսէր վեմեր, աստու-  
ծայինը: Թիթեռնիքը ծրաշալի  
կերպարամտփոխութիւնով մը  
երեւոյթով մը եղած էր եւ իր ծրկ-  
նային այլութեանը քաղցրու-  
թիւնը կը զնուր մեր հոգիներ-  
րում մէջ: Կարգացէ՛ իր «Լյա-  
թ»-ներու շարքը եւ տեսէ՛, թէ իմ  
շնորհ, ինչ քաղցրութիւն, ինչ  
բարութիւն, ինչ ազնուակամու-  
թիւն կրցեր է դնել ամենց մէջ  
պատանի հեղինակը: Այդ երգե-  
րով Մեծարենց շուրս կ'ըլլէ իր  
մանկութեան այրտուն ու... կ'ըլ-  
լայ համայնամուրէր հոգի մը եւ  
կը երաշակերտ անմահ տա-  
զեր, որոնց մէջ իմք երեւան իւր  
գայ իրբի Բարձր մը ամենամա-  
հար եւ ամենազմեղ մերձու-  
մերու («Քուրդի», 1918, Ա. տա-  
րի, թիւ 11, էջ 611):

ԵՂԱՍ ԵՐՈՒԱՆՆԻ ՄԵՆԻՔԵՆԸ



Յակոբ Օշական

Արուաշու Կարինեան, մէկը Տէրեանի հիացողներէն, 1922ին, Պոլիս ինձի աւարարկեց Մեծարեանը վերստին: Խորունկ էր իմ համայնը ո՛չ անոր համար, որ վերբապա թանաստեղծութեան իրու գգայարամէ մը կը հաստատելի երկաթերգակ ու առտիւտերգակ սեղանդի մը մէջ, այլ Արեւմտեայ գրականութեան ամէնէն նրբին ապրումներուն իմաստը կը գտնար իմ ժողովուրդին, անոր հաւաքական գգայնութեանը յայտարար վկայութիւն մը... (Համապատգմութիւն, Ժ. Կատար, էջ 851):

8. ՕՇԱԿԱՆ

«Կոշեակ»-ին զրկած եմ Մեծարեանի վրայ ուսումնասիրութիւն մը: Մեծարեան, որովհետեւ թանաստեղծը անձեռք է եղեր խմբագրական մտքի մէջ: Մէկը միայն, Պր. Աւագեան, ամբողջ է գտնուելը պատուելիները համոզելու, որ Մեծարեան անուամբ հայ թանաստեղծ մը գոյութիւն ու արժէք ունի (Հեւմտակերտ, Պլյուս, 1983, էջ 44):

8. ՕՇԱԿԱՆ

կրկնող ենովը Արժէքի ելույթին դէմ, ի պաշտպանութիւն Մեծարեանի՝ Երեւանի «Գրական թերթ»-ին մէջ հանդէս կու դան բաց նամակով մը (1963, թիւ 41):

1967

Էջմիածնի պաշտօնաթերթ «Էջմիածին»-ի մէջ լոյս կը տեսնէ Մեծարեանի նուիրուած աւագ դասարան Պարզեւ Շահապեանի ութ էջնոց ուսումնասիրութիւնը՝ «Հայաստանեայց եկեղեցին եւ Միսաք Մեծարեանի գրական ժառանգութիւնը» (Էջմիածին, 1967, թիւ Է-Ը):

1968

Երեւանի մէջ Օննիկ Փանկեանի խմբագրութեամբ լոյս տեսած Արուաշու Յարութիւնեանի «Գիշերային ճամբորդը» Հատորին էջերուն տեղ տրուած են նաեւ նախատակ գրագէտին մեծարեանցեան գրութիւններուն՝ «Նար թանաստեղծ մը» (247-253) եւ «Ասուպ մը» (էջ 254-257):

1969

Երեւանի մէջ Կարպիս Սուրենեան լոյս կ'ընծայէ իր «Բնիկ որտեղացի էջ» խորագրուած դրական մէկ երկը, որուն Terra Incognita անունը վրային մէջ, զուգահեռ ունենալով ուսու նշանաւոր թանաստեղծ Սամուէլ Մարալը, ընդարձակ տեղ մը կը յատկացնէ Մեծարեանի «Միրերգ», «Ձմարան պարզ գիշեր», «Հիւրը» եւ «Տօ՛ւր ինձի, Տէ՛ր, որ խորութիւնն անանձնական» թանաստեղծութիւններուն: Հագորդուելով յիշեալ կտորներուն խորհուրդին՝ ուսու թանաստեղծը ինքզինք կը զգայ անձանօթ, այլ Հիասքանչ աշխարհի մը դիմաց՝ Terra Incognita:

1971

Երեւանի մէջ լոյս ընծայած իր «Պոեզիան պատմութեան քառուղիներում» Հատորին մէջ, Հրանտ Թադարեան հինգ էջ կը նուիրէ Հայ թանաստեղծութեան մէջ ունեցած Մեծարեանի դերին (109-113):

1974

Երևանի «Դպրոցական գրադարան» մատենաշարը «Երիկուան ձայներ» խորագրին տակ լոյս կ'ընծայէ Մ. Գ. Բերքերեանի պատրաստած մեծարեկցեան Հատորը, տպագրանակ՝ 30 Հազար:

Երևանի մէջ լոյս ընծայած էր «Երիտասարդ Չարենցը» անուն Հատորին մէջ, Հրանտ Թամբազեան լորս էջ կը նուիրէ Միսաք Մեծարեկցին (89-92):

1976

«Հայաստան» Հրատարակչութիւնը լոյս կ'ընծայէ Վահագն Դաւթեանի «Ջուզսիետ անապարի» անուն յողումաներու ժողովածուն, ուր տեղ կը գտնէ նաև նախապէս «Գրական քերթ»-ին (12 Յուլիս 1968) մէջ լոյս տեսած մեծարեկցեան գրութիւնը: «Տերեւի սուսփիւնից միւշիտ անուներ» (էջ 166-172):

1977

Երևանի Համալսարանի Հրատարակչութիւնը լոյս կ'ընծայէ Էդուարդ Զրբաշեանի «Միսաք Մեծարենց» անուն մենագրութեան երկրորդ եւ վերամշակուած տարբերակը, պատկերազարդ, 192 էջ, տպագրանակ՝ 10 Հազար:

Երևանի մէջ լոյս կը տեսնէ Ալմաստ Զարարեանի «XX դարի սկզբի հայոց բանաստեղծութիւնը» շարքին երկրորդ Հատորը, որուն 222 էջերը նուիրուած են Միսաք Մեծարեկցին՝ «Մ. Մեծարենցի բնարական նրբերանգային արուեստը» (էջ 179-301):

1980

Կլիկիկոյ Հայոց կաթողիկոսութիւնը լոյս կ'ընծայէ Յ. Օշականի «Համապատկեր» շարքին Թ. Հատորը, ուր տեղ կը գտնէ նաև նախօրոք «Հայրենիք» ամսագրին մէջ լոյս տեսած «Միսաք Մեծարենց» մենագրութիւնը (էջ 363-422):

Մեծարենց բանաստեղծը պիտի մնայ բոլոր անոց՝ որոնք կը սիրեն զգայնութեան նրբագոյն քորոսները: Կը սիրեն խորհուրդը: լեզուի քննչութիւնը: բնածին արուեստագետը՝ ճշկարչութեան ու երաժշտութեան ճանաչելովը հարուստ: Անոց՝ որոնք գիտեն կարիքներուն մէջ տեղեկքը տեսնել, վայրկեաններու մէջ ժամանակը զգալ եւ արցունքի մը մէջ մարդուն ոգրերգութիւնը՝ առանց ազազակի: Այսօր Մեծարենց կայ բոլոր նոր գրողներուն էջերէն ներս — բոլոր անոց մօտ, որ հոգեկան վիշտ մը ունին, սրտի տագնապ մը կ'ապրին, ճակատագրին հետ իստակցութեան մէջ են, իր ձեռքը, քննիչովը, զգայնութեան տեսակովը, եթէ ոչ իտարեանմբն ու հարստութեամբ («Պատորդ զար քրակառութիւն», էջ 246):

ԳՈՒՐԳԷՆ ՄԻՍԻՍԻԱՆՆԱ


Իր — ԹՅՅՅՅՅՅՅՅ, «Բ» — հայեացքը մա դարձում է ինտիկտուալիստ բանաստեղծ Միսաք Մեծարենցի նոյնը: «Երբ ըմբռնում եմ այս աշխարհում, մեծ պատանի, գրկում եմ ջու երգերը, եւ ահա արեւը, ցո նրգած արեւը, սուրբում է իմ ցուրտ հոգու մէջ, կաթիլ առ կաթիլ»:

Ինչպիսի խնայնութիւն, մեր արեւակառ մեծ օրերում աշխարհից պիտի փնտնել Մեծարենցի վախտ տագրի մէջ, ինչպիսի ծաղի կորիզային զրականութեան, մեր կորիզը-զային գրողի կոչման հասցէն («Երկրորդային Հայաստան», — Երևան — «Ազգայնագր», 30 Սեպտեմբեր 1934, Պոլիս):

«ԵՈՐԴՐՈՒՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

...Ծնովք Արմենը դեռ շարունակում է այն գրանավերքը, որ սկսուել է իր եւ շահագործող պատանուս միջեւ, արամից ուղիղ կէս դար եւ կէս տասնամեակ առաջ: Որպիսի՞ յամառութիւն, հետեւողականութիւն եւ... Էրմանիդդրութիւն: ...: Եթէ ծերունագարդը Ե. Արմենին այսօր, գրանավերքն անկի քան կէս դար յետոյ, ցաւ են պատճառում իր հասցէին ստուած Մեծարեւոյցի մի քանի խօսքերը, ապա հայ գրականութեան մշակմանը եւ այդ գրականութիւնը պատշտ ու սիրող բազմահազար ընթերցողներին աւելի մեծ ցաւ են պատճառում ու խորապէս վիրաւորում անվայելուչ այն դիրքն ու հայեոյական որակումները, որ Ե. Արմենը եւ իր թարեհամերը ունեցել են մեր գրականութեան ամենապայծառ ու մաքուր մի անհատականութեան՝ Միսաէ Մեծարեւոյցի անձի ու ստեղծագործութեան համարելով («Գրական թերթ», 1983, թիւ 42):

ՎԱՀԱՐՇԱԿ ԿՈՐԵՆՑ  
ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ  
ՎԱՀԱԳՆ ԳԱՆԹԵԱՆ



Հայաստանի թանգարանին մէջ Մեծարեւոյցի յատկացուած անկիւնադարանը

1980

Պէլյուսթի մէջ լոյս կը տեսնէ Գրիգոր Պլյուստինի «Տրամ» հատորը, ուր առկա կը գտնուէ նաեւ նախապէս «Բագրիմ» (1968, թիւ 10) մէջ երեւցած մեծարեւոյցեան վերլուծումին մէկ տարբերակը՝ «Մեծարեւոյցի համար», էջ 62-95:

1981

Հայաստանի Գիտական ակադեմիայի Հրատարակչութիւնը, Էդուարդ Զրբաշեանի խմբագրութեամբ՝ լոյս կ'ընծայէ ցարդ լոյս տեսած Մեծարեւոյցի երկերուն ամէնէն ամբողջական ժողովածուն, 456 էջ, տպագրանակ՝ 10 հազար:

● Արեւր Շարուրեանի պատրաստած ու ծանօթագրած եւ Էդուարդ Զրբաշեանի խմբագրութեամբ լոյս տեսած Մեծարեւոյցի երկերուն նոր հատորակին մէջ ներս առնուած են նախորդ երկու լիակատարներէն (1934 եւ 1956) դուրս մնացած բոլոր նշխարները՝ նամակաձևին, «Յուշապատկ» եւ «Տուայտմէ» ոտանոթները, «Յայցանուագ» եւ «Այո իրիկուն» արձակ կտորները եւ «Երկարածիզ խաւայիս երկիրը» ու «Պիմի» խորագրուած թարգմանութիւնները:

● Էդուարդ Զրբաշեանի խմբագրութեամբ լոյս տեսած լիակատար ժողովածուն մէջ վերահաստատուած են նաեւ երկերուն առաջին երկուքին մէջ յապաւուած ձօները, առիթ տալով ընթերցողին, որ տեսնէ, թէ «Յիշատակ» բանաստեղծութիւնը նուիրուած է Կ. Մկրտչեանին, «Ջրտուփ»՝ Շաւարշ Միսաքեանին, «Փոշին»՝ Ռուբէն Զարգարեանին եւ «Արդի մարդուն Հայր մերը»՝ Դուրեան սրբազանին:

1986

Կիրիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան տպարանը, «Դանիէլ Վարուժան» Փոնտին Հաշուոյն՝ լոյս կ'ընծայէ արեւմտահայերէնով Հրատարակուած մեծարեւոյցեան ամէնէն ամբողջական ժողովածուն, 320 էջ:

## Մ. ԻՇԽԱՆ

# ԵՐԿՈՒ ԿԻՐԱԿՄՈՒՏՔԵՐ

Միսաք Մեծարենցի քերթողական վաստակին մէջ «Կիրակ-մուտֆ» խորագրուած բանաստեղծութիւնը վաղամեռիկ քերթողին ամէնէն յատկանշական եւ գեղեցիկ ստեղծագործութիւններէն մէկն է:

Հնչեակ մըն է անիկա, որ կը նկարագրէ Շարաթ իրիկուան եկեղեցիի արարողութեան պահը՝ գունագեղ, հարուստ պատկերներով, որոնց երանգներուն մէջ կը թրթռան բանաստեղծի խորհրդազգած ապրումները:

Մ. Մեծարենց նախ մեզ կը փոխադրէ Շարաթ երեկոյեան ծիրանի զուարթ լոյսին մէջ, որ եկեղեցիի գունազարդ ապակիներէն ներս կը մալուրի սուր թելերու նման: Միրաննվառ եւ հետըզհետէ տժգունող այդ շողերը կը պլլուին խունկի թաւիչ մշուշին, կը դառնան կապտաւուն ծոպեր եւ կը ծիածանուին ժամուորներու դլխուն վերել:

Պորանը զարդարող վարդերը կ'աննիւթանան կարծես եւ կը ստանան միւտիք խորհրդաւորութիւն մը: Այս բոլորին խառնըւող ծփուն ձայներն ու հանդարտ մաշող մոմերու լոյսէ արցունքները կը ստեղծեն աներկրային այնպիսի՝ մթնոլորտ մը, ուր հետզհետէ կը վերանայ բանաստեղծի կախարդուած հոգին:

Քերթուածը կը շարունակուի եւ յաջորդ տուններուն մէջ մեր աչքերը կը շացնէ հոգեգմայլանք առթող նորանոր պատկերներով — ոսկեկրակ աչքերով բուրվառներու ճօճք, մեղեսիկի երանգներ, գիւմրիւթ եւ թարչիչ երազող ջահեր, կամարներէն եւ խորանէն ծագող լոյս ու ծիծաղ...

Կիրակմուտքի պահ մը, որ թանկագին քարերու երանգներով, խունկի բոյրով եւ նրբահոտիւն ձայներով կը վերածուի երկնային չքնաղ երազի մը, ուր կը թաղուի ի վերջոյ բանաստեղծի լուսածարաւ հիւանդ հոգին:

Մեծարենցի այս քերթուածը արուեստի սքանչելիք մըն է իր խտութեամբ, նկարչական գոյներով եւ ժուժկալ, բայց նուրբ զգայնութեամբ: Հոն վարպետօրէն իրարու հիւսուած են գոյներու, ձայներու եւ բոյրերու այնպիսի՝ տարրեր, որոնք մեր

նայուածքին առջև կը բերեն նախ գեղակերտ պատկերը Շարաթ իրիկուան եկեղեցիի քաղցր պահին, ապա նաև մեզ հազորդակից կը դարձնեն հոն տիրող անաշխարհային խորհրդալի մթնոլորտին:

Արուեստագէտ սերունդի այլ մէկ նշանաւոր ներկայացուցիչը՝ Ինտրա, ապրած եւ ստեղծագործած Պոլտոյ նոյն շրջապատին մէջ, գրեթէ նոյն տարիներուն, իր «Ներաշխարհ»ին մէջ ունի գլուխ մը, որ նոյնպէս նուիրուած է «Կիրակիմուտֆ»ի նկարագրութեան:

Ինտրայի կիրակմուտքին տիրապետող յատկանիշը Շարաթ իրիկուան ժամերգութիւնը աւետող զանգակին ձայնն է: Հանդիսաւոր օրերու զօղանջը չէ անիկա, հապա միւսը, «Փոքր, էգ գանգիւնը, կարծես հրճուալի, ազօտակի, մելամաղձիկ, որ յաճախ չի լսուիր եւ որ իր բարձուցիւն մէջ մրմնջելով կը լռէ»:

Կիրակմուտքի այս զանգակը Ինտրան կը վերագարձնէ իր մանկական օրերու յուշերուն, «քաղցրութեան թրթրոով մը կ'երկարաձգուի սրտին մէջ, որովհետեւ գինք կ'ապրեցնէ անցած-գացած այն օրերը, երբ պզտիկ էր եւ Շարաթ իրիկուանները ժամ կ'երթար դպրոցէն ետք, վազորդայնին՝ Կիրակիին ստուգութեամբը երջանիկ»:

Ինտրայի կիրակմուտքը դրուած է արձակ լեզուով, թէեւ բանաստեղծական յուզականութեամբ: Աւելի ապրումի մը արձագանքն է անիկա, քան նկարագրական պատկերացում: Դպրոցական պզտիկ տղու վերջիշումներով անուշցած ժամերգութեան պահ մը, որ նախագուռը կը հանդիսանայ Կիրակիի արձակուրդին:

«Կիրակիիմ Շարաթ իրիկուան ոգեւորութեամ մէջ էր», կ'ըսէ հեղինակը եւ կը մանրամասնէ բոլոր այն ապրումները, գորս կ'ունենար մանկութեան օրերուն երբ կիրակմուտքի ատեն կը մասնակցէր դպիրներու երգեցողութեան, ճերմակ շապիկ հագած, խաշանիչ ուսնոցներով:

Ինտրայի համար ուրեմն Շարաթ իրիկուան հայկական ժամուան կարօտը կապուած է մանկութեան ապրումներու վերյուշին հետ եւ այդ առիթով ալ անդրադարձներ կ'ունենայ կիրակմուտքի ծէսին ու շարականներուն:

Մ. Մեծարենցի նկարագրական հարստութենէն տարրեր կան անշուշտ Ինտրայի գրուածքին մէջ ալ, ինչպէս «բուրվառին բոժոժուն ճօճքը», «եկեղեցին անուշահոտող խունկը», «մոմերուն զարդարանքը», «արհուուն ճառագայթները», «խաչկալին առջևի սփռոցը ոսկեճամուկ», «բեմին մարմարները մաքուր», «պզտիկ ծիրանի գօտիները», «մեծ ջահերու պրիսմակները», եւ այլն:

Մինչ Մեծարենցի քերթուածին մէջ այս տարրերը, իրրեւ գոյն, ձայն կամ բոյր կը ներկայանան՝ բանաստեղծի հոգիի պրիսմակին ընդմէջէն անցնելով, իրրեւ պահի կենդանի ապրումը,



Ինտրայի Համար անոնք կը դառնան անցեալը վերակենդանացը— նելու ծառայող յիշատակութեանց շարք մը: Մեծարենց լոյսի ծիրանին, մոմի արցունքը, խունկի թաւիչ մշուշը կ'ապրի իբրեւ օրուան խորհուրդը, մինչդեռ Ինտրա զանոնք կը վերյիշէ իբրեւ մանկութեան Հետ անցած—զացած աղուոր բաներ:

Ինտրա կիրակմուտքը կը Համարէ «Երիտասարդութեան մէջ երազանք, ծերութեան մէջ տրտմութիւն», եւ իմաստասիրական նման խորհրդածութիւններով կը զարգահրեւէ իր գրուածքը: Մեծարենց Հնչեակի 14 տողերուն մէջ պահը միայն կը նկատէ եւ կը բաւականանայ չափազանց խիտ ակնարկով մը իր Հոգեվիճակը պարզելով ընթերցողին:

Ինտրայի գրութիւնը աւելի պատմողական ու վերլուծական բնոյթ կը կրէ, թէեւ Հոն չի պակսիր մանկութեան աչքերով լուսանկարուած եւ քաղցրացած Հին պատկերներուն ամբողջ Հարստութիւն մը:

Երկու Հեղինակներուն Համար ալ կիրակմուտքը կրօնական ապրումներու առիթ չի դառնար: Երկուքն ալ արուեստագէտի աչքով եւ սրտով կը մօտենան Շարաթ իրիկուան ժամերգութեան: Աղսթքի ոչ մէկ բառ, բարեպաշտութեան ո՛չ մէկ Հակուս:

*Մեծարենց կ'ըսէ.*

Խորհուրդիմ եմ ծնրադիր բազուկներս խաչանիշ՝

Ու կը սպասեմ որ ծագի հոգւոյս պայծառ Կիրակիմ:

Մեծարենցի փնտռածը իր Հիւանդ Հոգիին բուժումն է, Հոգին՝ որ կը սիրէ թաղուիլ կիրակմուտքի եկեղեցիին չքնաղ անուրջին մէջ, սպասելով, որ ծագի այնքա՛ն անձկանօք իր տենչացած կրօնական Կիրակին:

Չմոռնանք, որ Մեծարենց ուրիշ տեղ, ուրիշ պայմաններու մէջ եւ կարօտագին ցանկութեամբ կարծեց գտած ըլլալ այդ «Կիրակին» («Սիրեբրգ»)։—

Այս գիշեր տօն է հոգւոյս՝ Կիրակի...

Այս պարագային ջահազարդ եկեղեցին աստղազարդ գիշերն է: Ինտրա նոյնպէս Կիրակին փնտռելու ելած է, բայց ոչ մահուան սրտիւքը զգացող պատանի Մեծարենցի Կիրակին, որ արեգակի եւ կեանքի վերադարձ մըն է, կեանքի տօնական Հանդէս:

Ինտրա կ'որոնէ Շարաթ իրիկուան յաջորդող Կիրակին, որ մանկութեան վերածնունդ մըն է պարզապէս, արձակուրդներու ազատութիւնը խորհրդանշող տենչալի տօն մը:

Իրենց պատկերային եւ ապրումային նմանութիւններով եւ տարբերութիւններով այս զոյգ կիրակմուտքները շատ Հետաքրքրական նմոյշներ կը ներկայացնեն նոյն նիւթը երգելու եւ մնայուն տեղ մը կը գրաւեն մեր գրականութեան մէջ:

Մ. ԻՇԽԱՆ

## ԿԻՐԱԿՄՈՒՏՔ

«...Նկեալքս ի մտանել արեգականն  
տեսաք գլոյս երեկոյիս...»

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է գրւարթ...  
Ոսկի թելեր պլլրւած խունկի թաւիչ մըշուշին-  
Կապոյտ ծոպեր, ծիածան, ծրփուն ձայներ, միստի՛Ք վարդ,  
լոյսէ արցունք մովերու՝ որոնք հանգարտ կը մաշին:

Խունկի ծարաւ իմ հոգիս կը ծըծէ պահն այս հանգարտ,  
Ոսկեկըքակ աչքերով բուրվառներն երբ կը ճօնին-  
Պակուցում մը հոգեգրաւ հոն կը թողու գիս անթարթ,  
Կը զգամ համբոյրն իմ հոգիս պարուրող բիլ մարմաշին:

Մեղեսիկի երանգներ կ'օծեն պարոյրը խունկին-  
Խորհուրդին եմ ծնրադիր բազուկներըս խաչանիշ՝  
Ու կը սպասեմ որ ծագի հոգւոյս պայծառ Կիրակին...

Ջահերն հիմակ կ'երագե՛ն համակ գիւմրիւք ու թարշիշ...  
Կամարներէն, խորանէն կը ծագին լոյս ու ծիծաղ-  
Հոգիս քիչ քիչ կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ:

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է գրւարթ...

### ՄԻՍԱՔ ՄԵՏԱՐԵՆՑ

... Տօնը կը տօնէիք մանաւանդ. ինչպէս ամէն մարդ: Բուր-  
վառին բոժժուն ճօնին մէջ, խումկին մէջ որ անս կը բարձրա-  
նա՛ր, կ'անուշահոտեր եկեղեցին, եւ որուն ծփանքներուն մէջ կը  
միգապատուէիք հեշտանքով. մեր մովերուն զարդարանքին,  
արդուզարդին մէջ, ու լոյսերուն, բոցերուն մէջ, արեւին նառա-  
գայքներուն մէջ, գրեթէ հօրիզոնական, որ խորանին սիւներուն  
խարիսխները կ'ողողէին, խաչկալին առջեւի սփրոցը, ոսկեճա-  
մուկ, ու տեղ տեղ բեմին մարմարները, մաքուր, կարծես վնիտ,  
անտարակոյս պազ, մեզի համար անմասոյց, որոնց վրայ ազատ  
էր լուսարարը քայլու, նոյնիսկ անտարբերութեամբ. ու մա՛նա-  
ւանդ պատիկ ծիրանագօտիներուն մէջ, գոր նառագայքները կը  
բերէին մոյթի մը վրայ, պատի մը վարը ծփացնելու, որք երկնային  
բաներ կ'երեւային, իրենց կակուզ, քննուշ գոյներուն սփանչիլի-  
քով, անչա՛փ բարութեամբ լի, եւ որք անշուշտ առկաթ մեծ ջանե-  
րուն պրիսմակներէն կը շինուէին, ու մերթ կ'երկնային, կը գու-  
նատէին, անպիտակները, ծուռ, պիրկ, պատահաբար, ով գիտէ  
ինչու:

Մեծարենք է մերի մարդուն  
 Հայր մերը՝ թարգմանած լլլալու  
 յաւանութեամբ հասարկերու ու  
 թերթերու մէջ թափառող շատի-  
 նատառ այս բարերուն վրայ աչք  
 մը նետող բնթերցողը պիտի եզ-  
 րակացնէ իսկոյն, որ առիկա, այս  
 թարգմանութիւնը, որի՜ ազերս  
 չունի բանաստեղծութեան հետ,  
 յա՛կապէս Մեծարենք նրբա-  
 նուրբ արուեստին հետ, եւ ժա-  
 նաւորաբար մերի ժարդուն  
 Հայր մերը՝ գուշայ բխումին հետ:  
 Ասի՜ առաջ այս թերթին մէջ  
 խոտը եղած է Տայանա Տէր Յով-  
 հաննէսեանի թարգմանչական  
 խնդամիբումներուն մասին, ու-  
 րիչներ եւս պէտք է անցրազար-  
 քած ըլլան անոր կատարած տե-  
 ասկա-տեսակ աղւաղումներուն,  
 եւ աւաւառիկ հարկ կ'ըլլայ զար-  
 մայ ինչչնէլ, որ էր ըսածը ուրիշ  
 բան չէ, եթէ ոչ հայերէն շհակցա-  
 ծը անպիւրէնով զուշարելու տե-  
 զիտակէց արարք մը:

Տայանա Տէր Յովհաննէսեան  
 քրաւոր կամ անպիր ո՞ր օրէնքէն  
 արածութիւն առած է արգեօք,  
 որ կէս հակցած խահերուն ու  
 պատկերներուն վրային այնքան  
 արագ կը ցատկէ ու սրբապիղծ  
 յայտաւումներու հետ կը յանդգնի  
 նայնիակ բանաստեղծութեան մը  
 խորագիրը յարմարքնել իր անձուկ  
 ըմբռնումին, ինչպէս է պարագան  
 մերի ժարդուն Հայր մերը՝  
 բանաստեղծութեան:

Նման երեւոյթներու առջեւ  
 պարզապէս անհասկնալի է զնայ-  
 րիկիք ու ի վիճի խորագրութեան  
 կնցուածքը, որ փոխանակ հայ  
 զբախանութեան հետ լըջորէն  
 վարուելու սկզբունքի մը նեռուե-  
 լու, տեղ կու տայ աննախան-  
 մախոյր մարդոց զիզան անը-  
 նոր՝ զործներուն:

Նախորդ էջերուն արուած է  
 թերթուանին բնագիրը, այս էջին՝  
 թարգմանութիւնը: Բաղդաստե-  
 ցէք...

## Prayer For The New Year

by Missag Metsarents  
 Translated by Diana Der Hovanesian

Give me, my God, that kind of happiness  
 that has no self. Let me gather it like flowers  
 in other people's eyes.

Give me, oh Lord, an impersonal joy  
 which like a child's sparkler tints  
 the onlooker's face.

Give me, oh Lord, an impersonal joy  
 to hang on like ribbons braided with bells  
 on each door I pass.

Let me build altars out of words  
 of those I love and echo them  
 like cymbals of brass.

Give me an impersonal joy  
 to share like the stars dispersed  
 across the skies.

Let it be happiness  
 that does not drown laments  
 of those in pain

and not the kind of joy confined  
 within my self alone.  
 Let every loaf upon my plate be blessed

with a crossed pair of joys.  
 And like the sun going west  
 let me spread sunlight, Lord.

Let me lower it on waters  
 as one lowers nets and plant it  
 in earth's furrows like a plow

and like the rain  
 shower it  
 over the thirsty crowd.

And having found it, let me stay  
 the hunter of the ideal. Give me the grace  
 to know its true worth

like the sailor on the life raft.  
 Let me gather it from the souls  
 of common and uncommon man  
 and give it back.

(1907)

## ԱՐԴԻ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՅՐ ՄԵՐԸ

ՏՈՂԻՐ ԻՆՆԻ, ՏԷՐ...

Դուրեան Սրբազանին

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
ծաղիկներու պէս գայն ժողվեմ ճամբուս վրան՝  
նայուածքներուն մէջ ամէնուն եւ ամէն օր:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
եւ ես հանգոյն երփնալուցկի վառող մանկան՝  
գայն գունաժպիտ տեսնեմ ուրիշ դէմքի մը վրան:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
զանգակներո՛ւ պէս գայն կախեմ ամէն դըրան՝  
ու գերք նարօտ ամէն դըրան գայն պըսակեմ:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
նրագներու պէս գայն բոցեմ բազմատեղներան՝  
խաւարին մէջ ամէն երդ ու խրնիթներու:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
գայն սրբասաց իմ հոգեակիս ընեմ խորան՝  
գայն իմ մտքիս ծըխեմ՝ գերք խունկ բազմաբուրեան:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
ու չըլլա՛յ որ ուրիշներու կոճն ու կական  
խեղդել ուզեմ ջըրվէժին մէջ դափիս ձայնին:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
ու չըլլայ որ ծափիս ձայնին երգը՝ գուժկան  
եսիս սենեա՛կն ունենայ՝ ցո՛ւրտ առանձնարան:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
ու սեղանիս վըրայ դրուած մէն մի նըկան՝  
գոյգ մը խիղդե՛ր գէթ ունենայ թող չափանիշ:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական-  
ու բաշխեմ գայն սրտիս ժայռին՝ իբրեւ մական՝  
որ բխեցնէ ջուրն աներկմիտ երանութեան:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական՝  
գայն ջուրերուն վըրայ ձրգեմ իբրեւ ուռկան:  
գայն իբր արօր աղօսներո՛ւն ձրգեմ վըրան:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական-  
գայն իբրեւ անձրեւ ցօղեմ ամէն դաշտի վըրան,  
գայն իբրեւ արեւ բաշխեմ ամէն հորիզոնի:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական՝  
գայն ընդգրկած՝ իտէալի՛ն ըլլամ որսկան-  
գայն լաստ ըրած եւ կոյսերու նաւո՛րդն ըլլամ:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական՝  
ժողվել՝ հոգւոյն մէջ ծերերուն, կոյսին, մանկան,  
պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանուորին:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական՝  
ժողվել՝ հոգւոյն մէջ ամէնո՛ւն, համայնական  
հոգւոյն ամէն մասնիկներուն մէջ՝ ամէն ծամ:

Ճամբաներէն, ու գետերէն, ու գաշտերէն,  
անտառներէն, ու լեռներէն, ու ձորերէն,  
տանիքներէն, ու տուներէն, ու դուռերէն՝

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական:

ՄԻՍԱՔ ՄԵՆԱՐԵՆՅ

# ՆՈՐ ՏԱՂԵՐ

## ԶՈՒՐԷՆ ԴԱՐՁԻՆ



Երբ Մեծարենցի սիրոյ երգերը ջննում ենք ժամանակագրական կարգով, չի կարելի շտեմել, որ վերջին շրջանի մի քանի բանաստեղծութիւններում հանդէս է գալիս սերը աւելի կոնկրետ կենսական հանգամանքներում պատկերելու որչափի միտում:

Դա վերաբերում է Վարսեն դարձինս «քանդի-լի բանաստեղծութեանը, ուր սիրոյ զգացմունքը բացայայտում է հայրենի գիւղի բնակարանի փոնի վրայ, իսկ սիրոյ առարկան բնութագրում է միանգամայն կոնկրետ, տեղիային» գծերով, առանց Մեծարենցի միւս երկերի համար բնորոշ տանջալին» մակդիրների: Ահա բլուրն է վար, ջրով լիքը սափորն ուսին, գալիս է գիւղացի աղջիկը: Եւ գեղարուեստական ինչպիսի՞նչ ուրք ու կենդանի մանրամասներ է գծագրում բանաստեղծը: Աղջկայ առատ վարսերի մէջ են մտել արևի ոսկի շողերը, մեղմ գեփիւռոյց թռչունի թևի նման ծածանւում է նրա զլիւի լայտեր: Լուում է աղջկայ զարդասկների հնչիւնը: Կարելի է ասել, որ մեր աչքերի առջև գծագրում է մի ամբողջ նկարչական պատկեր, որը ոչ միայն շողում է բնութեան կենդանի գոյններով, այլև իստում է, հնչում:

ԷԴՈՒՐՆԻ ԶՐԲԱՇԵԱՆ

Երբ բլուրն է վար  
ազրիւրէն դարձին,  
իք վարսի խորձին  
մէք սոգոսկի  
ճուրք մատկն ոսկի  
արևի լայտին-  
հիր սափորն ուսին  
երբ բլուրն է վար  
ազրիւրէն դարձին,  
մեղմով ծածանի  
լայտն հողմովար՝  
թուով թռչունի,  
ու ծիածանի  
թռչնով պսպպայ  
աչն իր գեղանի-  
նւ երբքը ցնծայ  
կնչիւնը՝ մնծղայ  
զարդակիներուն-  
տեմչանքով ամնուն  
հողիս պիտ՝ ողձայ  
գանձը՝ գր լուսնի:  
Ճարտւ շիղին պէս՝  
պիտ՝ շղձայ անի  
նրկու կարի ջուր  
շուրթերուն իր կէզ,  
եւ իր ճակատին՝  
գովացք ցրտին,  
ճակատին կրակ՝  
զովացք ցրտին,  
կարմիր սափորի  
լուրին սառնորակ  
ցողվը թերի՝  
կակայ ձեռներու...:  
Ա՛հ, այս իրիկուն  
սափորն իր ուսին  
ազրիւրէն դարձին՝  
սիրոյս անցուն  
չբիր սարունունը  
կը զուպայ ասին...

Մ. ՄԵՍՈՐՆՆ


Ուղիղ քսան տարի առաջ, առաջ դասախօս Պարզու Շա՛րազեան Ամենայն Հայոց կաթողիկոսութեան պաշտօնաթերթ շէշմիածինների մէջ ստորագրեց գեղեցիկ յօդուած մը, յատկանշական սախորագիրով:

«Հայաստանեայց եկեղեցին եւ Միսաբ Մեծարևնցի գրական ժողովուրդները:

Հետագայ էջերը արտագրուած են նոյն յօդուածէն եւ բաւ են հաստատելու համար, որ Մեծարևնցի խորհրդագրած հակամտերէն մէկուն վերջաւորութիւնը կատարող արժանաւոր գրութիւն մըն է անիկա, յի՛ պատասխանատուութեամբ, սիրով թէ համոզկեր շնչոյրով:

Պարտ է մեզ ըսել սակայն, որ յօդուածը շատ աւելի ուժեղ տպաւորութիւն պիտի մզէր, եթէ տաւազ դասախօսը չակերտներու մէջ առանց ըլլար անոր կարգ մը հաստատումները, որոնցմէ մէկ-երկու նմայլ մատնանշուած են ցովի սիւնակին վրայ:

\*\*\*



**Պ. ՇԱՂԱԳԵԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Մեծարևնցի ստեղծագործութեան մէջ առանձնապէս ուշադրաւ են միշտ բանաստեղծութիւններ, որոնք, ինչպէս արդէն նշել ենք, ուղղակիօրէն կապուած են հայ եկեղեցու, նրա խորհրդի ու աւանդութիւնների, մեր ժողովրդի կրօնական հաւատալիքների հետ, եւ որոնք խորապէս զբսեւորում են բանաստեղծի յուզական այտարհը, նրա հիմնական արածագրութիւնները: Քերթուածների այդ շարքին է պատկանում, օրինակ, ժամանակակից Հայրանաստեղծութեան ամենաընտիր գոհարներից մէկը՝ «Կիթակմուտքը», ուր Հեղինակը հայ եկեղեցու խորհրդով յափշտակուած, մտքի ու հոգու գերազայն լարումի մէջ, ապրում ու իր հետ ապրեցնում է մեզ պաշտամունքի սրբագոյն պահերից մէկը: Այդ քերթուածը մեզ տանում է հայկական պարզուկ մի տաճարի կիսաստուերից ներս՝ Հաղորդակից դարձնելու մեր եկեղեցիներում կատարուող Շարաթ կրեկոյեան ժամերգութեան խորհրդին: Երկարածագող երազային երկոն, որ հանդարտօրէն ներհում է մեր ժամերից ներս, յանկար-

Արուեստագէտը յարութիւններ իրազործող  
աստուածն է հաս:

Յակոբ Օշական

(«Շալալիներ», 1924, Յունիս, էջ 50):

Արուեստագէտը յարութիւններ իրազործող  
աստուածն է այստեղ:

Պարզեւ Շահրապեան

(«Շէրմիածին», 1967, թիւ է-Ը, էջ 49):

Ինչ քանի այսքան անկեղծ, սրտաբախի զեղում  
մին: Մարդ պատրանքը կ'ունենայ շատ հին օրերու  
ազօթքի խոհնկը լսելու:

Յակոբ Օշական

(«Շալալիներ», 1924, Յունիս, էջ 51):

Այնքան անկեղծ, այնքան սրտաբախի զեղում  
կայ այս բանաստեղծութեան մէջ, որ ժողով ակամայ  
պատրանքն է ու նեկում շատ հին օրերի ազօթքի  
խոհնկը լսելու:

Պարզեւ Շահրապեան

«Շէրմիածին», 1967, թիւ է-Ը, էջ 51):



Ժակի վիրաւորումն է կամարներից իջնող լոյսի մեծ գծերից: Պատերի վրայից  
հարած կարմիրը կարծես քայլում է յայտնի քայլերով:

Յուշիկ փախչող իրիկունան ծիրանի լոյսն է գուաքք...

Մրեկոյեան արեւը շուտով փախչելու է: Ու նրա պայծառութիւնը, հա-  
կառակ իր ծիրանի գուաքք գոյներին, ինչ-որ տեսուր մի բան ունի իր մէջ պա-  
հած:

Ոսկի բեկեր՝ պըլլըումս խունկի թաւիչ մշուշին.  
Կապալու ծոպեր, ծիածա՛ն, ծփօւն ճայներ, միստի՛Ֆ վարդ,  
լոյսէ արցունք մտներու, որոնք հանգարտ կը մաշին:

Եւ ապա՝

խունկի ծարաւ իմ հոգին կը ծծէ պահն այս հանգարտ,  
Ոսկեկրակ աչքերով բուրվառններն երբ կը մօծին,  
Պակուցում մը հոգեզրաւ հոն կը թռչու զիս անթարք,  
կը զգամ համբոյրն՝ իմ հոգիս պարուրող բիւ մարմաշին:

Կամ՝

...խորհուրդին եմ ծերադիր, բագուկներքս խաչանիչ,  
Ու կը սպասեմ, որ ծագի հագւոյս պայծա՛ռ կիրակին:

Պէտք է տեսած լինել խնկի այդ մշուշը, որ, սկզբում աղօտ, սակայն  
յանկարծ կրակ ու ոսկի է դառնում՝ թափանցուելով արեւի սիւնակից: Ու մեզ  
թուում է, որ ահա ուր որ է մեր առաջ բացուելու են ներքին կեանքի դոները, եւ  
մենք Հաղորդակից ենք լինելու նրա հողու վեհազոյն խորհուրդներին, վերա-  
նայու ենք նրա հետ եկեղեցու նիւթական կամարներից դէպի մեծ կամարումը  
տիեզերական աշխարհների ու թեւելու ենք դէպի անըմբռնելի խորութիւն-  
ները, որոնք բացում են մեր դիտավերելու:



Անտարակոյս, բանաստեղծը իր այս ներշնչումը պարտական է պատանութեան տարիներէջ իր յիշողութեան մէջ երկարած ու երազով տարտամացած պատկերացումներին: Եւ ահա մեր աչքերի դիմաց, իր գիւղէ եկեղեցու դասում, կանթեղների մեղրածորան լոյսի տակ գալիս եւ կանգնում է մի հեզ ու ամպկոտ մանուկ, որ զպրների կողքին, միւռոնի նման փայլուն գէմքով ու երազկոտ աչքերով, բուրվաուններից դուրս ժայթքող խնկի թուլաներով յազեցած ուռնգերով, նհար մի մոմ բռնած ձեռքին, վոխտ մարմինը սպիտակ շապկի մէջ պատանքած՝ երգում է երազո՛ւն, շարականների շուշանային շուրջը սրտում: Այս պատկերով միայն Հնարաւոր է բացատրել այդպէս զուլայ մի ներշնչում: Բանաստեղծի յիշողութեան ահաւոր պրկումի, լարումի շնորհիւ է միայն, որ ընտանի ձեւերն այսպէս դուրս են գալիս իրենց անյայտ դամբարաններից ու իրենց մեռած գծերի լքումը հասւրում: Արուեստագէտը յարութիւններ իրագործող աստուած է այստեղ: Երբ ուզում է հաստատարի՞մ մնալ նրանց պատկերին, տարիների մուշը գալիս աղօտացնում է շատ բան, եւ շատ նայելոց արցունքոտում նրա աչքերը եղծելով դժագործութեան յստակ հէնքը՝ տարոււմ են անիրական, կէս իրական, գրեթէ թրթուռն ոգեղինացման: Այսպէս է, որ բանաստեղծը թափանցում է իրերի արտաքին նկարագրից դէպի ներս, սուզում հայ եկեղեցու սրբութիւնների՝ շարականների, ժամագրքերի, աշտանակների, բուրվաունների ու մոմերի ներքին խորհրդի մէջ ու գտնում այն նոր ներդաշնակութիւնը, որ խուսափում էր նրանց մակերեսներէ: Ահա թէ ինչու Հայաստանեայց եկեղեցին, իր ամենաշայն ու ամենախոր իմաստով, Մեծարենցի արուեստի պիտաւոր հրապոյրներից մէկն է կազմում:

Վերեւում յիշատակուած բանաստեղծութիւնների թուին է պատկանում ստեւ «Աստուածամա՛ր» հրաշալի քերթուածը: Սա յատկանշական մի օրինակ է ազնուազոյն ներշնչումի, կրթութեան երեսկայութեան, ուր բանաստեղծը իր անձը, ցանկութիւնների ճամբով, հազար ձեւի ու հազար յիշարի բաշխելուց յետոյ, ուզում է էլնել իր «ցաւին սարակն ի վեր» ու ստել Աստուծոյ մօրը:

Եւ իդձերուս կապայտիմ վրայ, վարդ ամպը գուն,  
 վարդ ամպն եղիր, մերք լուսմկան պատմութեանդ.  
 դա՛ւն, աստուածեան գեղեցկութեան արփաւա՛ր հարս,  
 սրբութեան կո՛յսը ձիւնածիր ու հրալիրս:  
 գիշերին մէջ կ'իջնէ դձու աւղիս լուսեղէն,  
 կաթի՛լ մը կաթ՝ ծովացած քու սրբութեանէն.

Հայ եկեղեցու նուիրական կամարներից «աստուածային ժայնի վայրէջքը» լուրջ եւ իր «աստուածարեայ» հոգու համար Աստուածամօր «ծովացած» սրբութիւնից «կաթիլ մը կաթ» աղերսող բանաստեղծը այստեղ մեզ յիշեցնում է աղօթասաց մեր միւս բանաստեղծին՝ Նարեկացու Աստուածամօր նուիրած հրաշալի տաղը: Երկուսի ներշնչումներն էլ ըսում են նոյն հոգր ազբիւրից՝ նրանց հոգին դիեցնող Հայաստանեայց եկեղեցուց: Եւ արդէն Նարեկացու նկատմամբ Մեծարենցի պաշտամունքի հասնող հիացումն ու անկերպալաւ մեծարանքը, նրա հոգեհարգատութիւնը դալիս են ոչ այնքան այդ «զրական հակայի» բարձր արուեստից, ո՞նի եւ լեզուի անսպաս հարստութիւնից, որքան այս երկու հեղինակների ստեղծագործութիւնների շփման կէտերից, նրանց ստեղծագործութիւնների արեւակցութիւնից:

...Ահա նրա «Տա՛ւր իմծի, Տէ՛ր» բանաստեղծութիւնը, որն ընթերցողի հոգու մէջ բաց է անում սրբազոյն գգայութիւնների պայծառ մի տիեզերք: Իր բիւրեղեայ պարզութեամբ, մարդկային ամենաազնիւ բաղձանքների դրսեւո-

բուժով՝ այս քերթուածը իրօք կոչուած է ժամանակակից մարդու Հայր մերը լինելու: Աստուծուց «անանձնական» ուրախութիւն աղերսող բանաստեղծի Հոգու ամէն խորշերից տիեզերական համակրութիւնը իր սուկեայ ընձիւղներն է նետում դէպի դուրս: Այնքան անկեղծ, այնքան սրտարուխ գեղում կայ այս բանաստեղծութեան մէջ, որ մարդ ակամայ պատրանքն է ունենում շատ հին օրերի աղօթքի խո՛ւնկը լսելու.

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
 զայն սրբասաց իմ հոգեակիս ընեմ խորան՝  
 զայն իմ մտքիս ծխեմ՝ զերբ խուճկ բազմաբուրեան:

Կամ՝

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
 աւ սեղանիս վրայ դրուած մէն մի նրկան՝  
 զայզ մը խինդե՛ր. գէշ ունեցայ քոզ խաչամիշ:

Եւ վերջապէս ՎԼՊայի՝ ներքին սուկեւարը, ուր մարդկային վսեմ ցանկու-  
 թիւնների շքեղ մի տողանց կայ: Այս շարքի ամէն մի քերթուածի մէջ բանաստեղծն ապրում ու շնչում է մի լայն, համայնապարփակ սիրով, մարդասիրական խորունկ բաղձանքներով ու զգացումներով: Այս մարդասիրութիւնը, համայնական սիրով այս խենթ պոսթիւտմը, բնութեան ամէն մի մասնիկի նկատմամբ պայտասմունքի այս խոր զգացումը, որ Մեծարեւոյցի ստեղծագործութեան ամենարժուրդ գիծն է կազմում եւ որը ցայտուն նորութիւն էր Արեւմտահայ գրականութեան մէջ, Հայաստանեայց եկեղեցու ու նրա Հոգեւոր ժառանգութեան՝ Հեղինակի վրայ ունեցած ազդեցութեան անժխտելի վկայութիւնն է հանդիսանում:

ԳԱՐԳԵՒ ԵԱՀԲԱԶԵԱՆ

**ՆԱԻԱԿՆԵՐԸ**

Նաւակներ մեկնեցան ամէնն ալ, բաղձանքով ակադճում  
 Հեռացան ամէնն ալ՝ ծրփամուտ երազիս փնտնէէն.  
 Անձուկիմ բոցը գիս պաշարե՛ց, Ըսպասման հիւսնդն եմ.  
 Հոգեասար դողերով եւ հուրքով միշտ ցայգերն են յրդի-  
 Գիշերներն եւ համբուն կը սպասեմ ծիրանի այն զարձիմ.  
 Ու ցայգուն ալ կ'անցնիմ աւազուտ փնտնէէն՝ դողաճար  
 Սրտաթափ աւ խանդատ երազի կայծերով առլըցուն:  
 Դարձուցէ՛մ մաւակներս հողմավար, չորանո՛յշ պայիկներ-  
 Դարձուցէ՛՛մ մաւակներս գիւթավար, իրիկուա՛ն հավիկներ...:

Մ. ՄԵՍԱՐԵՆՑ

## Մ. Մ.

Արիւն է եղել աշխարհում: Եղել է եղեռն ու կոռի:  
 Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դէմ:  
 Աշխարհից հեռու մի գիւղում, եղեգնեայ մի սրինգ կտրած,  
 Արե՛ւ է երգել ու գարուն, այս հիւանդ, համեարեղ պատանին:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

## ԱՆԱՆՁՆԱԿԱՆ

*Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութի՛ւնն անանձնական...*

*Մ. ՄԵՆԱՐԵՆՑ*

Ուրախութի՛ւն, ուրախութի՛ւն անանձնական,  
 Տրուած վերուստ, վառ օրերին իմ ծերութեան  
 Ծովն այս կապոյտ, կապոյտ շողեր, շողեր հազած,  
 Լողափը լայն, ծառուղիներ ժպտուն ու թարմ...

Ուրախութիւն անանձնական, որով պիտի  
 Փակուի կեանքիս արահետը մեզ ու անձուկ,  
 էլ չեմ սիրի ազդիկներին մման վիթի,  
 էլ չեմ թափի մերժուած սիրոյ համար արցունք:

Ձէ, կը սիրե՛մ ազդիկներին մման վիթի,  
 Ձէ, կը սիրե՛մ եզրեւանու մման կանանց,  
 Ու կը մնա՛մ անպատասխան ու չեմ տրտմի,  
 Ու կը ժպտա՛մ ուրախութեամբ անանձնական:

Ես կը գրկեմ բոլոր սէրերը աշխարհի,  
 Սիրողների սիրով կ'այրուեմ ու կը հարբեմ,  
 Կ'անցնեմ ուղին իմ վարընթաց՝ հեզ ու բարի,  
 Կը բաժանեմ ապրողներին երգի վարդեր...

Վարդե՛ր, վարդե՛ր իմ տասնեօք գարունների,  
 Որոնցից ոչ մի վառ թերթիկ ինձ չհասաւ,  
 Ես ձեզ տուի ուրախութեամբ անկարելի,  
 Ուրախութեամբ, ուրախութեամբ անանձնական:

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



Միսսիս Մեծարեան

## ՀԱՄԱՅՆԱՊԱՇՏ ԱՊՐՈՒՄՆԵՐՈՒ ԶՈՒԱՐԹՈՒՆ ՀՐԱԻՐԱԿԸ

Յրանապէք «Անիծեալ բանաստեղծներ» (poètes maudits) որակումը կու տան այն գրողներուն, որոնք Հապիթեակոխած ստեղծագործական բեղուն հանգրուան մը՝ կա՛մ դադարած են երկնելի եւ կամ ողջունած մահը՝ կանխահաս տարիքի մը մէջ:

Այդ անիծեալ բանաստեղծներն են, որ Լոսթրէամոններու եւ Բէմպոններու տիրապայտին յայտնութեամբ, արտասովոր հանգիտութեան մը վերածած են իրենց տաղանդը, խորացուցած իրենց գարու դեղարուեստական բմբռնումները՝ իրաշատուկ ստեղծագործութեամբ եւ փոխանցած այնպիսի՝ զգայութիւններ, որոնք մինչեւ այսօր դեռ կը պահեն իրենց այժմէութիւնը՝ մթնոլորտային նոյն ջերմութեամբ եւ հոգեզբաւ հաղորդականութեամբ:

Անիծեալ բանաստեղծներու տիրապէս կը ներկայացուցին է նաեւ Միսսիս Մեծարեան, որ ողելելի է ետք Արեւմասայ գրականութիւնը բնութենապաշտ զոյգ մը իրագործումներով՝ շիջեցաւ իր տաղանգին ճառագայթային պայծառութեան մէջ, երբ իմացապէս նո՛ր կը յանձնուէր Համայնական բաղձանքներու մակընթացութեան:

Եւ անձնապէս իրագեկ էր արդէն ա՛յն տարրերութեան, որ գոյութիւն ունէր իր տաղարաններուն՝ «Միաժան»ի եւ «Նար տաղեր»ու միջեւ:

Գիտէ՛ք, որ «Միաժան»ը եթէ կը կազմէր ներանձնական ապրումներուն երախայրէք վկայութիւնը, ուր իրիկնային մելամաղձուտ անդորրութիւններու ընդմէջէն կը պարզէր վերջալուսային երանգները իր ներաշխարհին եւ կ'երգէր կարօ-

տը այն Սէր-Արեւիկն, որ բաղադրատեսակէն-  
դանութեամբ պիտի վարարէր Հիւժար-  
տուտը իր հոգին, միւս կողմէ՛ կը դիտակ-  
ցէ՛ր նաեւ, որ «Նոր տաղեր»ը կը հանդի-  
սանաբ նախանուագը իր համայնապաշտ  
զգացումներուն:

«Միածան»ի Հրատարակութեան  
առիթով նպատաւ: որ եւ աննպատա կար-  
ծիքներու ականջալուր մնայէ եւ ինք-  
նաքննադատութեան ճամբով ալ ընդու-  
նելէ ետք յիշեալ գործին կարգ մը խոցելի  
արժանիքները՝ Արտաշէս Յարութիւնեա-  
նի ուզողուած 1907 Յունիս 25 թուակեր  
հետեւեալ նամակով՝ ան կը մատնանշէ  
վերոյիշեալ տարբերութիւնը. «Կը տես-  
նեմ որ «Միածան»ը մշակակալի խոս-  
տում մը եզած է բոլոր գրախօսներուս  
համար ալ, ու կը դոզամ մտածելով, թէ  
այդ խոստումը պիտի կրնար գուցէ  
լուսաւոր խաբուսիկ պատրանք մը ըլ-  
լալ՝ մեր կողմէն գրական նորածագ բոլոր  
երեսայններուն պէս: Բայց ուրախու-  
թիւնը ունիմ վստահեցնելու ձեզ, թէ՛  
բաւական արիւթիւն ունեցեր եմ սնա-  
պարծութեան եւ վատօրէն գոհուեալ  
ծուլանքի ֆախիքներուն մօրին մէջ  
բռնուած յմնալու, եւ թէ՛ «Նոր տա-  
ղեր»ս անանց ծարաւիս յագեցումն ու  
փառքիս լուսն ըլլալու՝ պիտի կարե-  
նայ սակայն կատարուած խոստումին  
նակատաբաց շարժումները գզացնել:

«Իմ մտահոգութիւնս, իմ մեծ ծա-  
րաւս, իսկատիպ գրականութեան մը  
գազափարին իրականացումն է: Եւ  
աւարտ համար, գէթ իմ մասիս, անկրա-  
ծեշտութիւնը կը զգամ հոգին ու բու-  
րին ու փրիկն նետ ապրելու»:

Նոյն տարուան աշնան (1907), Մե-  
ծարենց լոյս կ'ընծայէ «Նոր տաղեր»  
գերթողագիրքը, որ կ'ըրազործէ վերոյիշ-  
եալ խոստումը, հարստացնելով իր քնա-  
քական լարը՝ անանձնական իղձերով:

Ակնարկելով այն գործով կիրարկը-  
ւած բանաստեղծին սխաբհրեանկազման  
նոր եղանակին՝ Յ. Ճ. Միբունի կը կատա-  
րէ հետեւեալ հաստատումը. —

«Երբ «Միածան»ի մէջ Մեծարենցի  
հոգին կը քափառի գիշերուան գիրկը,  
արձնելով անծանօթ խորհուրդը, եւ լոյ-  
սը՝ որ անկէ պիտի ծիլ, «Նոր տաղեր»ու

մէջ արդէն գտած ըլլալ կը թուի արահե-  
տը, որ զինք արշալոյսին պիտի տանի:

«Հոն՝ տիեզերական բարութեան,  
տիեզերական երանութեան երգիչն է  
ան, որ կը բազայ բաղարութեամբ եւ  
երջանկութեամբ լեցնել իր հոգին ու  
գայն բաշխել մարգոց եւ իրերուն. տա-  
նապողններուն, լացողներուն, սգաւոր-  
ներուն, ամէնուն»:

Անձնականէն դէպի համայնականը  
ըջըղարձուած այս իրողութեամբ կը  
հաստատուի տարբերութիւնը Մեծարեն-  
ցի գոյգ մը տաղաբաններուն միջեւ, ուր  
կան բնութեանապաշտ պատկերացումներ,  
որոնք ստեղծագործական նոյն ըջըղանին  
ծնունդը ըլլալով հանդերձ, կը պարզուին  
զգացական տարբեր երանդներով:

Ուշադրաւ են, օրինակ, արեւիկն ձօն-  
ւած այն կտոր մը բանաստեղծութիւն-  
ները, ուր Մեծարենց կը նկարագրէ ներ-  
հակ տրամադրութիւններով շէշտուած  
առաւօտեան պահեր:

Այսպէս, «Միածան»ի մէջ, արեւային  
համբոյրով մը ջերմանալու բանաստեղ-  
ծին կենսարար ջանկութիւնը կը դրսե-  
ւորուի արտագին յուսահատութեան մը  
հասնող հետեւեալ թարանձանքով. —

Վերջին անգամ մըն ալ,  
Դեռ իրիկուն չեղած  
Ու, դեռ տամուկ գիշերին վրեւիկը  
գին չընդգրկած,  
Վերջին անգամ մըն ալ,  
Փարէ՛ հոգւոյս խանդարարք ու  
կաթոգի՛մ  
Հիւս՛մդ եմ, բարի՛ արեւ, շողա՛,  
շողա՛...»:

Իսկ «Նոր տաղեր»ու մէջ տեղ գտած  
«Այգայիցն» խորագրով նոյնարնոյթ այլ  
բանաստեղծութեամբ, առաւօտեան պա-  
հը կը ձերբագատուի թախծայոյց մթնո-  
լորտի մը թելաբարկանութենէն, ուր  
բնութեան երեսայնները ի յայտ կու գան  
կենսալիբ հանդերձանքով. —

Խա՛չ հանցե՛ք ու ծա՛փ գարկէ՛ք,  
կարճուրթիւններ եհնայի  
Եւ արիւթիւն թոյրեր հագած՝  
աւտում մեզի կը մայի:

Մառերում վրայ թռչուններու  
 խմբերգն հիմա կ'անձրեւէ,  
 Մառերում տակ ծիծաղը թինջ,  
 մանկան՝ յոգնած կ'աբաւէ,  
 Մառերում քով բոյրը ծաղկին՝ աճէն  
 գոյնէ ու ձեւէ...<sup>4</sup>:

Աւելի՛ն, մահուան անդոհանքը, որ  
 անխախտ հեռանկարի մը պէս կը կախուի  
 բանաստեղծին մահազգացութեան լու-  
 սանցոյցէն՝ «Միածան»ի մէջ կը պատկե-  
 րացուի բացայայտ յուզումով:—

Ո՛վ դուն հիրիկ ծաղկանոյշ, երբ  
 անցար հետ յոյսերում,  
 Բան մը փըլըւ հոգւոյս մէջ  
 Բայց այլումով ողբագին.  
 Դարձիդ Բի՛շ մըն ալ ծպտէ սա՛  
 լուսաբարձ հիւանդին՝  
 Որ քիչ առ քիչ կը մեռնի՝ կ'առչած իր  
 խօյ յոյսերում...<sup>5</sup>:

Իսկ «Նոր տաղեր»-ու էջերուն, նոյն  
 անդոհանքը կը փոխանցուի իր քողար-  
 կեայ եզերականութեամբ, ցանկապատի  
 շուքին նստած վարրի ծաղկի մը այլաբա-  
 նական կերպարին ընդմէջէն:—

Գիտե՛ս, ծաղի՛կ, անուճն ի՞նչ է  
 դողին՝ գոր Էնց տըլաւ հովիկ,  
 ու ձայնին որ զիս կը կանչէ...<sup>6</sup>:

Եւ դեռ կարելի է երկարել զուգակը-  
 շիւր «Միածան» եւ «Նոր տաղեր» ջեր-  
 թողական գործերուն, ցոյց տալու համար  
 այն զգալի փոփոխութիւնը, որով Մեծա-  
 րենց կը ձգտէր «բնութիւնը զլիսագիրով»  
 ներկայացնել, անձնականէն զէպէ հա-  
 մամարդկային ոլորտներ թեւակոխելու  
 հետանուած ցանկութեամբ:

«Ինճնադատութեան փորձ մը» խո-  
 բարգրով ծանօթ գրութեամբ, բանաստեղ-  
 ծը ա՛յս մտալլկումով կը տազնապի աբ-  
 դէն եւ կը խոստովանի, թէ «Միածան»ը  
 բազմակողմանի արժանիքներով հա-  
 բուստ գործ մը չէ թէպէտ, այսուհանդերձ,  
 քնարաշունչ վաստակն է ա՛ն երիտասարդ  
 հեղինակի մը, որ ստեղծագործ կեանքի  
 մթին տարածութիւններու մէջ կըրցած է  
 ասանձնացնել ժուռեղէն ճամբաներ»,

որոնց կախարդանքին կը յանձնուի ան-  
 խարխափ ուղեւորութեամբ, եւ թէ՛ հե-  
 տամուտ է նաեւ արտայայտչական նոր  
 կերպեր եւ նոր թեմաներ որոնելու այլա-  
 սանքին:

Անշուտ դատումով ընդունելէ ետք,  
 թէ «համաշխարհիկ բարախումներ չունի  
 իր սիրտը», եւ թէ՛ «ամբողջովին բնու-  
 թիւնով տողորուած չէ», տակաւին,  
 «Միածան»ի հեղինակը վերոյիշեալ ինք-  
 նազատական փորձ-գրութեան եզրա-  
 փակիչ խօսքով կ'առաջադրէ հետեւեալ  
 բունձեւը, իբրեւ ոգտագործելի մեկնա-  
 կէտ՝ իր հետագայ ծրարքելի իրագոր-  
 ծումներուն.

«ԼՄէկդի թագունմ քիչ մը անմարդ-  
 կային անձնաբանութիւնները, բարա-  
 խելու համար բնութեան սիրով: Բա-  
 նաստեղծը բնութեան ցոյաբով պէտք է  
 բլլայ, թէ ոչ բանաստեղծ չէ իրապէս-  
 էներթաւածները իբրեւ բառ պէտք է ու-  
 նենան տերեւին թրթռումը, թռչունին  
 դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին  
 ու լերան մշտանոյն գորութիւնը: Բա-  
 նաստեղծին ձայնը տիեզերական յա-  
 բարբարականութեան մը լարը պէտք է  
 բլլայ, բոլոր գոյալիւններուն համադ-  
 րական թրթռումովը տրոփուն»<sup>7</sup>:

Նկատելի է, թէ սոյն յանձնառու-  
 թիւնը Մեծարենց կըրցած է վերածել  
 գործնական գիտակցութեան, «Նոր տա-  
 դեր»-ու բովանդակութեան մաս կազմող  
 յասկապէս շիրիկումը, «Հովը», «Հիւ-  
 զը», «Բազմանք» եւ «Առտուն» խորագ-  
 րով բանաստեղծութիւններով, ուր մար-  
 դոց եւ բնութեան միջեւ զարարեբակա-  
 նութեան մը լարը՝ կը թրթռայ «բլլայի»-  
 ներու շղթայայար ըղձանքներով:

«Նոր տաղեր» ջերթողագրքով, Մե-  
 ծարենց զգալի չափով մը ա՛յ ազատագ-  
 րած է ինքզինք անձնական յոյզերու կա-  
 լանքէն եւ փոխան տիրատուներ պահե-  
 թու՝ կեանքի ընդհանրական երեւոյթնե-  
 րուն բացուելու ձգտում մը կը զբսելորէ:  
 Ան կը զգայ, թէ ստանց մարդկային  
 գոյութեան՝ բնութիւնը կը պարզէ կեն-  
 սագուրկ հանդիսութիւն մը միայն, որ-  
 քան ալ ներկայացուած բլլայ ան նկար-  
 չազեղ պատկերացումներով:

Թէ՛ հրահանգապէն Հողեկիճակներ Հովանաւորող Հանդիսաւայր մը չէ բնութիւնը, այլ վաղորդեան շողերով ցօղապատուած արեւային բերկրութիւն է եւ ձիւնազարդ երգէքներու տակ խմբերգը— ւած ձիւնի ցնծութիւն»:

Թէ, վերջապէս, մարդկային էակն է, որ կը կազմէ բնութեան լիախորհուրդ իմաստը եւ բնութեանական ամէն յայտնագործում հարկ է որ ըլլայ բաղադրիչ մէկ տարրը մարդոց երջանկութեան:

Այս ըմբռնումով, իրիկունը ա՛լ կը դազրի շիրմային մթնշաղկոտ մը յատկանշը— շիկ է եւ կը դառնայ այն պահը, որուն անգորրաւէտ քնջուութիւնները փոխ առած՝ բանաստեղծը կը ցանկայ վերընծայել ամէնուն—

Սա իրիկունն ըլլայի ես,  
 եւ երպէի ճակտին ամէն անցորդի  
 չճնադագեղ ու նըւազուն յամուրդի  
 սա իրիկունն ըլլայի ես»:

Թուուններու համբրգովը եւ մարդոց աղաղակովը լիացած իրիկունան նման կ'ուզէ ծփայ Հողիներու վերեւ՝ վարագոյրի շղարշային փափկութեամբ:

Ան կը բաղձայ խնկաշուիդ դօղանջներով պատարուն ըլլայ պահը իրիկունան եւ սոկեղով իր ցոյքերով կենդանութիւն ներշնչել իր սիրած էակի ոգեհապառ յոսին:

Եւ այնքով ովկիանի մը յազթ երգերովը լիացած, ծագիկներու եւ Հովերու մեղեդիներովը Հեշաացած իրիկունան նման մատուցե՛լ ամէնուն կենսախայտ խնդութիւնը իր սրտին—

Սա իրիկունն ըլլայի ես,  
 նամայնական, չճնադ, քաղցրիկ,  
 յուսագէս:  
 եւ ամէնուն տայի հաւրքէս, ոսկիէս:  
 Սա իրիկունն ըլլայի ես»:

Բնութեան մէկ այլ երեւոյթն է Հովը, որ «Ըլլայի»ներու քերթողաշարին մէջ կը ներկայանայ կարեկցանքով խորհրդանշըւած իր մարդկային բարեմասնութեամբ:

Այս պարագային եւս, Հովը «անդընդապայար օվկիանի պէս» Մեծարեցի

սրտին մէջ ալիք—ալիք մակընթացող շելիկ սարսափը» չէ, այլ՝ բարերար յատկութիւններով օժտուած ներկայութիւն մը, որուն նմանութեամբ, բանաստեղծը ի՛նք եւս կը բաղձայ եղբայրանալ մարդոց հետ եւ բաժնեկից դառնալ անոնց տառապանքին:

Հետեւելով Հովի թափառումը կարեկցութեան՝ ան կը տենչայ սիրոյ երգեր շնչով ձկնորսներու ականջն ի վար, ոչրայ սուգը ցրտահար ճամբորդի եւ Հովի սուր Հոտառութեամբ շրջագայիլ շրժաքարէ յիմաքար՝ ըմբռնելու խորհրդանոյց գաղտնիքները անգրայխարհիկ արուեստներու:

Եւ կը բաղձայ ձմրան արհուրթքը մեզմող «ամպավար Հովն ըլլայ», փարատել վիշտը հրդակներու մթամած, կարեկցիլ որդեկորոյս ձօր անմխիթար ցաւին եւ սփոփել Հեկեկանջը անսուտղ մանուկներու:

Տառապանքը Համայնապաշտ ըմբռնումով ընկալելու այս բաղձանքը կարելի է առընչել այն իրողութեան, որով բանաստեղծը Հաշտուած էր գինք հարւածող հրահանգութեան հետ եւ ո՛չ միայն կենսասրած էր իր մէջ ապրելու յարատեւ ողբերգութիւն մը, այլեւ նսեմացուցած եւ դիմաւորած իր ցաւազին վիճակը, զայն ընդելուզելով Հասարակաց ցաւերու եւ եղբարեոյթ պարագաներու հետ:

Ահա թէ ինչու ան կը ձգուէր առատապէս բաշխել տառապան Հողիներուն, ի՛նք որ բնութիւնը զլացած էր իրեն իրքեւ կենսառողջ երջանկութիւն կամ Հողեկան վայելք եւ Հաղորդակից պահել զանոնք անանձնական այն ուրախութեան, որմէ Համարեա՛ զրկուած էր ինք...

Այս մտաստեութեամբ, ան կ'ուզէր դաշտի մը ճամբեղբին կամ լեռան ստորոտը թապառող հիւշն ըլլայ» եւ հերթընկալէր իր ծրարին ներքեւ, իրենց օճախին ջերմութենէն զրկուած յոգնած ճամբորդները եւ «բարեւի մը փոխան»՝ ընծայէր անոնց Համակ բաղցրութիւնները աշնան կենսաւիշ միջդերուն:

Մարմաւորելով հիւղի մը կը կերպարը, բանաստեղծը կը ցանկայ Հաղորդուիլ մարդկային բաղմերանց ցաւերուն, իր գթառատ մտերմութեան եւ զգուանքին

կանչելով՝ անօթեան անցորդներու ապաժաման այցը.—

Ու լըտի ես ցայգուն,  
 Բովը կրակին ճարճատուն,  
 Երգն իրիկուան եկուորին.  
 Աւ ջամբէի ես ցայգուն  
 Երպզներով պատարուն  
 Գիւնջ՝ իրիկուան եկուորին:  
 Ու լըտի ես այգուն,  
 Սրտապատար աւ տրսփուն  
 Գովքն իրիկուան եկուորին.  
 Աւ դիտէի ես այգուն,  
 Ու խոկայի օրն ի բուն  
 Երթն իրիկուան եկուորին...<sup>10</sup>:

Ինչպէս կը թելադրուի, բանաստեղծը արեւարդձ կարօտներու աղերսարկուն չէ այլեւս, այլ անձնամոռ տենչանքներով բարբախուն այն զգուարթուն հրաւիրակը՝ որ վաստակարեկ անցորդներու դեմաց, իր խանդաղատանքին գուռը լայնօրէն բացած՝ սիրոյ եւ զինարեւութեան խորհրդանիշը կ'ուզէ ըլլայ:

Անկախ մարդոց հանդէպ իր ցուցաբերած գորովանքին՝ համայնական իմացումներու հետ նոյնանալու ցանկութիւն մը նաեւ կը քողալերթէ Մեծարենց, Աստուածամօր ուղուած հետեւեալ թանձանքով.—

Կարճածաղիկ աւ կ'ապտերակ գիշերին  
 մէջ  
 պատկե՛րն ըլլամ սրբագնացած ես  
 համայնին<sup>11</sup>:

Այս հեռահայեաց սեւեռումով, սրբազնաշունչ խորհուրդով մը կ'ոսկեգծօ՛ք բնութիւնը, որուն իւրաքանչիւր երևուոյթին մէջ բանաստեղծը կը նշմարէ մէկ բնորոշ մասնայատկութիւնը նուիրական իմացութեան եւ կը հաստատէ բազմակերպ առընդութիւններ բնութեան էտարբերը հանդիսացող Լոյսին, Գոյնին, Ձեւին եւ Բոյրին հետ, որոցք բացատնեօրէն անցնելով՝ կ'ուզէ հասնիլ մինչեւ գիրկը եզեմական խոյտանքներու, բանալու իր սիրտը՝ ընդհանրական ապրումներու զպատարագին սրբանուէր՝:

Ահա թէ ինչու կ'ուզէ միանձնանալ բնութեան իրերուն հետ, ըլլալ զգետա-

մայն հովին անցքը՝ երկնալացիկ կատարներէն, ըլլալ մայն ու ջրվէժ, ծաղիկ ու զեփիւռ եւ զգետափ մը զեղանին, ժմեղսիկի փողի մշուշն ըլլալ՝ եւ մինչեւ իսկ «բատուե՛րն ըլլալ խնկազունած այդիններուն»: Որ շուտօրէի հոգետանջ ցնորքներու տիղմին մէջ կամ չզայթի ցաւոտ անըրազարժումներու կոհակն ի վար, այլ երկնուղէշ վերացումով մը հոգեծուլութ՝ լուսեղէն ոլորտներու կատարգանքին:

Տիեզերական դոյութիւններու եւ տիեզերական ըմբոսումներու հետ առընդուելու Մեծարենցի այս մտասեւեռումը կը պատկերանայ հետեւեալ բազմանքով.—

Բարձունքներու լայնշի ճամբան ըլլայի,  
 որ ծաղկահիւս կողերէ վեր կը մագլի,  
 ու գագաթին հասած՝ ճար ու հեշտայի  
 հորիզոնին սնդուս գիծին կը ճայի:  
 Ու տանէի հոն հոգիներն բսպառած,  
 ծանձրոյթմ՝ որոնց ոլորտին վրայ կը  
 փշիե,  
 ու ցոյց տայի՝ լայն հորիզոն անուրջի՝  
 բերրի դաշտերն ու ճամբաներն  
 անմոռաց՝  
 ուր քաղցրութիւնն՝ հոգւոյն կ'ըլլայ  
 յակուրթի<sup>12</sup>:

Ողջունելով նման հանդուան մը, բանաստեղծը կը բազմայ ցոյց տալ յոգնարեկ հոգիներուն՝ ինքնավերացման ճամբով նուանուած եւ էական հոգեփոխութիւն յառաջացնող անըջալոյս բարձունքներ:

Հո՛ս եւս, յանձնուելով հեռայայտ ողիներու ճամբին՝ Մեծարենց կը հետամըտի առանձնապէս մաղուու երջանկութեան, իբրեւ հիմնական նշանակէտ իր համայնայնոյց որոնումներուն: Բնութեան իրերը, նկարագրային ի՛նչ բնոյթով ալ ներկայանան՝ իր մտատեսութեամբ, կը դառնան նոյն ձգտումը կենսագործող բնավայրեր:

Այ՛ս յայցքով, գաշտերն ու ճամբաները, այգիներն ու մրգատանները կը կազմեն այն գործօն երևուոյթները, որոնց անըջական սրբութեան ներքեւ, բանաստեղծը զպտարագնաց հովին խմբերգը՝



երգելով՝ կ'ուզէ ըլլալ ցնծութեան աւետարալս օրհնորդուն:

Աւելի'ն. բնութեան ձայնահունչ տարբերուն՝ աղբիւրներուն եւ լիճներուն, ովկիանին եւ դեաներուն եւ կենսահունչ այլ գեղումներու ձայների՛զը կ'ուզէ ըլլալ, վերափոխուի՛ն ձայնական գոյակցութեան եւ այն հանդամանքով, դառնալ համայնալար զգայնութեան խորհրդանիշ Չայնը, որ իր անպարագիծ հրճուանքովը շնչաւորէ եւ ոտոզէ զերթողներու ամայահեծ հոգին...

Եւ կը բաղձայ իւրացնել մինչեւ իսկ խոհական յատկանիշները անտառային մենութեան մէջ՝ հանդող այն լուսութեան, որ անձայնանիշ յայտնակերպումն է կեանքի սխրագործ հաւատքին. դառնալ հեղեղատի մը հնչտանուազ պիլուրիան եւ ձգտելով թռչուններու աղուահունչ երգին՝ կ'ուզէ ըլլալ ճարտութեան ճիշ մը շայն՝ եւ ցրուել՝ մահաթափած մասձումը, որ կը թառի զերթողներու հոգւոյն մէջ, ինչպէս ազոսա՝ շիրմաքարի մը վրայ...

Ո՛չ միայն բերականայ ձայներու իրացումով, այլ բնութեան բազմախայտ ձեւերուն եւ երանգներուն պարագրումով՝ նաեւ՝ բանաստեղծը կը տեսնայ վերահաստատակ կեանքի ցնծահոս քաղցրութիւնը՝ ցաւակոծ սրտերու մէջ—

Եւ ըլլայի Լոյս,	Զեւ,	Երանգ,
		Թրբըռում,
կեանքի փաղփում	պատմութեանը	
		Ժրքանի,
կենսաբազմիկ	հոգւոյն քրագն	
		անպատում.
եւ անձրեւէն	վերջ անարեւ ու	
		տրտում՝
հառաչածայն	անձրեւէն վերջ	
		Երբեմնի,
Յըշուլի ես	վայրկեաններ քրագնիկ,	
արեւաշող	ժրպիտ, ծափեր ու	
		Խնդում՝
բանաստեղծի	հոգիներուն մէջ	
		մենիկ <sup>13</sup> :

Կարելի է ըսել, թէ ա՛յս ձգտումով, Մեծարեց կրցած է գործնական հունի մէջ պահել «հոգին ու շուրին ու քարին հետ ապրելու» իր առաջադրանքը, բնութեան երանգային յատկանիշներուն հետ գուգորդելով իր զգայապաշտ խառնըւածքը:

Նկատելի է, թէ ըլլայի»ներու շերթողաշարին մէջ, բանաստեղծը հնարագոյն շարժով մը կրցած է սեւեռել համամարդկային տառապանքը եւ զայն վերջնձայնի բնագեղ դրուսութեամբ, որ նոյնքան սրտառու է, որքան «աջատաններու շուրին տակ» շատրուանային դեմանք գգեցած իր բուրումնաւետ ոգելընչումները, եւ նոյնքան միաթիւր, որքան «ծիրանի լոյսով, «կապոյտ ծուկերով եւ «խունկի թաւի մշուշով խորհրդապատկերում իր «կիրալվմուտէ»ի պահը:

Մեծարեց կրցած է հաստատել լայն հնարաւորութեամբ մը նաեւ մարդուն եւ բնութեան անբաղկատի յարակցութիւնը: «Ըլլայի»ներու շերթողաշարին մէջ, այս գոյգ երևույթները կը գոյակցին միախորհուրդ ցանկութեամբ, երջանկառիթ նոյն խոշային բուհտուող իրրեւ աւընչակից զգայութիւններ:

Կը վարարենք զնարաչունը իր բաղձանքներով, որոնց բնութենապաշտ պատկերացումներուն մէջ մենք կը զգանք շուրջ սաղարթին, շառալը ովկիանին եւ բուրմուռը հոգմածուփ ծաղիկներու:

Կը վերանանք համայնագեղ իր զգացումներով, որոնք կը ներգրաւեն մեզ ցնորաւետ գեղեցկութեամբ եւ կը համակեն մեր հոգին՝ անանձնական սիրոյ մեկնակտուէն ներմղուած:

Ծնորհիւ ա՛յս բարեյատկութեանց եւ բանաստեղծի գնատուր զգայաբանքին, «Հիւզ»ի խորհրդանշական կերպարին ընդմէջէն, Մեծարեց կրցած է ոգելուել վայելքի մը վերածել իր ըզմանքները, բաց պահելով իր հիւրընկալ մտքին զարպատը՝ համայնական ապրումներու աւընթեր, գեղապաշտ ըմբռումներու յաճախանքին...

ՅԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

1.— «Գիշերուան ցամբոքդը», Արտաշէս Յարութիւնեան, հրատարակչութիւն «Հայաստան», Երեւան, 1968, կազմող՝ Օճնիկ Փանիկեան, «Ասուպ մը», էջ 255.

2.— «Անանձնական»ին երգիչը՝ Մեծարեան, Մ. Թէօլեօեան, «Ազգակ» օրաթերթ, Երկուշաբթի, 23 Փետրուար 1981, էջ 4.

3.— «Միածան եւ Նոր տաղեր», Միսաք Մեծարեան, Բ. Տպագրութիւն, հրատարակիչ՝ Լ. Կոշկարեան, տպագրութիւն Յ. Մ. Սէթեան, Կ. Պոլիս, 1924, էջ 52.

4.— Նայն, էջ 91.

5.— Նայն, էջ 40.

6.— Նայն, էջ 89.

7.— «Երկերի ժողովածու», Միսաք Մեծարեան, Հայպետերատ, Երեւան, 1956, յառաջարանը, ծանօթագրութիւնները եւ թեօտի պատրաստումը վաերամ Ալագանի եւ վաղաբշակ Նորեանցի, խմբագիր Ազգումն Տարօնցի, «Ինքնագատութեան փորձ մը», էջ 281.

8.— «Միածան եւ Նոր տաղեր», Միսաք Մեծարեան, Բ. Տպագրութիւն, երատարակիչ՝ Լ. Կոշկարեան, տպագրութիւն Յ. Մ. Սէթեան, Կ. Պոլիս, 1924, էջ 102.

9.— Նայն, էջ 103.

10.— Նայն, էջ 106.

11.— Նայն, էջ 80.

12.— Նայն, էջ 107.

13.— Նայն, էջ 108.

## Ն՝ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ



## ՄԻԱԶՈՒԼՈՒՄ ԲՆՈՒԹԵԱՆ ԵՍԻՆ ՀԵՏ

*Ձայնը, դոյնն ու ձեւը կը խլրտին քերթոցին տառապեալ հոգիին մէջ: Գերազանցապէս զգայուն ու ներքին հրափառ աշխարհով բունկած՝ Մեծարեանց ինքզինք կը սպառէ արտաքին շարժուն աշխարհի մը խորը: Բանաստեղծին մեծնաւոր ու ամայի հոգին կը զգայ տարրերուն թրթռացումը ու կը թափանցէ անոնց ծալքերուն մէջ:*

Այգն է ծաղիկ երագով լի, ու բալամիզ՝ քեթեւօրէն.  
Մըշուշն անծալ զրվէծի պէս ամբարտակէն վար կը հոսի,  
Իր չըփոյթին մէջ կը շիկնի ոսկի աղջիկն արշալայսի՝  
Այգն է ծաղիկ երագով լի, ու բալամիզ՝ քեթեւօրէն:

*Բնութիւնը կը յուզէ զինք ու կը դառնայ աղբիւրը կեանքի: Կը տեսնէ հոգին շարժումը, ալիքներուն վազքը, մութին յորդ ալիքները: Կը լսէ ծաղիկներուն երգն ու թեւեակներուն նուազը, լուսին ձայնն ու ուռնիներուն լաջը՝*

... Ու կը լսեմ վարերէն թեւեակներու նըւազն ալ,  
Ջուրերուն վրայ թըրթըռուն,  
Ու կը լսեմ ծաղիկներուն ալ երգը,  
Ազազակ մը սիրածուփ՝  
Սահած ծոցէն դաշտերուն՝

Ուր ցաները կը վէտփէտին սիրատարփ,  
 Ուր երկինքն ալ կը բնանայ,  
 Կապոյտմեքու խորհուրդին մէջ երագելով  
 Վազորդայններն երջանիկ:

Բնութեան տարրերը, պատկերաւոր ներկայութենէն անդին, իրենց ջր-  
 դարկուած շարժումներուն խաղով կ'առինքնն զինք: Տարրերու այդ շարժու-  
 մին մէջ ան կը տեսնէ կեանքի խորհուրդը ու իր նուազուն հոգին կը լինայ՝  
 նոյնանայով այդ խորհրդաւոր շարժումին հետ:

Մեծարեհնց շիման մէջ կը մանէ մարդկայնացած, բարութեամբ լի, կեն-  
 դանութիւն ներշնչող այդ խօսուն աշխարհին հետ: Բնութեան ձայներէն ծնած  
 երաժշտութիւնը, երանգներէն առաջացած պատասաններն ու ձեւերու ներ-  
 դաշնակ շարժումը համանուագ մը կը ստեղծեն, երբ բանաստեղծին գրչին  
 տակ բառերու կը վերածուին:

Մեծարեհնց իր եռէն մեկնելով կը միամուլուի ստեղծագործութիւննե-  
 րուն ամէնէն կատարելաբար հանդիսացող բնութեան եսին հետ: Թոյլ կու տայ,  
 որ իր հոգին թեւածէ անոր շուրջ ու երազներով հիւսէ իր կեանքին պատմու-  
 թիւնը: Իր թախտու կեանքէն լոյս սփռող երազը դիտակցուած երազն է, որուն  
 մէջնոցով կը զգտնէ հաւասարակշռուած, անկեղծ ու բարի Մեծարեհնցի եւր:

Բայց կը վախճամ որ նորէն  
 Խուսափի՝ լոյսն երագին,  
 Ու մըշուշներ գազտօրէն  
 Վայելքներու շուրջ յածին:

Կորսուող, մաշող ու անէացող զգայնութիւններ կը լարեն պահի, գոյնի,  
 ձեւի ու ձայնի այս դիւթական աշխարհը: Մաշող իր մարմինը կ'ապրի հալող  
 մոմերու, փախչող իրիկուաններու, շտապող լոյսերու, մթնցող հոգիներու եւ  
 անհետացող երազի արծաթ շողերու անգունները:

Ա՛հ, կը շտապեն, կը փախչի՛ն  
 Ճամբաներու լոյսերն ամէն:

Փախչող այդ զգայնութիւնները խաւարի ու լոյսի տեսական ու յարա-  
 փոփոխ թաւալումով կը պարուրեն իր հոգին: Կը ծնի խաղը կեանքի: Տիեզերքը  
 շարժումի մէջ գնող այդ մնայուն ու զգալի փոխարարութեան մէջ Մեծա-  
 լինց կը զգայ կեանքին Հնէքը: Կ'ապրի երկունքը Բանին ու, անոր անծայրա-  
 ծիր հորիզոնին վրայ տարածուած՝ կ'երկնէ զինք անմահացնող երկը:

Ան կը սիրէ խաւարը ու խաւարին մէջ կը ձգտի լոյսին: Խաւարը իրակա-  
 նութիւնն է իր կեանքին՝ դառն, զինք մահուան ճիւղաններուն զիրկը նետող  
 պահը, իսկ լոյսը անուրջն է, յոյսէ-է, ստեղծագործութիւնն է:

Բոլոր լոյսերն ալ մարեցան հետգհետ,  
 Եւ կը սիրեմ այս խաւարը տառապագին,  
 Որ վիշտ մը լայն՝ սիրտը կուրծէս զուրս կը նետէ,  
 Եւ ես կ'ըմպեմ սեւ հեշտանքը ցաւատ կեանքին:

Վիշտը կեանքի, ապրելու տենչը կը վառէ իր մէջ ու քերթողը վշտին  
 խորերէն կը բացուի կեանքին:

Ու պիտի ապրի՛մ, վիշտը նոր ուժեր  
 Կը բերէ յանկարծ հագուայ սիրափէր.  
 Կեանքին կը դառնամ դեռ չըրած զիշեր:

Իր ներաշխարհին մէջ Հոսոյ այդ խաւարին խորհրէն Մեծարենց մերթ լոյսի շողեր ու մերթ բոցավառ ու վնէիս ցոլեր կը փնտռէ: Լոյսի երփներանգ բոցերը կը փարատեն խաւարը ու իրենց խօլական վազքին մէջ շունչ ու կենդանութիւն կու տան իրերուն ու մարդերուն: Եւ մենք կը տեսնենք ու կը զգանք պատկերներու ետին Քաջնուած շարժումները: Լոյսի շողերուն թափանցիկութեան տակ կը գծազրուի բնութիւնը իր նրբագոյն մեկերով, շարժումով ու շունչով: Բանաստեղծին Հոգիին պրիմալէն տնցած բնութիւնը մեկամաղձու ու խորհրդաւոր պահերով մարմնաւորուած է:

Կեանքի ու մահուան Հակադրութիւնը կը գրեւորուի նաև Հեշտագին գրգիռներու ու ցաւի հե. քերու Հակադրութեամբ: Հիւժող իր մարմինը երբեք չզգաց Հեշտանքը կեանքին: Չզգաց իր մարմինը շեքմացնող Համբոյրը ու չապրեցաւ կենց մարմնէն ծնող խոովքը, սակայն զանոնք փոխարինեց շփման մէջ մանկելով բնութեան Քաջուն խաղին հետ: Գարունը մեզրահամ բաժակը քսեց իր բերնին, զգաց Համբոյրը Հովին, ծծեց Հովին ճամբուն լեղի սարսափը և գիրկին մէջ գտաւ յուստոց առուն:

Համբոյրիդ, գիշեր, պատուեանս է քաց,  
Թո՛ղ որ լիառատ ծրծեմ՝ հեշտագիծ  
Կաթը մեզմանս յոյսիդ տարփամէին՝  
Ու զով շագնորդ կախարդանքը քաց:

Մեծարենց իր ցուր կը լքանցէ, երբ իր վշտին խորհրէն կը զգայ կեանքի Հեշտանքը: Հասունող մութի քուլաներուն մէջէն արփիին բացուող քերթողը, առարկայական աշխարհէն վերանայով՝ բարութեան ու գոհունակութեան ազգազակով կը հրւսէ կեանքին գովքը: Ան Հոգեպարար մարզկայնականութեամբ կը լսէ աստուածային ժայնին շայնքը:

Ու յոգնած եմ  
Ըստպանչէն տեհչամբներու մեղրին անուշ,  
Ու տարածամ այս յաժուսիմ մէջ երջանի՛կ պիտի ըլլամ  
Եթէ բունեղ խա՛յր իսկ բերեմ  
Ուզեմուր մեղումներն իմ տեհչամբներու:

Բնութեան պահերը կենդանացնելով, զանոնք մասնումբ ոլորաներուն մէջ տեղադրելով տիեզերքին Հաղորդուող քերթողին Հոգին իր լիութեան կը Հասնի, երբ ան կը ծաւալի տարածութիւններու վրայ և, բնութեան տարբերուն հետ նոյնանայով՝ կը նոյնանայ տիեզերական էութեան հետ: Հոս կը մէկտեղուին բոլոր ժայներն ու քաղցրութիւնները, աստուպանքներն ու սէրերը, կը տեղդուի Համանուազը-կեանքին ու անուրջները իրականութիւն կը գառնան, երբ Մեծարենց կը գոռնայ ազրիւրը կեանքի:

Երգն ըլլայի քաշուններում ծնծգածայն,  
ու զանեայի ուրախութեան ճիշ մը լայն,  
բանաստեղծի եղբներում մէջ ճրկում,

Պերն ու գունագեղ, ազնուական ու նրբերանգ բուսերով, իր լոյսի շողերուն նման յատակ ու շինջ կերպով ան կը յարնէ իր քերթուածները այնպէս՝ ինչպէս իր բոցավառ ու լուսարագ Հոգին պիտի սփռէ պատկերներու զուարթ, լուսաճանաչ ու թափանցիկ տարրերուն վրայ:

## ԲՈՒՐՄՈՒՆՔԻ ԳԻՇԵՐ...

Գրանգանիս վրայ  
 Ձեռք մը անոնս կը տարածէ լուսփուններ բաւիշէ  
 Եւ ամէն խոհ  
 Մքնշազի էջերուն  
 Կ'արձանագրէ  
 Իր քերթուածը սպիտակ...

Անվերադարձ մեկնողներու որսման  
 շամբաներն ո՞ր հեռացան...

Խորշակի կոյր հայածանփէն սեպեկ՝  
 Գիւղն իր ծաղիկները բառը  
 Անուրդի հանեց:  
 Օ՛, քաղաքի հարսնեւորներ անծաման,  
 Գիճիի գոյն  
 Արցունքներուն իմ գիւղիս՝  
 Ո՞վ պիտի իր տժգոյն այտերն երկարէ...

Գինաբբուփի վազմշակա՞ն եղբայրներ,  
 Տետֆ,  
 Կիրակմութի գիշերին,  
 Վարդերու միտոիք լուսեամբ արիւնզ՝  
 Գա՛զը է դեռ բոյբը հազիմ:

Ամէն ծաղիկ,  
 Անձաններու տնուարաց փէշերուն՝  
 Կտակ մը յուշ կը բուրէ-  
 Գաբճանաւէտ երկունքի հեռունքէն անմատոյց,  
 Կ'արտաշնչէ սակաւին  
 Բո՛յբն աստղերու արցունքին...

Եւ անլեզու զանգերու տառուածամերձ բարբառով,  
 Իր հիւղին հո՛վ՝  
 Մտուերներու խուսափուկ շշուկներէն  
 Ու սօսիներու սօսափն հետ մահամերձ,  
 Ազօբներ կը համարէ՛  
 Այր մը քերթոզ՝ Միսաք Մեծարեանց...

ՓԱՆՈՍ ՃՆՐԱՆԵԱՆ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

# ԽՈՐԱՍՈՒԶՈՒՄՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԸ

Միսօք Մեծարենցի գրական ժառանգութիւնը Հանրայայտ եւ բաւականաչափ ուսումնասիրուած է, այսինքն բնութագրուած՝ իր յատկանշական կողմերով: Աւայժմ, բանաստեղծի ծննդեան 100ամեակի առիթով, նրա կենսաքին ու ստեղծագործութեանը վերստին ու այսօրուայ դիրքերից անդրադառնալը առաջին հերթին նշանակուած է նորանոր վկայութիւններ արձանագրել այն մասին, թէ այլեւայլ միջավայրերում ինչպիսի հետքեր է թողել մեծարենցեան ժառանգութիւնը եւ ինչպիսի տրամադրութիւններ ու վերարժմունք յարուցել իր նկատմամբ:

Տողերիս գրողի պարագայում դա նշանակում է նախ վերլիւնլ, թէ ինչպիսի պայմաններում է Մեծարենցի անունը մուտք գործել Հայաստանեան միջավայր:

Արդ, մի կողմ դնելով 1920ական թուերի իրականութիւնը, վտահօրէն կարելի է նշել, որ Մեծարենցի եւ արեւմտահայ միւս զրօշների ժողովրդականացման ասպարէզում յատուկ տեղ են բռնում 1930-36 թուականները, մի շարք առարկայական ու նաեւ ենթակայական պատճառներով, որոնք սերտորէն միահիւսուած են իրար:

Մէկ կողմից պէտք է յիշել, որ Նրեւանում այդ տարիներին է, որ փաստօրէն մուշակարուց ու միանգամից անօրինակ թափ ստացաւ Հրատարակչական գործը առհասարակ՝ իր բաղաճնիւղ արտայայտութիւններով, որը եւ հիմք ծառայեց անմիջական ու զանազան նախամտնութիւնների համար: Միաժամանակ պէտք է

յիշել, որ Հրատարակչական գործի վարելներն ու տեղական քաղաքականութիւն մշակողները զգալի թուով այնպիսի մարդիկ էին, որոնք ինքնաբերաբար չէին կարող հեշտութեամբ լրջանցել արեւմտահայ մշակոյթը: Բացի այդ, գրողների շարքում իրենց չափով ժայն ու ասելիք ունեցողներ կային, որոնք զգացական կամ այլ նկատառումներով չահագրգռուած էին, որպէսզի Արեւմտահայ գրականութիւնը եւս Հետեւողականօրէն Հրատարակուի ու իր պատշաճ տեղն ունենայ: Այդ իմաստով կարելի է յիշել առաջին հերթին Վ. Ալազանի, Վ. Նորենցի, Ս. Տարօնցու անունները: Աւհաւ, յիշուած ու չիշուած Հանգամանքները նպաստում էին, որ որոշակի միջնորդութեամբ որոշակի ուղղութեամբ:

Այդ ասպարէզում գրական մամուլը, ի հարկէ, իր տեղն ուներ՝ այլեւայլ քննադատական մեծ ու փոքր արձագանգներով: Բայց ամէնից վճռականը, անկասկած, գրողների բուն երկերի հրատարակութիւնն էր: Այսպէս, 1930ին լոյս տեսաւ «Արեւմտահայ բանաստեղծներ» բաւական ստուար ու ներկայանալի ժողովածուն: 1931ին սկսուեց Յակոբ Պարոնեանի բազմաշաբաթ «Միկրի» ժողովածուի հրատարակութիւնը, միին հաշուով՝ տարեկան մէկ հատորով, սկզբնական քննադատական շարքում: 1935ին տպուեցին Նրուանդ Օտեանի մեծածաւալ «Միկրի» ժողովածուն եւ Միպլիի «Բերքուածները»: Չապէլ Եսայանն էլ՝ իր հերթին Այնուհետեւ, նախապատահեցական օրերի գոյուհամաձայն, «Ելայտնաբերուեցին» Մերեն-

ցի պատմավէպերը, եւ այլն:

Բանաստեղծութեան բնագաւառում առաւել յատկանշականը Պետրոս Դուբեանի (1932 եւ 36 թուերին) ու Միսաք Մեծարենցի (1934) երկերի խնամուած տպագրութիւնն էր: Հետագայում թերեւս նաեւ միւս անուանի բանաստեղծների երկերը հերթով հրատարակուէին, կթէ 1936-38 թուականների հարածանքներն ու ջարդերը տեղի չունենային եւ գրական-հրատարակչական կեանքը այնքան շլիառուէր ու շանդամալուծուէր: Դրանով հանդերձ, ինքնին ուշադրաւ է, որ բանաստեղծական երկերի հատորային հրատարակութիւնները սկսուեցին յատկապէս Դուբեանով ու Մեծարենցով, իրբեւ ճշգրտաբանական կապեր ու շեշտուածութիւն չունեցած հեղինակների, իր տեսակի «զուտ բանաստեղծների»:

Տեղին է յիշել, որ առանձին հատորով չհրատարակուած արեւմտահայ միւս բանաստեղծները եւս երբեք բոլորովին անծանօթների շարքում չեն մնացել, զոնէ ամէնէն նշանաւորները: Դպրոցական ուսուցման շրջանակում իւրաքանչիւրը իր բաժինն է ունեցել, ըստ երկրում բնդուեւած ընդհանուր չափանիշների: Եւ պատահական չէ, որ 1942ին, օրինակ, Պարոյր Սեւակը յատուկ ուսումնասիրութեան նիւթ է դարձրել Դանիէլ Վարուժանի ստեղծագործութիւնը: Դա ակնյայտօրէն իրաւ էր ո՛չ միայն նրա անձնական նախասիրութիւնից, այլև զբաղը հասարակութեան մէջ արդէն առկայ որոշակի մթնոլորտից ու սրամադրութիւններից, իրբեւ աւելի առաջ շարժուելու մթնոլորտային նոխապայման:

Ի Հարկէ, արեւմտահայ բանաստեղծական մշակութի նմոշները տարածում են զտեղի աստիճանաբար, բնակչութեան ուարեր խաւերում տարբեր չափով եւ ուժով նու թեւամբ: Այդ մակոյթիին ամէն ոգեւանօթացել ու ընտելացել է, իբրբեւ կանոն, իր անհատական միջավայրի պայմանների ու ճաշակի համաձայն: Այսպէս, տողերիս գրողի համար հանդուցային է 1933ի աշունը, երբ մայրենի լեզուի ու գրականութեան (միաժամանակ նաեւ... մաթեմատիկայի) ուսուցիչս այնպիսիներէց էր, որոնք գիտելիքների, մանաւանդ գրական գիտելիքների շտեմարան են

հանդիսանում: Ու թէեւ, իրերի բերմամբ վեց ամիս մնաց մեր ժօտ, անհամար տարիների հետքեր է թողել գիտակցութեանս մէջ: Մանաւանդ արտադասարանային անմիջական ու անկաշկանդ գրոյցների, գրական ինքնագործ փոքր հաւաքոյթների եւ այլնի միջոցով նա խթանեց նոյնիսկ միջակ կամ այլապէս անտարբեր աշակերտների գրական հետաքրքրութիւնը: Բաժանորդագրութեամբ ստանում էր գրական ընթացիկ պարբերականներ, ունէր նորատիպ արժէքաւոր ու հազուագիւտ գրքեր, ըստ երեւոյթիւն հիմնովին իրազեկ էր նաեւ Արեւմտահայ գրականութեանը: Նրանից վերջնեղով եմ կարդացել, օրինակ, «Արեւմտահայ բանաստեղծներ» ժողովածուն: Իրականում, այդ եւ նման պատեհութիւններն էին հոյ ստեղծում հետագայ դրբային մերձեցումների համար:

Պարզ է, որ իմ տարբիի հասարակութեանը ամէնից առաջ մատչելի էին դառնում բանաստեղծական երկերի առաւել յստակ ու արտայայտիչ, յիշողութեան մէջ մնացող եւ հաղորդականութիւն ստեղծող տողերը, ասենք՝ Մկրտիչ Աճէճեանի «Իրամը» («Ձորս կիմ մէկ մարդուն ես կը իւրատամ՝ թէ ունիս դրամ»), իսկ ապա միայն ուրիշների աւելի կամ պակաս բազմապարկ, բազմաշերտ ու մուշապատ դարձուածքները: Ահա թէ ինչու պատասխանների վայելող բանաստեղծը Աւետիք Իսահակեանն էր, իր սուր, ազդու, անմիջական, տպաւորիչ ու թեւաւոր արտայայտութիւնների անօրինակ ու անմրցելի առատութեան շնորհիւ: (Էել ինչն՝ ու ես քարը թողնում քարի վրայ, քար-աշխարհ», «Մուրճ կամ գնդակ պիտի լինիս— հշմարտութիւն լիայ ուրիշ», «Անհուն վրժի եւ անլուծութեան պատգամն եմ վառում ես ձեր սրտերում», «Լսի՛ր, տգա՛ս, ինձ կը բազնս անյայտ մի տեղ, անճշան, սք չիմանան, մարդիկ զգան՝ շիրիս քարը գողանան», «Եարիսու լմակոյակով յամնը ի՛ր ծովին, քան թէ հաւատայ կնոջ երդումին», «Այսօր բեզ մարդիկ եղիւրբներից վի ի բարձրացնեն, վաղը նոյն մարդիկ սմբակների տակ նմլուս եւամար քնդ վար կը նետեն», եւ այդպէս շա-



րունակ՝ իսահակեանական ժառագու-  
թեան սկիզբից մինչև վերջը):

Արդ, Մ. Մեծարենցը, ըստ էութեան,  
պարզապէր ու դիրքամասշէի բանաս-  
տեղծներէից չէ եւ նրան ժողովնայու ճա-  
նապարհը երբեք չի կարող անմիջական ու  
կարճ լինել: Գրանով Հանդերձ, նա եւ Պ.  
Գուրեանը, միաժամանակ, առանձին տեղ  
էին բռնում նորահաս ընթերցողներին  
մտքում ու սրտում, առաւելապէս իրենց  
միեակուած անձնական դասն ճակա-  
տագրի բերումով, անկախ իրենց բուն  
գրականութեան ու գրական արուեստի  
բնոյթից: Մեծ մասամբ մօրուքաւոր կամ  
կիսամօրուքաւոր պատկառապաշու դա-  
սական գրողներին նկարներին վարժուած  
պատանիները, Մեծարենցի ու Գուրեանի  
նկարները տեսնելիս, յատուկ ակնածան-  
քով էին լցում նրանց Հանդէպ, մօտ ու  
Հարագատ զգում, իրբեւ իր տեսլիքի ա-  
ւել գորարքներին: Այսքանը յիշելիս, ան-  
կարելի է աչքաթող անել, որ այդ երկու  
բանաստեղծները, իրենց երկերի դիրքա-  
մաստեղծութեան իմաստով, արամագծօ-  
րէն Հակոտակ դիրքերում են գտնուում:  
Գուրեանը մատչելի է բոլորին, առանց  
տարբերակի խորութեան, մինչդեռ եր-  
բանի Համարեա՝ թէ պատահի Մեծարեն-  
ցին լրջօրէն Հասկանալու Համար տարբէր  
ու կեանքի փորձառութիւն է Հարկաւոր,  
նաեւ արտակարգ կամ զէթ ուշադիր խո-  
րթափանցութիւն:

Այդ կուպակցութեամբ, արժէ նշել  
նաեւ Հետեւեալը: Եւրոպայապատերազմեան  
Հայաստանում Մ. Մեծարենցի երկերը,  
գրեթէ լրիւ, գտնուում էին ընթերցողների  
տրամադրութեան տակ եւ մատչելի էին  
ամէն մարդու. կարդացողը կարդում, իսկ  
չկարդացողն էլ չէր կարդում: Գրասէր  
մարդկանց մօտ Մեծարենցի անուր իս-  
կապէս որ որոշ արտասովոր ու ծանրակը-  
շիւ բան էր նշանակում: Բայց եթէ փոր-  
ձնէր ընդհանուր յայտարարի բերել նրա  
եւ, առնչք, Գ. Վարուժանի վերաբերեալ  
լրջանառութեան մէջ գտնուած այլեւայլ  
խօսակցութիւններն ու կարծիքները, ան-  
միջապէս կ'երեւայ, որ իր տեղի՞նք գոր-  
ծութեան միայն փո՛քը մասով ընթերցող  
Հասարակութեանը ծանօթ Վարուժանի  
վարիւր ամէնից բարձրն էր, առաջնութիւն

վայելելու չափ: Գրա պատճառը Հաւա-  
նարար այն էր, որ իր Հերթին նոյնպէս  
բարդազիր կամ կիսոպին բարդազիր Վա-  
րուժանի խօսքը բացուած է արտաքին աշ-  
խարհի ուղղութեամբ, աւելի Հաղորդա-  
կան ու թելադրական է, թէկուզ Հենց իր  
ճարտասանական երակով: Մինչդեռ,  
առնչք, Մեծարենցը իր Հայեացքով զէպի  
ներս ու խորքն է ուղղուած, տեւական  
խորատուզումների ու ներբրանդների Հե-  
տամուտ, որոնց յարուցած Հետաքրքրու-  
թիւնը փաստօրէն չի կարող բառի բուն  
իմաստով լայն ու դանդուածային երե-  
ւոյթ դառնալ, որքան էլ Համակրելի լինի  
բանաստեղծի ընդհանուր պատկերն ինք-  
նին, իր բոլոր կողմերով:

Վարուժանի վայելած Համբաւի զա-  
նազան նշաններից մէկը կարելի է Համա-  
րել եւ այն, որ նոյնիսկ Հեռաւոր գիւղե-  
րում նորածինների անունը «Վարու-  
ժան» էին դնում: Ծիչդ է, ոչ յանձախաչէպ,  
բայց եղած չիչն էլ ինքնին յատկանշական  
էր: Արդ, այդ անունը տարածուած էր  
նախ իր նորայայտ, անտփօր ու Հեշտա-  
լուր բնոյթի բերումով: Իսկ բառն ինքը,  
իրբեւ սոսկ բառ, բառարաններում բա-  
նաստեղծից առա՛ջ էլ կար: Բայց անմիջե-  
լի է, որ Հասարակ բառը յատուկ անուն  
դարձաւ միայն Հանրաճանաչ բանաս-  
տեղծի նախածնունդութեամբ: Եւ ահա՛,  
«Վարուժան» անունը Հայոց բնաշար-  
ուած եւս աստիճանաբար տեղ էր գրաւում  
ակնյայտօրէն նրա՛նց ջանքերով, ուժքեր,  
այսպէս թէ այնպէս, տեղեակ էին բանաս-  
տեղծի վաստակին, զնահատում էին այդ  
վաստակը եւ կամենում, որ նրա գործին  
զուգահեռ ժողովրդականացուի նաեւ  
անունը:



Եթէ երբեւէ ինձ առաջարկուելու լի-  
նէր մէկ-երկու բառով բնութագրել Մե-  
ծարենցի առաւել ցայտուն գրական յատ-  
կանիւրը, առանց վարանելու կ'աւտի՛՛ ճիւղ-  
բասուզումների բանաստեղծը», ընդգիծն  
իմանալով Հանդերձ, որ մէկ-երկու բա-  
ռով առՀասարակ անկարելի է բնորոշել եւ  
ընդգրկել ոեւէ, այն էլ տաղանդաւոր բա-  
նաստեղծի ամբողջ ստեղծագործու-  
թիւնը: Գանգի իրականութեան մէջ կան

նոյն պիտակով նշուող այլևայլ բովան-  
դակային տարատեսակներ, տուեալ դէպ-  
քում՝ խորատուգումներ եւ խորատու-  
գումներ, միմեանցից տարբեր՝ թէ՛ մտքի  
չարժման ուղղութեամբ եւ թէ՛ արդիւնք-  
ներով:

Մեծարենցի պարագայում, օրինակ,  
Նկատելի է ոչ թէ անպայման որեւէ հե-  
ռաւոր կէտի հասնելու եւ այդ կապակե-  
ցութեամբ եզրագակիչ բանաձեւումներ  
հռչակելու սեւեռուն մղումը, այլ շրջա-  
պատող՝ շնչաւոր թէ անշունչ իրերի մէջ  
տարբերայնօրէն թափանցելու, նրանց  
գրկում կողմնորոշուելու եւ վերակողմ-  
նորոշուելու, երեւոյթների փոխադարձ  
առընդմիջները իր գիտանկիւնից  
վկայելու բնածին տենչը: Մի պահ դա  
կարող է զուտ կրուտորական ու շարժու-  
մից խուսափող կամ այն զսպող վերաբեր-  
մունք թուալ, բայց երբ գիտենք, թէ թա-  
փանցելն ու որոնելը ինքնին արդէն ինչ-  
պիսի հոգեւոր շարժումների եւ խթանում-  
ների հետ կապուած հոգեւոր շարժում է,  
բանաստեղծի վաստակը կարող ենք չա-  
փել նաեւ կրուտորականից տարբեր ու  
բարձր շափանիչներով:

Արդ, իրերի մէջ թափանցելը նշանա-  
կում է նորանոր յատկութիւններ ու յատ-  
կանիչներ յայտնաբերել եւ համապա-  
տասխան բառերի ու պատկերների միջո-  
ցով գրանք բանաստեղծօրէն ամփոփել ու  
արձանագրել: Հենց այդ բանն էլ տես-  
նում ենք Մեծարենցի ժօտ, երբ ամբողջ-  
լական գոյները բազմաբուռելով երանդա-  
ւորում են, նրբանալով նրբանում, եր-  
բեմն սովորական տեսողութեան դաշտից  
հեռանալու չափ, երբ հնչուն ձայները  
լուկաների են վերածում ու ինքնաթօ-  
տութեան, երբ մարդկային ապրումները  
ներկայանում են իրենց խորագոյն ար-  
տայայտութիւններով: Եւ քանի որ առկայ  
միակերտ ու անճիշտ քառեր, իրենց  
բնութեամբ իսկ, ի վիճակի չեն լիովին  
արտացոլել բանաստեղծի՝ ընկալած  
պատկերային ճիշտագործները, երբեմն  
որդ թանձրակոյտեր են դոյանում, հա-  
մադարկային արագութեամբ կարգ գու-  
մարուող ամական բառերի պարաճառով:  
Այդ կուտակումներն ըստ էութեան անա-  
խուսափելի են, թէեւ վարպետ ձեռքով

յաղթահարելի, երբ բանաստեղծական  
խորատուգումների ինքնարուխ նախաոր-  
ութիւնն է իշխում բանաստեղծի մէջ:

Մեծարենցի թափանցողական ոգին  
այսօրուայ դիրքերից ընկալելու համար՝  
աւելորդ չէ դիմել մի այժմէական օրինա-  
կի: Տարիներ առաջ խորհրդային երկրում,  
այդ թւում եւ Հայաստանում, հրապարա-  
կային խօսակցութեան նիւթ էր կենտրոն  
«լիրիկներին» (քնարերգութեան) եւ «Ֆի-  
զիկներին» (Ֆիզիկոսների) տեղն ու փոխ-  
յարարերութիւնը որոշելու հարցը: Ի հար-  
կէ, այդ հարցը գոյութիւն ունէր եւ ունի  
ո՛չ միայն այնտեղ, այլեւ՝ դրեթէ ամբողջ  
այխարհում, մասնաւանդ այն երկրնե-  
րում, որտեղ ընկան ու տեխնիկական  
գիտութիւնների ծաւալումն թափել եւ  
նրանց գործնական կիրառումները, կա-  
րելի է տեսլ, աննախընթաց մակարդակը  
հարցականի տակ են դնում հոգեւոր գոր-  
ծունէութեան աւանդական ընթացքի  
հնարաւորութիւնը: Բայց քանի որ յիշեալ  
երկրում իւրաքանչիւր մեծ կամ փոքր  
հարց առաւելապէս արշապային ու լո-  
գուհային (նշանախօսքային) մակար-  
դակով «լուծելու» պարտադիր մոլու-  
թիւնը շէտուած սովորութիւն է, խօսակ-  
ցութիւնն էլ աւելի բարձրաձայն եղաւ,  
քան որեւէ այլ տեղ:

Հարցի էութիւնն այն է, թէ, ընդհան-  
րացուած ու կոպիտ ձեւով ասած, Ֆիզի-  
կայի եւ յարակից ճշգրիտ գիտութիւն-  
ների զարգացումը որքանո՞վ է ազդում  
առհասարակ քնարերգութեան գոյու-  
թեան ու նրա որակի վրայ: Բանաստեղծի  
ժօտ ի՞նչն է մեռւմ եւ ի՞նչը՝ փորուած:  
Առանց տուեալ հարցի քննութեան մէջ  
խորանալու էլ, կարելի է ձօնադրապէս  
պնդել, որ ժամանակի ընթացքում իւրա-  
քանչիւր մարդ, ինչպէս եւ իւրաքանչիւր  
բանաստեղծ, իրբեւ մարդ, եթէ իր ընդ-  
հանուր կեցութեամբ կամ այդ կեցու-  
թեան պայմաններով դրեթէ անփոփոխ է  
մնում կամ գանդալ է փոխուած, ապա  
այսպէս թէ այնպէս անպայման փոխում  
է, որեւէ աստիճանով, նրա տեսանկիւնը  
Տեսանկեան փոփոխութիւնն էլ ինքնա-  
բերաբար պայմանաւորում է, միւս  
երեւոյթների շարքում, նաեւ բանաստեղ-  
ծական ընկալումների բազմազանութիւն

ըբ, ինչպէս էլ որ այն արասայայտուելու լինի:

Այսօր, օրինակ, դիտական Հնաս-  
խուզումները հիմնական ու տարածուած  
ուզումներն են անասնաբուծական փոքրի մէջ  
առաւել փոքրը գտնելու եւ արտնելու՝  
հրէն է (կայ նաեւ մեծից գուրս մեծու-  
թիւն յայտնարեքելու հակասակ, թէև  
նուազ շնչտուած հրէքը), իր էլիկարտնային  
գարձանահարաչ արդիւնքներով: Ուշադը-  
րուեն այն է, առանց դրա մէջ անպայման  
անմիջական փոխադրելու թիւն տեսնելու  
արամադրութեան, որ նոյն ժամանակ  
գրականութեան ուղարտում ե՛ւս նկատ-  
ւում է ընկալելու երեւոյթների մէջ նո-  
րայայտ ենթարկելոյթներ արմատագրե-  
լու, ժանրամատուցութիւնների ներսում  
խորանայու, գրանք օրէն է կերպ իմաս-  
տաւորելու ձգտումը: Այդպէս է, այս կամ  
այն շափով, գրեթէ ամէնուրեք: Այդպէս է  
նաեւ Հայաստանում՝ բանաստեղծու-  
թեան ու արձակի, նաեւ գրականագի-  
տութեան քննադատում: Այդ հողի վրայ  
են գոյանում եւ ընթացիկ գանհակացո-  
ղութիւնները, յոյսերն ու յուսախաբու-  
թիւնները: Խորացման միտումը, տեղին է  
նշել, անպայման նկատելի է նաեւ  
սփիւռքահայ նորագոյն աչքի ընկնող բա-  
նաստեղծական շարժարանքների մէջ, այ-  
լեւայլ գրեւորումներով:

Բայց եթէ մերօրեայ խորասուզում-  
ների սերը բացարեւելու լինենք մտաւոր  
ու իմացական տեսանկեան իր տեսակի  
գանդուածային փոփոխութեան թելադ-  
րանքներով, այդ ղէպով ինչպէ՞ս բա-  
ցարտել մեզանից 80 տարի առաջույն մե-  
ծարեմեցեան երևոյթը: Ի հարկէ, նրա  
ապրած ժամանակաշրջանը խապան նախ-  
նազար չէր: Այն ժամանակն էլ տեսան-  
կիւն էր փոխոււմ, այն էլ մեծ արագու-  
թեան: Եւ Հնոց բանաստեղծի շափածոյ  
երկերի ու յօդուածների մէջ նկատուող  
որոշ առանձին ակնարկումներ վկայում  
են, որ նա եւս քաղաքագրական էր այդ ամե-  
նին: Այդուհանդերձ, խորասուզումների  
ստպարելու մեծարեմեքը համարեա՛  
կապի, ինքնուրոյն ու բնածին երևույթ է  
իր ժամանակի ու միջավայրի եւ այլնի  
համեմատ, նաեւ նրանից առաջ եղած ու  
նրանից յետոյ ընթացող ժամանակների

շրջանակում:

Ճիշդ է, իւրաքանչիւր խնդրական բա-  
նաստեղծ խորասուզման որոշակի փորձ  
ուճի, առանց թափանցողական հրէքի՝  
բանաստեղծ չկայ: Բայց, դրա կողքին,  
միշտ էլ կայ լափի ու ասարողութեան,  
բնորոշ յատկութեան հարց: Ահա թէ ինչու  
աչքի է ընկնում Մեծարեմեքի առաւելա-  
պէս թափանցողական ու նրբերանգային  
կողմը:

Կենսագրական առեւանջներից յայտնի  
է, թէ բանաստեղծն ինչպիսի մեծ կարծիք  
ուճէր Գրիգոր Նարեկացու մասին, ինչ-  
պիսի խոր հարազատութիւն էր գգում  
նրա հանդէպ: Դա եւս անկարելի է պա-  
տահական ու պարագայական հրազու-  
րանք համարել: Բանդի Նարեկացին եւս  
նայն զծի վրայ է գտնոււմ, ամէն ինչ  
տարբազարեքելու իմաստով: Միայն թէ  
նրա խօսքի փայլատակող երանդներն ու  
ենթամայները այնքան թանկ ու շնոր-  
ւած էին, որ իրենց հերթին ինքնուրոյն  
գոյներ ու մայներ էին դառնում, արդէն  
եղածին նորերն աւելացնելով: Մինչդեռ  
Մեծարեմեքի երանդներն ու ենթամայները  
միշտ մնում են այդպիսի, խօսքային  
մեղմութեանը մեղմութիւն աւելացնելով,  
չառ նախասիրած միմուրտի:

Խորասուզումների կէտը շնչաւիթս,  
բնու յի բացուււմ Մեծարեմեքի ստեղ-  
ծագործութեան նաեւ արասայայտական  
գունազոլութիւնը: Այսպէս, նրա ողջու-  
թեան օրօք սպոււած շնչաւիթս եւ ճար  
տաղիւն ժողովածուներն արդէն իսկ  
վկայում էին, որ բանաստեղծը շարժման  
մէջ է եւ արագեմաց ան է ապրում, քայլ  
առ քայլ կատարելագործելով իր գրելա-  
մուքը, յենուելով, ի հարկէ, բնատուր տա-  
ղանդի ընձեռնած ներքին իմանողական  
ուճի վրայ: Այսօր Մեծարեմեքի ստեղծ,  
քննականարար, հասկանում ենք ժայն  
այն, ինչ որ նա կարճ ժամանակում ստեղ-  
ծել ու ժառագուցիւն է թողել: Բայց կաս-  
կածի ենթակայ չէ, որ երկար ապրելու եւ  
ստեղծագործելու հնարաւորութիւն ու-  
նենայու գէպոււմ՝ նա հետապայում ան-  
պայման կը ներկայանար իր ինքնութեան  
նորանոր կողմերով, որոնց սաղմերն ար-  
դէն կային սկզբնական փորձերի ու  
մեղքերումների համայնապատկերի մէջ:

Այսօրուայ ընթերցողներս, ունեցած ապաւորութիւնների հիման վրայ, վարժուած ենք Մեծարեանցի պատկերացրենիլու առաւելապէս իր մեղմաստութեան ու ցաւազին տրտմութեան ոլորտում: Մինչդեռ նրա խօսքը ժտուած էր նաև արտախարզ առողջ շնչոտերով («Ջրտուէ», «Բազմանէ», «Տո՛ւր ինձի, Տէ՛րք», եւ այլն): Մեծարեանց ասուելիս, Հասկանալի նկատառումով, սովորաբար միայն չափածոյ քնարերգութիւն է պատկերացուցու: Իսկ նա միտածամանակ գրել է նաև արձակ բանաստեղծութիւններ, որոնց կարող էին երբեք աւելանալ խակական արձակ էջեր: Բանաստեղծը գրել է նոյնիսկ մանկական ոտանաւորներ: Նրա յօդուածներում չի բացակայում երգիծական բաբախուն տարրը: Մի կողմ գրած այն, որ այդ յօդուածներում Մեծարեանցը ներկայանում է մի շարք օրինակելի կողմերով, — իրբեւ Հասուն ու զգաստ միտք, արժանապատուութեան տեր բանավիճող դէմք, զուսպ ու տրամաբանուած ձևակերպումների վարժ գրիչ: Ի Հարկէ, յօդուածներ նա քիչ է գրել, նրանից՝ աւելին չէր էլ կարելի սպասել, իրեն Հրապարակախօս կամ արձեստով քննադատ չի համարել: Բայց Հրապարակային խօսք սանձու զիտակցութիւն անպայման ունեցել է, բաւական խոստումնային մակարդակով եւ ուղղութեամբ: Իսկ ժնմեմագատութեան փորձ մը՝ յօդուածը իտպապէ՛ս որ եզակի է իր երևան գալու եւ ներկայութիւն դառնալու հանգամանքով, որքան յայտնի է: Թէև զա էլ պատահական չէ, քանի որ ուրիշներից աւելի Հենց յատկապէս Մեծարեանցի ստեղծագործութիւնն ունէր յաւելեալ կարգով բացատրուելու, վերլուծուելու, ներկայացուելու կարիք: Երբ ընթերցողները դժուարանում էին Հասկանալ Հրամցուած շարադրանքը, Հեղինակը օգնութեան էր հասնում նրանց:

Միտք Մեծարեանցն այն Հայ սոցմիկ գրողներից է, որոնք թէև իրերի բերմամբ գրականութեան զաւտ են մտել ու գրա-

կանութիւն մշակել Կ. Պոլսի իւրայատուկ աշխարհաբարձրացիական միջավայրում, իրականում Հայաստանեան բնաշխարհի ծնունդ են, երբեմնի Հայրենարնակ Հայութեան բնական ու Հարազատ շարունակութիւն: Այդ պարագան, անկասկած, իր բաժին դերն է խաղացել յիշել կարգի գրողների ու Հենց Մեծարեանցի թէ՛ անձնական կողմնորոշումների եւ թէ՛ ստեղծագործական մղումների ու ձեռքբերումների ոլորտում, իրբեւ խթանիչ գործոն: Առանց նրանց Համապատասխան գրաւոր յիշատակումների, Հայաստանիցի որդւ կէտեր յաւիտենապէս Համբարձի մնային պատմութեան աւջեւ, բացակայ՝ ազգի հաւաքական յիշողութեան մատենանց:

Մեծարեանցը նաև, այն էլ մարտըղական կերպարանքով, զտարին բանաստեղծների դասին է պատկանում: Նա թեւ պատշաճ չափով անդրադարձել է Հայրենի աշխարհին ու Հայրենի մարդկանց, իրբեւ տեսադաշտի բազադրիչների, իրականում ուրիշների նման չի գրել, այլ ամէն ինչի նայել է իր սեփական Հայեացքով: Նա իր իսկ ապրումների ու պատկերացումների օրինակով՝ ներկայացրել է առհասարակ մարդ արարածն ու տիեզերքը, դէմ դիմաց, իրենց դոյութեանական մերկութեամբ ու առեղծուածային փոխարարելութիւններով: Զանացել է Հարազատութեան ու Հաշտութեան եզր գտնել տիեզերական բազադրիչների, այդ թւում մէ մարդու միջեւ, զիտակցելով Հանդերձ ողբերգութեան ու վշտի ընդհանրական ու ճակատագրական իրողութիւնը:

Մեծարեանցը առաջին Հերթին զգացական խորատուգումների ու կենսական վկայութեան բանաստեղծ է, Հոգեւոր փորձառութեան ու այդ փորձառութիւնը խօսքային արուեստով Հաղորդելու քանաստեղծ: Դատելով իր իսկ անմիջական խոստովանութիւններից, նա այս աշխարհում Հենց այդպէս էր ըմբռնում իր գրական ու մարդկային առաքելութիւնը:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

ԸՂԱՅԻ՛, ԸՂԱՅԻ՛

## ԻՐԻԿՈՒՆԸ

Սա իրիկունն ըլլայի ես,  
 եւ հրպէի հակտին ամէն անցորդի-  
 չքնազագեղ ու նրադուն յամուրդի  
 սա իրիկունն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,  
 լի երգովը թռչուններուն, մարդերուն,  
 ու տարբերուն աղաղակովը տրոփուն՝  
 սա իրիկունն ըլլայի ես:

Սա իրիկունն ես ըլլայի,  
 թռչ, նագեմի, շրդարշային, վարդաբայր,  
 ու ծըփայի գերթ ոսկեսար վարագոյր  
 վըբան ամէն հոգիի:

Սա իրիկունն ըլլայի ես,  
 լի գանգակին դոզանջերովն երկնանեմ-  
 խնկապատար, օծուն, ջահուած ժամի պէս  
 սա իրիկունն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,  
 իմ անդորրիս մէջ ոգեվար աղջըկան  
 մարտոզ նրագին բոցեր տալու իմ ցովէս-  
 սա իրիկունն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,  
 լի գոռ ծափովն ովկիանի ջուրերուն-  
 սիւբին ծաղիկ մեղեդիքովն աղազուն,  
 սա իրիկունն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,  
 որ կը մարի սաստափ բարձին վրայ ցայգուն-  
 թօթափող վարսը գունագեղ ու ծըփուն,  
 սա իրիկունն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,  
 համայնական, չքնաղ, քաղցրիկ, լուսագէս-  
 եւ ամէնուն տայի հուրքէս, ոսկիէս:  
 Սա իրիկունն ըլլայի ես:

ՀԱՂԱՆՆԻՈՒԽՏ

ՀԱՐՍ ՀՈՎԻՏ

Եթէ Հարցնեն ինձի, թէ արեւմտահայ բանաստեղծներէն որո՞նք ունին անմիջական Հաղորդականութեան ուժը, կրնամ ըսել. Միտաք Մեծարենց, Պետրոս Դուրեան եւ Մատթէոս Զարիֆեան: Այս երեք բանաստեղծները թրթռացուցած են դրեթէ Հայ դեռատի աշակերտին կամ ուսանողին սիրտերը: Դանիէլ Վարուժան, Միամանթօ, Վահան Թէքէեան կը սկսին սիրելի դատնայ տրամաբանութեան զարգացման Հետ, այնուհետեւ մնալով «Հաստեւ» մարդուն սիրելի բանաստեղծները: Բայց քանի որ կեանքը ունի իր խօսքը, ընդ որ տարիքներու ընթացքին, եւ դեռատի կամ պատանեկան տարիքը ունի իր քաղցրապոյն ընելիքը, յայնժամ պատուի կ'անունէք Միտաք Մեծարենցը եւ կը դըրենք մեր այն տպաւորութեան մասին, զոր ստացած ենք մեր տաալը-տասնմէկ տարեկանին: Ու վստահ եղէք, առաջին տպաւորութիւնները երբեք յիսուական չեն ըլլար, կամ՝ շատ քիչ քաջաուրեմամբ:

պոյր արտաքինով «տիպար» ուսուցիչ մը, որ Հայերէն կը դասուանողէ: Պահը նուիրւած է Միտաք Մեծարենցին, զոր չնչը ճանչնար, մինչ ուսուցիչը խորասուզուած իր նիւթին մէջ, քաղցրութեամբ կ'ուզէ ծանօթացնել աշակերտներու անծանօթ բանաստեղծը: Ուսուցիչը կը կարգայ «Լիւր»ը քերթուածը, ու իր Հիացումին մասնակից կ'ուզէ դարձնել մեզ: Դասարանին մէջ շատ Հետաքրքրուող չկայ, որովհետեւ եղանակը դարուն ըլլալով պատուահանները քայ չէին եւ աշակերտներէն մեծ մասին նայուածքները պատուահաններէն զուրս, կ'երթային Հանդիպող քրտցիին տանիքին դայարած որթատուկի ազդեցութեան վրայ:

— Կը լսէ՞ք, Մեծարենցի մասին կը խօսին:

Մեղանին վրայ ափով թեթեւ Հարուած մը Հագիւ թէ գլուխները կը դարձնէ զէպի ամբիոն, պահ մը հոռ Վերագառնալու պատուահանին նայող դայար գեղեցկութեան եւ Հիթոս Համին: Եթէ այդ աշակերտները այդ օր դիտանային «Ես ինչ ընեմ հոգիով» խօսքը, Հասնաբար իրենց միտքէն անցընէին զայն, բայց դեռ շատ խակ աշակերտները գիտէին Համը խաղող դառնալու սահմանուած ազդիւն: Ի՞նչ գիտնային Մեծարենց կողուած մեռած-զացած երիտասարդի մը խոհերուն եւ ապրումներուն արժէքը, զեղեցկութիւնը, փոխանցած մտերմութիւնը, յա-

Հետս փոխադրուեցէք Սրբոց Բառասնից Մանկաց վարժարան, երկար տարիներու ետզարձ մը ընելով: Պատկերացուցէք անհրապոյր դասարան մը, երկրուն նստարաններով, փոշոտ ու մելանաթաթախ գրասեղաններով, նոյնքան անհրա-

ւերժական հրաւիրը՝ դէպի բարին, գեղեցիկը, անկորնչելին, դէպի յաւերժականը: Երբ ուսուցիչը՝ պարոն Ստեփան Գաբրիելովան, կրկնեց քահիցս կրկնածը, եւ անցաւ երկրորդ բանաստեղծութեան՝ «կիրակմատեօջին, խնդրուած ձայնը բարձրացուց, եւ բուրբին ուշադրութիւնը կեզրոնացուց Մեծարենցիան քաղցրութեան եւ մտերմութեան վրայ:

— Կը լսե՞ք, Մեծարենցն է: Հագիւ քան տարեկան ինչե՞ր ըսած է:

Յետոյ, կը կրկնէր.

«Ու բարեւի մը փոխան, հազար քարիք են տայի»...

Ինչ տեսակ բարիքի մասին էր խօսըր: Գարման տարիքի աղջիկներ ի՞նչ հասկընային Մեծարենցի խոստացած երեւակայական բարիքօջն, «ծիրանի լոյսօջն: Անոնց համար շօշափելի, տեսանելի բարիք մը կար, շատ մօտիկը: Ե՞թէ իրենց մեռաբերը երկարէին պատուհանէն դուրս, դիւրութեամբ պիտի հասնէին զրացիին տան տանիքէն կախուած աղսխներու...:

Ուսուցիչին գիծաց բուրս ալ լուռ նստած էինք, մինչ ան կը շարունակէր կարգալ Մեծարենցի գոհարներէն ու կանգ կ'առնէր երկու բառերու վրայ: Այս անգամ ցուցամատը կը զարնէր վարդագոյն թուղթով ծածկուած սեղանին ու կ'ըսէր.

— Ուշադրութիւն ըրէք, Մեծարենցը հոս գեղեցիկ տող մը ունի, որուն մէջ երկու բառեր, երկու զոզորիկ բառեր ստեղծած են պատկեր մը, որ անտարբերաց է մեր զրականութեան համար: Մեծարենցէն առաջ ոչ մէկ բանաստեղծ ըսած է մտիկ ըրէք: «Հարս հովիտ», լսեցի՞ք, «Հարս հովիտ»:

«Հարս» բառը լսող աղջիկները իրենց նայուածքները գարմուցիին արելէն, ու լրջութեամբ սպասեցին ուսուցիչին խօսքին շարունակութեան: «Հարս»էն ետք հաւանաբար կը սպասէին հարսանիքի, ճերմակ շղարչի եւ հագուստի, իսկ պարոն Ստեփան նայն տեղն էր ու անդադար կը կրկնէր այդ երկու բառերը՝ «Հարս հովիտ»:

— Ուշադրութիւն ըրէք, Մեծարենց հովիտը նմանցուցած է հարսի: Հովիտը գիտէք...

Բայց ո՞վ տեսած է հովիտը, դասարանէն հազիւ քանի մը աչակերտ դէպի Զահլէ գիւղաշնացութեան փորձառութենք ունէին, հովիտներ տեսած էին, բայց ոչ ոք բացատրած էր, թէ ինչ էր հովիտը, ինչ էր ձորը, ոսկայն աշխարհագրութեան պահուն ուսուցիչը՝ հովիտին, դաշտին, ձորին, լեռնազգթային շուրջ ամփոփ գիտելիքներ տուած էր... Թուղթի վրայ: Իսկ ան հովիտը, որուն մասին կը ճգնէ բացատրել պարոն Ստեփան, որուն շուրջ երկրաշարժութեամբ կը խօսէր ան:

— Գիտե՞ք ինչու Մեծարենց հարսի նմանցուցած է հովիտը, որովհետեւ... Հովիտը այն դաշտային տարածութիւնն է, որ կը փրուի երկու լեռներու կամ բլուրներիւ միջեւ. բնագրական ձորն է, դաշտային բարեմասնութիւններով, դաշար բնակկար մը, ուր կ'որածի արջառ ու հօտ... բայց ինչու՞ նմանցուցած է հարսի, այդ ալ... գիտե՞ք, հարսերուն երեսը ծածկուած կ'ըլլայ ջուրով, կը պահեն իրենց դէմքը, ինչպէս հովիտին «դէմք»ը՝ որ կը պահուի լրջապատի լեռներով: Այսինքն՝ ամօթխած, անտեսանելի, լեռներու միջեւ պահուրտած դաշար դաշտ մը, որ բարիբեր է, երբե՞ք խոսկի, որ գեղեցիկ է հարսի նման, հետեւաբար՝ հրապուրիչ, կայայելի: Այս «Հարս»ին հիացած է Մեծարենց: Երբ կարգանք քանի մը անգամ, աւելի լաւ կ'ըմբռնէր ըսածներս: Բայց պէտք է կարդաք...

Դասարանը լրջացած էր, կ'ուզէր հետեւիլ ուսուցիչին թելադրանքին, բայց ինծի այնպէս կը թուէր, թէ միւր տրամաբանութեան հասողութենէն հեռու էր «հովիտին հարսին» հմայքը, այսուհանդերձ, երեւակայութեանս մէջ մնաց անընթեխ պատկեր մը:

Կը վերլինեմ վարդամտիկ ուսուցիչս, որ ցիւր խօսքերով ուրուազծեծ մեծ բանաստեղծի մը հոգեկան աշխարհը, գայն փոխադրեց մեր մասնիկ հոգիներուն, ասանց բնագրութիւն ճիշդութեւ: Այդ օր, այդ զասապահին, ան յաջողեցաւ աչակերաններուն ջրուածութիւնը ժամփոփելի, դուրսի աշխարհէն բերել ու կեդրոնացնել հայ բանաստեղծութեան աշխարհը:

հին վրայ, ուր երկու լուսաւոր բառեր  
փարոսի դեր կը կատարէին, մեր առջեւ  
բանալով բանաստեղծութեան պայծառ  
ճանապարհը:

Յիշելով նախակրթարանի դասապահ  
մը, հազիւ տասնամեայ տղաք ու աղջիկ-  
ներ, կը փոխադրուիմ հին, խեղճուկ, ան-  
հրապոյթ, բայց դէպի իրենց կանչող օրե-  
րուն ու երախտադիտութեամբ կը յիշեմ

այն օրհնեալ մարդիկը, որոնք իրենց  
լունջով դարբնեցին, մշակեցին սիրտերը  
և ճաշակը:

Ձեռն կրնար խօսիլ դասընկերներու  
անունով, բայց խոստովանիմ, որ ես Մի-  
ոսք Մեծարենցը սիրած եմ իր Վլլայիչով  
և ճանաւորաբար այդ անկրկնելի  
ՎՆՄՍՈՎՅ, որուն դալար շղարչը տա-  
կաւին կը ծփայ իմ աչքերուս առջեւ:

ՇԱՀԱՆԴՈՒՅՏ

## ԻՆՉ ԱՐԲԵՑՈՒԹԵԱՄԲ...

Գեղամ Բարսեղեան բարեկամիս

... Ի՞նչ արբեցութեամբ դաշտերէն խորոտ,  
եւ հարս հովիտէն՝ կարմրբոտանի  
կ'առնէ արագիլն իր դարձին կարօտ:  
Ի՞նչ արբեցութեամբ սարեակներն, արթուն,  
լո՛յսը կը ծըծեն, լո՛յսը կը հծծեն,  
մրգաստամներու մէջէն սազարթուն:  
Ի՞նչ արբեցութեամբ ձիւն նայեր, ծըփիմ,  
բարձրէն՝ օդանեմ լիւզ կու գան. արփիմ  
մէջ կ'ոսկեգօծին ու կը թեւանան:  
Ի՞նչ արբեցութեամբ տատրակն հարսնի,  
առագաստ ըրած ծառի հովանին՝  
կը սպասէ տարփոտ իր վարուժանին:  
.....

Ի՞նչ արբեցութեամբ կ'ընդգրկէ անի.  
բոլոր ձեւերն ու երանգներն ամէն,  
բոլոր գոյութեանց, բոլոր տարբերուն  
իւր մէջ անդրադարձ ծիածանումէն՝  
Աստուած՝ որ եկաւ՝ չե՛ս գիտեր ուրիկ՛...

(Հատուած)

ՄԻՍԱԳ ՄԵՆԱՐԵՆՑ



Օրորուելով մաքուր շունչ մը կը հեւան-  
Մի՞նչ կը ձիւնէ ծաղիկն իրեցնց հասեւեմն՝  
Ձոք թօլարար հովը գրկել կը շտապէ:

Բնականաբար թէ՛ լոյրը եւ թէ ջերմութիւնը կեանքի ազդակներ են եւ,  
հասկնալիօրէն, բանաստեղծն է, որ ամէնէն աւելի գիտէ անոնց կենսական  
անհրաժեշտութիւնը: Եւ կենդանի, առողջ տպաւորութիւն մը կը ձգեն լոյսով  
ու տապով գինով աքաբանները, որոնք ճճաբուր շունչ մը կը հեւանն, իսկ  
անոնց միւնով ծաղիկներուն եւ զանոնք խօլարար գրկել շտապող հովին միջեւ  
սեռային կապ մը կը ստեղծուի կարծէք, որ կրկին կեանքի ու ժական-ստեղծա-  
զարծական ուժերուն մաս կը կազմէ:

Յաջորդ տունին հետ առընչութիւններու խաղի մը գիմաց կը  
գանուիք: Աքաբաններու ճիւղերէն վար սահող լոյսը, արծաթէ վարսերով այդ  
ստեղծուն պատկերը կը կապուի շարունակի գուռին մէջ թափող ջուրի պատ-  
կերին, կը նոյնանայ, եւ կախարդական փոխարեքութիւն մը կը կազմէ: Ձոր-  
բորդ տունին մէջ փոխադրուած ենք արդէն այդ նոր իրականութեան ոլորտը,  
« Ջուրը ցայտքէն ծաղիկ ծաղիկ կը կաթէ » եւ ծաղիկներու թերթերը վար թա-  
փող հովը իր շրջանակին մէջ առած է այս աշխարհը:

Տակաւին մաքրութեան եւ սպիտակութեան հետ առընչող բազմա-  
թիւ նրբերանգներ կու գան գորացնելու վերջնական տպաւորութիւնը:

Աստափէ մթնշաղը, ձիւնոյ ծաղիկները, արծաթ վարսերը, կաթէ  
գուռը, հեւալն, սպիտակութեան եւ « չուսէ » մաքրութեան հետ սերտ աղերս  
ունեցող շերտերը կը բերեն: Իսկ աքաբաններու շնչատութեան եղանակը ու  
մանկական արցունքի նշուժը մաքրութեան ընդհանուր տպաւորութիւնը ա-  
ւելի եւս կը շնչանեն:

Տպաւորապաշտ պատկե՞ր մը՝ թերեւ: Ասկայն գոյութիւն ունի փո-  
խարեքութեան խաղ մը նաեւ, որ ուղիղ կերպով կը ներդաշնակուի Մեծարեն-  
ցի առողջ ու կենսառատ կեանքի մը ձգտումին հետ:

Կեանքի այս ծարաւը կամ ձգտումը կրկին ու կրկին բանաստեղծի նե-  
բաշխարհին խորքերէն վեր կու գայ, դէպի մակերես կը բարձրանայ:

Այս ջերթողութեան մէջ, օրինակ, կը հանդիպինք տերեւներու, որոնք  
արեւէն կ'աղերսեն դիրենք ալ օծել: Փաստօրէն՝ արեւը օծած է կապոյտ « ծա-  
ղիկը ակերուն », զգուած՝ բլուրներն ու գաշտերը, հպած՝ մարդոց ու « աղիկ-  
ներուն կաթնածիր », եւ ահա « Մեծ աւելին Հոծ տենչը » կ'եռայ տերեւներուն  
մէջ եւ անոնք կ'ըսեն.

Արե՛ւ, մեզ ալ ազգագուրէ, արե՛ւ, մե՛զ ալ, ա՛հ, մե՛զ ալ...  
Կենսաւէտէ մեզ ամէնս ալ, արե՛ւ, ամէ՛նս, ամէ՛նս ալ...

Կեանքի նոյն խօլ հեւքը կը տեսնենք դէպի հողը հոսող գիշերային  
ջրտաւքին մէջ, ուր թէ՛ մարդուն ու արտերուն սպասուժը կայ, եւ թէ՛ ջուրի  
հոսքին ու ժամանման առթած ուրախութիւնը:

Հօյժօ՛յ, առօն յորդառատ դալարին ծոցն է նետուեր  
գաղջ տարփանձովն իր ջուրին՝՝ ուր արեւը կ'ապրի դեռ:

Եւ այս հօյժօյը դիւզացիին կամ ջրարալիին բացազանչութիւնը չէ  
միայն, այլ կեանքի արարչութիւնը օրհնեցող խայտանք է, ուր կայ հողին,  
ջուրին ու ջուրին մէջ տակաւին ապրող արեւին ջերմութեան միաձուլումը:

Կեանքի այս կենսաբար տարբերուն գիտակցութիւնը միտ առկայ է Մե-  
ծարենցի մօտ եւ այս պատճառով ալ Արեւը (Ջերմութիւն, լոյս), Ջուրը կամ  
Հողը (բնութեան կամ շրջապատի տիրական ներկայութիւնը) ծիսական նուիր-  
բականութեամբ մը մեզի կը ներկայանան:

Այս շատ բնական երևույթ է այս մէկը, որովհետեւ «Միաժամանի երկրորդ բանաստեղծութեան մէջ իսկ, հաշիւով ու բալասանով օծուն լուսեղէն ճաթէն քալող բանաստեղծը, որ այնքան լաւ գիտէ գիշերին գեղեցկութիւնը՝ յանկարծ կ'անդադարտնայ իր կացութեան եւ կը խոստովանի.

Բայց լոյսն իմ հոգւոյս էիչ էիչ կը մաշի՛...»

Այս այս իսկ պատճառով, ինչպէս տեսանք, բանաստեղծը զգայուն է բնութեան մէջ կեանքը խորհրդանշող շարժումներուն նկատմամբ եւ յուզիչ քաղցրութեամբ մը կ'ըսէ.

Ի՛նչ արբեցութեամբ, ծառեր, լոյսին մէջ,

Ծառեր հովին մէջ եւ անձրեւներուն,

Վարսաւոր ծառեր, ծառեր երկնուղէշ,

Ու ծառեր մատաղ՝ ծովածուփ կանառչ

Յորեմի ցանքին գոգն ինկած շուարուն՝

Ամէնքն ալ կեանքին կ'ըմպեն յորոյ ճանաչչ:

Նոյն այս կենսաթրթիւն արբեցութիւնը ծառերուն, ծաղիկներուն, թռչուններուն, աղբիւրներուն կամ մրգաստաններուն մէջ տեսնելէ ետք կ'եղբայրացնէ.

Ի՛նչ արբեցութեամբ կ'ընդգրկէ անի

Բոլոր ձուկերն ու երանգներն ամէն,

Բոլոր գոյութեանց, բոլոր սարքերուն

Իր մէջ անդրադարձ ծիածանումն՝

Աստուածն՝ որ եկաւ՝ չե՛ս գիտեր ուրկէ...»

Ինչպէս յաճախ նկատուած է, բառին ընդհանուր իմաստով եւ քիչ մը իւրայատուկ հասկացութեամբ որոշ պանթիզմ կայ Մեծարեւոյցի աշխարհա-հայեացքին մէջ, որուն ենթահողը անհատական ողբերգութիւնը ըլլալով հանդերձ, անձնական նեղ սահմաններուն մէջ չի մնար, այլ գինք կը մղէ կեանքի հիմնական շարժումը բնութեան մէջ գտնելու եւ ինքզինք այնտեղ լուծուած տեսնելու՝ իրբեւ այդ բնութեան մէջ անբաժանելի մասնիկը:

Նախապէս ակնարկեցինք այն երևույթին, որ Մեծարեւոյցի քերթողութեան մէջ յաճախ յստակ հոգեվիճակ մը առնչութիւններու զբաղմունքի մէջ տարբեր տարազներ կը հագնի: Անդրադարձանք այս հոգեվիճակի մէկ դրսեւորումին միայն, որովհետեւ այդ հոգեվիճակին վերլուծումը, իր զարգացմամբ եւ տարբեր երեսներով, քննարկումի ամբողջովին տարբեր նիւթ է: Այն ինչպէս ըսինք, այս փորձառութիւնը շատ անհատական շարժառիթներ ունենալով հանդերձ, յաճախ շատ անձնական դրսեւորումներ կը գտնէ եւ կրկին ու կրկին երեւան կու գայ:

Այս հոգեվիճակին ամէնէն ցայտուն կերպարանափոխումներէն մէկը «Ըլլալի» ներու շարքն է, որ շարքէն գուրս եւս իր դրսեւորումները ունի: Բանաստեղծը, անհատական մակարդակի վրայ, ակնկալութիւններ չունի այլեւս, որովհետեւ իր ապրումէ անընդհանր կաթիլները, իրենք իրենց վրայ դառնալէ ետք, դատարկութեան մէջ կը դառնան այլեւս եւ իր կացութեան մէջ փոփոխութիւն չեն յաջողիր մտցնել, իսկ ինք իր բառերով, յոգնած թեան մէջ փոփոխութիւն չեն յաջողիր մտցնել... եւ ական բնութեան է տեսնանքներու ուղեմուտք մեղուներուն սպասելէն... եւ ական բնութեան է տարբերուն մէջ ձուլուելու, անհետանալու մղումը տարբեր ուժգնութիւն կը ստանայ:

Ամբողջ հոգեվիճակ կամ ձգտում մը խոսանող նախադասութեամբ մը կը սկսի «Ըլլալի» ներու այս շարքը, որուն այլապէս դրսեւորումները տարբեր հոգեբանական նրբեցանքներ կը պեղեն:

Նման առաջին փորձերէն մէկուն մէջ պիտի ըսէ:

Սա առտունն ես ըլլայի,

Թոյր ու նառագայթ հոսելու համար

Կառոյններու մէջ մօթիմ, ամայի:

Այլուք՝ «Հորիզոնի սնդուս գիծը» տեսնելու նոր բաղձանք մը պիտի գրասերտ:

Բարձունքներու լայնի ճամբան ըլլայի...

Երբեմն այս ձգտումը ժողովրդային երգի մը պարզութեամբ պիտի գայ, երբ պիտի ուզէ.

Ուղեւորի ժամամամն

Հսպասող հիւզն ըլլայի:

Սակայն «Իրիկունը» բանաստեղծութեան մէջ միաժամանակ ծաւալող եւ խորացող ապրում մը պիտի ըլլայ այս ձգտումը.

Սա իրիկունըն ըլլայի ես,

Լի երգովը թռչուններուն, մարդերուն,

Ու տարբերուն աղաղակովը տրոփուն՝

Սա իրիկունըն ըլլայի ես:

Յաւելումներով զարգացող, սակայն նոյն ատեն աճող ու խորացող այս Հոգեվիճակի գրասերտ մին մէջ, Մեծարենցի միջնագարեան այն միւս վարպետին՝ Նարեկացիի բառապաշարն ու լուսնը կը տեսնենք, ուր յստակ պատկերներու զուժարումով, աճումով փորձառութիւն մը կը զարգանայ, եւ նոյնիսկ մակդիրներու թուումը այլեւս չի նեղացներ, որովհետեւ իւրաքանչիւրը նոր նրբերանգ մը կը բերէ.

Սա իրիկունըն ըլլայի ես,

Համայնական, չճնաղ, քաղցրիկ, լուսազէս,

Եւ ամենուն տայի հաւրքէս, ոսկիէս

Սա իրիկունըն ըլլայի ես:

Նոյն այս ձգտումը երբեմն երեւան կու գայ նաեւ շարքէն դուրս այլ բանաստեղծութիւններու մէջ, ինչպէս՝ «Աստուածամա՛ր»-ին.

Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերիմ մէջ,

Մեղսիկի փօշի մշուշն ըլլամ քսիւր...

Ուր նոյն գոյներու եւ Հոգեվիճակներու նրբերանգները կը գտնենք եւ ուր փորձառութիւնը կը զարգանայ բերեղապակեայ թափանցիկութեամբ ու գեղեցկութեամբ եւ ուր ամէն ինչ, մեծարենցեան մէկ այլ բառով, կը դառնայ... անանձնական:

Եւ ինչ է ըլլայիներու այս բաղձանքը, եթէ ոչ լուսասերելու ու կենսաւէտելու ձգտում մը («Առտունն»), որ Մեծարենցի կեանքի պապակէն կը ծնի, ինչպէս եւ բնութեան տարբերուն՝ իրիկուան կամ բարձունքներու ճամբուն մէջ կորսուելու, եւ մարդոց ու շնչաւոր գոյութիւններուն բաշխուելու ապրում մը, որ սեփական կեանքի մը անկարելիութիւնէն կը բխի հաւանաբար: Եւ, այսպէս, ամէն ինչ կը դառնայ մարդու, գեղեցիկ, անանձնական:

Թերեւս այս պատճառով ալ Մեծարենցի այնպիսի կը մնայ դիւթիչ, կատարական, որովհետեւ այդ թրթռացող գեղեցկութիւնը փոխանցելով Հանգերձ, կը բերէ պայուն մարդու մը թափանցիկ ողբերգութիւնը նոյն ատեն: Մարդու մը, որ գիտէ, թէ կը կորսնցնէ կեանքին Համար մղած պայքարը, սակայն կը պահէ իր արժանապատուութիւնը մահուան դիմաց... Եւ անանձնաբար այս երեւոյթը ամէնէն յուզիչ երեսն է Մեծարենցի կեանքին ու գրականութեան, ուր կը տեսնենք, որ Հոգիին լայսը քիչ-քիչ կը մայր... Իսկ ինչ՞ գիշերով կ'արբենայ եւ կը շարունակէ ինքզինք բաշխել բնութեան ու մարդոց մէջ՝ անանձնական լարումով:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

## ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ

Ծագիկներէն յուշիկ թերթեր կը թափէ  
 Բարումներով օծուն հովիկն իրիկուան,  
 Հոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,  
 Ի՛նչ հեշտին է մըթնշաղն այս սատափէ:

Աֆասիաներ, գինով լոյսէ ու տապէ,  
 Օրօրուելով մաֆուր շունչ մը կը հեւան.  
 Մի՛նչ կը ձիւնէ ծագիկն իրեճց հոտեւան՝  
 Զոր խօլարար հովը գրկել կը շտապէ:

Ու լոյսն անոնց, անխօս հուրի՛ դիւքական,  
 Հմայագեղ ու փարսփերով արծաթէ,  
 Շատրըւանին կ'իջնէ գուռին մէջ կաթէ:

Զուրը ցայտփէն ծագիկ ծագիկ կը կաթէ.  
 Վընիտ, ինչպէս լոյսէ արցունքը մանկան,  
 Նըւագն անոր կը հեծեծէ հեշտական:

Ծագիկներէն հովը թերթեր կը թափէ...

## ԻՐԻԿՈՒԱՆ ԻՂԶ

Իրիկուան մէջ անհետելու յոյսն ունենալ,  
 Եւ յանձնըւիլն անոր կածանի մը քըմայքին.  
 Խորիխ մը պէս թողո՛ւլ ձանձրոյթն ու յափրա՛նքն ալ,  
 Եւ անգորրով պատմութեանն՝ հիւանդ հոգին:

Ու լոյսերո՛վ պարածածկել հիւանդ հոգին.  
 Քոյր ունենալ ջուրին կարկաչն ու կապոյտ բալ,  
 Եւ ունկնդրել նամբուն քովերն երգող սիւֆին,  
 Մեծ քաղցրութեան մը խառնըւիլ, ու մեծանա՛լ:

Ընկե՛րն ըլլալ ցորեններուն. մրգաստանին  
 Դուռը բանալ գաւկի մը պէս, մտերմօրէն,  
 Ու թողուլ որ շահարիկներ ըզփեզ տանին

Թեւապարփակ՝ լայն լըռութեան մը համօրէն:  
 Հոն շրջասփիւռ ծառերուն հետ եղբայրանա՛լ.  
 Տարփո՛ղն ըլլալ ծագիկներուն. ծովածաւալ

Իրիկուան մէջ՝ անհետելու յո՛յսն ունենալ...

ՄԻՍԱՔ ՄԵՍԱՐԵՆՑ



Վահան Թաքովինց

Ներկայ բացառիկ կենսագրական բաժինին մէջ անգամ մը չիշատակուած այն էջն է ասիկա, որուն համար Խորհրդային Հայաստանի շնորհըրգայի՞մ Հայաստանն պաշտօնաթիւքը ինչ-ինչ մեղքեր վերագրեց Վահան Թաքովինցի, որ ի վերջոյ կերպարձաւ նոյն օրերուն նման անհեթեթութիւններով ժոյղզնած կարծիք Մողորին:

Հիմանք էին հոսովմէական ճանապարհի վրայ» անուն Թաքովինցի այս գլուխգործոցին գլխուն հետագայ տարիներուն եւս խաղեր խաղցուեցան, բայց անվիճար պատուեցաւ: Մեծարեւելք որեկողող խեղճոյ առաքիտայ էջը, որ հատորին ամէնէն թրթուռն հատուածներէն մէկը կը հանդիսանայ անաստեղծայ:

## ԿԵԱՆՔԸ ՀԻՆ ՀՈՌՎՄԵԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ

Բաց արի «Արեւելեան մամուլ» շարաթաթերթը, որ հրատարակուեմ էր Զմիւռնիայում, բաց արի Հենց պոստի պատուհանի առաջ, որտեղից մենք ստանում էինք մեր նամականերն ու թերթերը (նամակները տուն բերելու սովորութիւն չկար) եւ կարդացի իմ անունը մի ոտանաւորի տակ: Ինձ թուաց, մինչեւ հիմա էլ ինձ թուեմ է, որ իմ այդ ստորագրութիւնը տպուած էր ոսկեայ տառերով: Ինձ թուաց նաեւ, որ իմ ոտները կորուսեցին գետնից, մի սաւառնում զգացի, ինչ որ թոխիք:

Ես վաղուց էի յափշտակուել բանաստեղծութեամբ, կարդում էի եւ գրում մեր դպրոցի ձեռագիր եւ խմորատիպ թերթերում, ինքս էլ խմբագրել էի մէկ-կրկու ձեռագիր ամսաթերթ, բայց դեռ չէի տպագրուել: Մայրս, երբ տեսնում էր ինձ իմ փոքրիկ սենեակում գիշերները կարդալիս եւ գրելիս, ասում էր, «Ելի՛ր, պառկէ՛, եսվրուս, մեր ճինսէն Պօղոս-Պէլրոս չ'ելլար»: Պօղոս-Պէլրոս ստելով՝ գրող ուզում էր ասել: Այդ ոտանաւորի տպագրուելուց յետոյ ես չհպարտացայ, միայն մի քիչ եւ մի առժամանակ, չգիտեմ ինչու՝ լրջացայ, միայն մայրիկիս տառցի- «Տեսա՛ր, կ'ըսէիր քի մեր ճինսէն Պօղոս-Պէլրոս չ'ելլար, ելաւ»: Ի հարկէ, մայրս չէր կարող գնահատել իմ գրուածքները, բայց խորագոյն յարգանք ունենալով գէպի տպագրուած տառը, ժպտաց եւ համբուռնեց ինձ:

Իմ փոքրիկ սենեակը... Այդ սենեակը գտնուում էր երկրորդ եւ երրորդ յարկի մէջտեղում, առանձին սանդուխով, փոքրիկ, շա՛տ փոքրիկ, սենեակ էր, լիքը գրքերով (բացառապէս ոտանաւոր) եւ պատկերներով: Երկու փոքրիկ լուսամուտները նայում էին երկրորդ յարկի կտուրի վրայ, ամբողջ Հորդոսնն էր դիմացի Հարեւանի թթենու դազաթը եւ տերեւների միջից երեւցող կապույտը: Այդ սենեակում եւ գրել եմ իմ առաջին տպագրուած ոտանաւորը, այդ սենեակում կարդացել եմ Դուրեանը եւ լաց եղել, Հուսկ ապա կարդացել եմ Մեծարենցը:

Մեծարենցը դաւառական պատանեկութեան պաշտամունքի առարկան էր: Մենք առիւտութեամբ Հեսեւում էինք նրա դէմ սկսուած պայքարին, թեթեւադիկ, անարժէք գրողների կողմից, նամակներ էինք գրում Միսաքին գօտեպնդեւու Համար: Ես ստացայ Վար տաղերը Միսաքից նուէր: Այդ նուէրից յետոյ՝ Նիշոն ասած, Հպարտ էի զգում ինձ: Ժամերով նայում էի Միսաքի լուսանկարին եւ յափշտակուում, Ժամերով կրկնում — Վե՛ս կը փաթի ծովակն հոգուոյս մեղմալար: Ետո էի ուզում նրան նմանուել ձորուք թողնելով, բայց, աւա՛ղ, զեռեւս աղուամաղ անգամ չէի լօշափում երեսիս վրայ: Յանկացայ, որ իմ առաջին գիրքս տպուի «Միամուն»ի նման, միեւնոյն թղթով, ձեւով, շապկով, միեւնոյն տպարանից: Այդպէս էլ եղաւ: Բայց, էլի աւա՛ղ, ո՛չ մի տպաւորութիւն չթողեց. այն ժամանակ միայն եւ զգացի, որ գոյութիւն ունի ինչ որ ներքին մի բան, որ արտացոլում է տպագրութեան մէջ, գոյութիւն ունի ինչ որ մի բան, որ Դուրեանն ունէր, Մեծարենցն ունէր, բայց եւ չունէի: Բանաստեղծութիւնների իմ առաջին գրքոյկը ինձ Համար մի արժէք ունի — նուիրուած է Միսաք Մեծարենցի գերեզմանին: Նուէրն անարժէք էր, բայց այն ժամանակուայ իմ ամբողջ սիրտն էր:

Տարիներ յետոյ, երբ Պոլսում եւ կուսայ Միսաքի ցուրտ շիրմը Համարուրելու, ինձ թուաց, որ Միսաքը խօսեց ինձ Հես, խօսեց արեւի Համար տածած բուռն կարօտով:

Գոյների այս չնաշխարհիկ երգիչը քնում էր անգոյն մի տարածութեան մէջ:

Միսա՛ք, արդեօ՞ք ոչ մի կապույտի վրայ չեն յատոււմ քո աչքերը:  
Այժմ եւ մեծացել եմ, դարձել եմ չափահաս, դո՛ւ մնացիր պատանի:  
Այժմ, իմ չափահասի ձեռքերով եւ չափահասի խորին գուրգուրանքով, շոյում եմ քո պատանի, չքնաղ գլուխը եւ արցունքներս վազում են քո երգերի վրայ:

Երբ մրսում եմ այս աշխարհում, մե՛ծ պատանի, գրկում եմ քո երգերը եւ ահա արեւը, քո երգած արեւը, սուզուում է իմ ցուրտ Հոգու մէջ կաթիլ առ կաթիլ:

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

Կենսագիրներն զիտենք, որ բանաստեղծի շափազանց բնախնդիր ու շափազանց խղճամիտ տիրոջը մը հզան է Մենարեանց, մէկը անոնցմէ, որոնք կատարեալին աւանդելով կ'արքանան ու շարունակ կը տառապին անկատարին առջև:

Անշուշտ այս էր պատճառը, որ իր տառջին Հատարին զուրս մզեց նախապէս կուտակած իր բանաստեղծութիւններէն մը կտոր, որոնց կարգին՝ ետեւ ընտրուածամամ'րը, որ իր զրառուցէն ու տառջին Հրատարակութենէն երկու տարի ետք պիտի գտնուար երկրորդ Հատարին զուտարներէն մէկը:

«Աստուածամամ'ր, Աստուածամամ'րս խորագրով, ետառող Հիսուսաբով եւ ութ տուն հաշուող բանաստեղծութեան տառջին տարբերակը լայր տեսած է ըմբարտ շարաքանթերէ 19 Յոգոս»

սոս 1906 թուակիր Համարին մէջ, իսկ երկրորդը ընար տաղերքէն ընթերցողին ծանօթ կտորն է, որ, ինչպէս կ'երևի, առաջինին տարբերակը ըլլալէ աւելի նոր յայտնագործութիւն մըն է:

Հատուկութեան երկու տարին'ըը զեր ունեցած են արդեօք այս արդիւնքին վրայ, թէ արուեստագետի խղճմասանքը:

Ասոյցը այն է, որ Մենարեանց ընդ կրնար անտարբեր մնալ մտապատկերին պազատամբնութեան զիմաց եւ զուտարեութեան Հասնող նուիրումով մը կը յանձնուէր զայն՝ մտապատկերը, բանին զգրութեամբ օժտելու արարքն:

Երկու ընտրուածամամ'րս եւ մէկ յայտնութիւն:

Եւ զեղեցիկ արինակ մը՝ ստեղծագործ երկունքի պէտք արդիւնքին մասին...

# ԱՍՏՈՒԱԾԱՄԱՐ, ԱՍՏՈՒԱԾԱՄԱՐ

«... Ահա կաթիլ մի կաթին քո՛ւ մդ  
կուտութեան յանձն իմ անձրեւեակ...»

Նարեկացի

Մեղեակի փռչի ցամած են գիշերին,  
Արծաք զենքակն իր հոլանի մարմնին վրայ  
Գեւտ հեշտանգով կ'երընկըտայ:

Հովանիին տակ խնկագոյն ռոքատունկին,  
Ուր կը շաչէ գետին մեներգն համբարուէ,  
Լոյսի ծամեր կը սողուկին:

Ա՛հ, ի՛նչ էրագ շարամանն պիտի անոնք  
Բիբերուն մէջ տարաշխարհիկ ու սելեուուն  
Սէր խաղաղի հատիկներուն:



Ահա՛, կ'իյնամ կռակն ի վար ցընորքներու-  
թող որ արծաք գիծին տարեմ կաթումիզ կոյս,  
Աստուածամամ'ր, Աստուածամամ'ր:

Ահա՛, մագլեմ պիտի ցախ սարակն ի վեր,  
Երագներու սատափ քամրուն ցրուէ ամպեր,  
Աստուածամամ'ր, Աստուածամամ'ր:

Բորք մանանչ մը մշտախաւար հոգւոյս համար,  
Դո՛ւն արփաւոր գեղեցկութեան ու լոյսի՛ հարս,  
Աստուածամամ'ր, Աստուածամամ'ր:



Այգեստանին կ'իջնէ անօրեւ մը լուսեղէն,  
կաթիլ մը կաթ՝ ծովացած քու սրբութեանէն  
Ու, տե՛ս, ահա՛ կը մանկանամ:

Ու, տե՛ս, ահա՛ կը մանկանամ գիշերին մէջ,  
Ուր աստուածեան սիրոյ ձայն մը կը շառաչէ  
Հոգւոյս համար, հոգւո՛յս համար:

## ԱՍՏՈՒԱԾԱՄԱՐ


«... Ահա կաթիլ մի կաթին քու՛ւմդ  
կուտութեան յանձն իմ անքրեւեայ...»

ԵԱԲԵԿԱՅԻ

Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մէջ,  
մեղեսիկի փռշի մը շուշն ըլլամ ըսփիւռ,  
եւ առիգածն արծաթ՝ ջուրին վրայ եռլանի-  
ու ձա՛յն ըլլամ, ըլլամ ծաղիկ, ըլլամ գեփի՛ւն՝  
ամէն իրի երպիւմ փափուկ թեւերով գէշ:  
Ըլլամ ջրվէժ, ըլլամ գետափ մը գեղանի,  
ըստուե՛րն ըլլամ խնկագունած այգիներուն,  
կամ գետերու հոգմիկ աւաչն, ու գետաձայն  
հովին անցքը՝ երկնասլացիկ կատարներէն:  
Կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մէջ  
պատկե՛րն ըլլամ սրբազնացած ես համայնին-  
օղանմանեա՛կ մ'ըլլամ ես թանկ եւ անմարմին,  
ու շուշփայ մը՝ հազօրդութեանը կաթնաճիր:  
Գետէն անդին կամչե՛ս ինձի- Անցի՛ր, անցի՛ր-  
մեծ դիւքութեան կայծակ մը տաս մըթար հոգւոյս,  
ա՛հ, չըգայթի՛մ կռեակն ի վար ցընորհներու-  
թող համթուրէ՛ աչքըս ջահումն աչհերուդ կոյս,  
ու չըգայթի՛մ կռեակն ի վար ցընորհներուս:  
Ահա՛ մագլիւմ պիտի ցաւիս սարակն ի վեր-  
երագներու աստափ մա՛րէն ցրուէ ամպեր-  
եւ իզճերուս կապոյտին վրայ, վարդ ամպը դուն,  
վարդ ամպն եղիր՝ մերթ լուսնկան պատմունքանդ-  
դո՛ւն, աստուածեան գեղեցկութեան արփաւոր՝ հարս,  
սրբութեան կո՛յսը ձիւնաճիր ու երբավարս:  
Գիշերին մէջ կ'իջնէ դեռ ուղիւր լուսեղէն,  
կաթիլ մը կաթ՝ ծովացած քու սրբութեանէն-  
ու տե՛ս, ահա՛, կը մանկանամ, Աստուածամար,  
ու տե՛ս, ահա՛, կը մանկանամ՝ գիշերին մէջ՝  
ուր լսեցի ես աստուածեան ձայնին վայրէջ՝  
որ կը շաչէր աստուածաբեալ հոգւոյս համար:

ՄԻՍԱԳ ՄԵԾԱԼԵՆՑ





Միստ Բեմարինց Վ. Ալայանան

Առաջաձեռն արեւին շառաւիղներուն սակ' չուզե-  
կատը կանգ կ'առնէ Եւթո-Պուլէի կայարանը, ցո-  
րնի գաղտնիներն եւ խառնուէր բարձրախորհի  
հետեւումն, արշաւապաշտ գնացել էր ետք և՛  
կատը էր, փոշոտ համբաններուն վրային, իսկ  
հետեւ Քաղաքի գերեզմանատունը:

Հողգործու պահուցում էր գրաւած է իսկ ար-  
զին. կ'անդրադառնում գիւղի ուտաններուն, մար-  
մաններուն, սարերուն ու գետափի երազանքնե-  
րուն. ուտաններու շուքին սակ, աղբիւրին ծափի,  
նախիրներու մեկնումներուն ու անոնց խորական  
վերագործին ստեղծ, աղայի մէջ երազամուղ տնու-  
մներ կը լինէ չիմակ: Աղբիւրին ծափի, քնափակը  
հանդիման' մարմաններ, որոնց ցերեխու մէջ Թա-  
թաւուն չնակներ կը կազմէինք' Շուրին վազը  
սրբիւրու համար:

Պարեհներուն մէջ, երկու հարեւաններ, ցան-  
կապատներու շուքին սակ' հետաքրքիր աստղին խե-  
լայեղ' երգի խաղերուն ունկնդիր, եւ վարչերու,  
մուրթ բուրմունքն զինով:

Պիւղը սակաւին այստեղած չէր շարքի,  
բուսաբուսումներու սարսափն, եւ իր գաւառները,  
հետաքր հորդաններու սակ' Թափառումն էր չէին  
զնքներ. անգուհներ չէին կարուած խղիներուն  
կայ սակաւին, ու զիւրը անգործ ու խաղաղ կը  
հեղէր կնակնք անուշ հեղանքը:

Մտերիմ խաղերկիրներ էինք ան ստեղծ Մեծա-  
րեցիկն հետ:

Տարիներ ետք' պահպանութի ցուլը մտաբերու, և  
երկար կանգիպում էր Մեծարեցիկ հետ, Սովորել  
Ս. Յակոբի բարձունքներուն վրայ. ան' գաւառան  
սուրի շուքի մէջ գիտաբար, ու եւ' զանի մը սրտան  
հար, զոյն մեկնումն մէջ ժողովարտ:

Ան զոյններն եկած էր հիտաբար, եւ կը պատ-  
րաստուէր հետ մեկնելու, խաղաւանում էր, կնակնք  
զմեկն հետաքրքրումն էր:

## ԱՅՑ ՄԸ

## ՄԵԾԱՐԵՆՑԻՆ

Ու զոյնն եղած ստեղծ, իր նամակները, ինծի  
ուղղուած եւ փոխադարձաբար, սիրտի կապերը  
սակի սեղմեցին, սակի ու մեղադրուցին. եւ երբ Ար-  
վազ վերագործայ արձակուրդի համար, ա՛յ անբա-  
ժան էինք իրարմէ ցերեկ ու զիւրը հաւասարապէս:  
Միտանի կ'ազնեց Մայլզանի գերբնումները:

Պէտ էր բռնմիմ վարդն ու լիւան,  
Ռեալմարքան խորհուրդին սակի,  
Հագիմներ յաւա կու լան:

Վարուտին գիշերներ, անտառին մէջ Ս. Նշանի  
պարխայներուն քամակին կամ Հողգործի փուշու  
համբաններուն բարձունքին, եւ կամ իր տան պա-  
տըլամին վրայ, խաղաղութի ու երազանքն:

Սիրտ կրակ ունի, արցունք' իմ հոգիս  
Որ կը միայ սու սուզին մէջ մայրիկիս:

Ձեր էինք մենք, ասորաբախ ներսուղ, Քաղ-  
տատի, Մուսուլի տաթաղին արեւին սակ տարիտա-  
պարուած հոգի մը, որ վաղ լինաւ, կնակնք երազը  
գնու իր կուրծքին սակ շտարբալումուած, ու ար-  
ցունքուտ աչքերով, ասորինք զինքը հոգին յանձնե-  
լու զեւ Թաթ, գնու երազուն ու միշտ ծայտաղ, իր  
հազելվարքի սնարին վրայ անգամ: Մտքը կու գար  
Ներնիկը, որ զորքին մարդներուն մէջ գործնակա-  
նացիւր էր, բայց չէր զազրած մեղի նման երազամուղ  
մ'ըլլաւ:

Որ մ'այ զինքը համբու զրինք զեւի Պոլսո: Մե-  
ծարեցի իր մարտնը հետ կ'երթար իր հայրը համ-  
բուրելու պորտական Հորդաններու սակի, ու ա՛յ  
չգարձաւ մեղի: Ու հիմակ, տարիներ ետք, այս աշ-  
խարհի վրայ յամեղու իր մտերիմ' կ'երթայի իր գե-  
րեզմանը համբուրելու, արցունքովս թրջելու այն

հողը, որ հայրենիքին հողը չէր, եւ սակայն իր գիտիչը  
կը ծածկէր:

Հիմա՛կ, իր ժամն էի, իր գերեզմանին զովն ի  
վեր գլխահանի աւ արտուճ ուղիւ, որ ճշ՛ հիանալի մէջ  
Քափառիկաւ ու երազաւ մը չաւ:

Առաջագրէն կը ննջէր ընդարձակ գերեզմանա-  
տան, Պալըզըրի մէկ անկիւնը, եւ հողակայտը զարով  
մը կը դանդաղանուէր, ցանկապատի մը մասրենիին-  
բուն շուքին տակ, սկզբուր, խոտերու, վայրի փու-  
շիբու բաճուանդի մէջ ազուցուած, պայտի գերեզ-  
ման-բարբ, ոչինչ է՛ ըսէր այլեւ, բայց իր երգերը  
սիրտս կը փոխորդէին անխնայ՝, աւ հու լայն ազու  
մը պէս հեկեկալով:

Հարաւի մեղս ու յիշումն է հովին եես,  
Որ վազուց երազուած համբոյրի մը պէս,  
Իմ սիրակարուս հոգիս հեշտանմով կը  
իացնէ,

Շագա՛, ո՛վ արեւ, շողափնկերով  
սկիծայր,

Մառախլապատ երկունքիս մէջ՝  
Ուր մտածուիք կը զեզերի ու զմնայր,  
Շոգա՛, շոգա՛, բարբ՛ արեւ, հիւա՛նդ  
եմ...:

Իր սեւքին, իր կարտախն իրձովը հիւանդ ճըն

էի եւ հող, գերեզմանատան այդ անկիւնը, ուր ինք  
խաղաղորէն կը ննջէր. աւ կը դադարէր անձառա-  
տուս արցունքներու բուխիքի մէջ ու զեմուար:

Արի՛ւր իր երազած արեւն էր, որ կը լալար, որ  
կը նստապայելէր, իսկ աւ սարքազին կենանքին  
երազը լարդիւնէ, աւ ծառերը, աւ շուքերը, աւ  
ցանկապատը, աւ շարտուան դուռին մէջ ցայտազ  
ջուրերը, ամէնը, ամէնը, նայն երազը կ'երգէին,  
նայն խաղճը, կենանքի անդուր կ'սպիւղէին, բայց  
ա՛յ Մեծարեմեայն անխաղ հողին կը ննջէր հողակայ-  
տին տակ, հայրենի երկինքին լնուս:

Ծրին հիւանդներու խոճք մը, ասոր երկինքին  
տակ, աւ իր մայրը, եկեր էին միտաւանդու իրենց  
արցունքները բանաստեղծին հողակայտին վրայ, որ  
պոչ, ասուն աւ չբուսած զարով մը կ'անձաւանար  
ա՛յ:

Ու մայրը կը լալարուանէր արտաւզե՛ն.  
— Եկէր, միտա՛ր, նա եւ ընկերներդ, ամէնը,  
ամէնը:

Յի կեանք նախէ ճարկանը արցունքին առեց-  
ւորած ուղերուն, չէի կրնար ա՛յ անկեզրիկ ճարկա-  
նը արտաւանն կանչեալու:

Ու մայրիկները, արեւը ձեռքին մէջ աւնէի իր  
գերեզմանին վրայ սփռելու. նամո՛ր՝ կը հանգէին  
իրենց թաթ, իրենց դուռնը փոփոխեցէ՛ր իննի պէս  
մաճուան զերթուանդ պղպղով:

ՎԱՀԱՆ ԱՍՈՒՆԵԱՆ

Քեմազրի

## ՄԵԾԱՐԵՆՑԻ ՀԵՏ

Եկար գունատ ու տրտում,  
Ազօթեցիր ու անցար...  
... Եւ թոչումներ մնացին  
կապոյտի մէջ ու յոյսի,  
Յաւի ծաղիկը մնաց  
Յօղաթաթախ ու անշար,  
Եւ մնացին շշուկներ  
Ու մշուշներ սնդուսի...

Ոսկէ ծառեր մնացին,  
Մնաց յուսէ մի կածան,  
Արեւի մէջ ազօրոզ  
Մի սսկեւոր կիրակի,

Մնաց մամուռ ու արցունք,  
Մամուռն ի վար՝ ծիածան,  
Ու կանչող ծուխը մնաց  
Քո հեռուար հիւղակի:

Եկար գունատ ու տրտում,  
Ազօթեցիր ու անցար...  
... Եւ բուրումներ մնացին  
Երիցուկի եւ ուրցի,  
Ու ասեա ցաւն աշխարհում  
Դարձաւ ազօրք մի պայծառ,  
Ու ասեա մահն աշխարհում  
Փոխուեց անմահ գրոյցի...

ՎԱՀԱԳՆ ԴԱԽԹԵԱՆ

Մտքի աշխարհին մէջ անձնաւորութիւններ կան, որոնք արտակարգ զէնքի մը ծախին կատարած իրենց արգաստներով, յայտարարած անտիպ աւանդներով եւ ուսումնասիրութիւններու առաջնորդութեամբ՝ կը գտնան նշի գեղեցրու հետ յիշատակելի անուաններ եւ կ'արժանանան զայոց բար սերունդներուն երախտագիտութեան:

Կարն ըլլալու համար ըսենք, որ մեր գրականութեան մէջ նման երախտագիտութիւններ կը գայիկեն Գեորգ Աբովեղեան՝ Սայաթ-Նովայի առիթով, Արշակ Զօգանեան՝ Մկրտիչ Պէշիկթաւիանի, եւ Թորոս Ազատեան՝ Միսաք Մեծարենցի:

1898ին Ակնայ Աղջուզս գիւղը ծնած բանաստեղծ, իմբապիթ, հրատարակիչ Թորոս Ազատեան ինքն էր, որ ստորիններու տընտան աշխատանքով մէկտեղեց ու կազմեց Մեծարենցի առաջին կենսագրականը, վերահրատարակեց բանաստեղծութիւնները, իմբապիթը արձակ ու Թարգմանչական գործերը ու անազին նիւթ ճառագայտարեց Հայաստանին, յոգուա բանաստեղծի գիտական հրատարակութեան:

Երախտագիտութեամբ կը յիշենք իր անուշը հաս ու կը ներկայացնենք իր մէկ ջերթուածը, որ նշնակէ վկայութիւն մըն է եղերարթաւս բանաստեղծին հետ ունեցած իր ծանրեմ կապերուն ծախին:



Թորոս Ազատեան

## ՄԱՀԱՇՈՒՔ ԿՂԶԻՆ

ՄեծԱՐՆՆՑԻ յիշատակին

Բայց ո՞ր ուղին էր արդեօք, ուրկէ անցար, ե՛՛ք քերթող,  
վերջին անգամ, յուսաբեկ, դէպի հիւղակիղ անշուք.  
Ո՞ր նոճին էր զգայուն, որուն մարմինն ինկաւ զող՝  
Քու հեւիքը երբ տըլաւ իր սաղարթներուն սրբսրփուք...

Բայց ո՞ր տեսիլն էր արդեօք — ծովո՞ւն, կապոյտ եթերի՞ն,  
Թէ խարակէն փշրուած նաւակի մը ուրուային —  
Զոր աննարկիղ ընդունեց վերջին անգամ, հըծծելով  
Հըրածելտի մեղեդին՝ անանճանկան բարբառով...

Այ՛հերը թաց, կ'որոնեմ հիւզն այն տըխուր, թափափուր,  
Ուր ոսկի սիւնը փրլաւ իր տաղանդին արքեանի,  
Ուր գեներէն մայր ինկաւ յանկարծ արեւը երկնի...

Ու չե՛մ գտներ: Կը թուի գերեզմաննոց մը թափուր  
Դալարածուփ այս կղզին, ուր բերնին մէջ հովերուն  
Կ'եղերերգեն անընդմէջ յուշեր, վիշտեր անանուն...



գիւան մը մտացուցին Հայ ընթերցողը, ուր միայն կարելի է սքանչալիալ եւ մեծ-նայ: Նախ՝ իրենց լեզուն գերծ է բառերու կոյտի մէջ Թաթխուած լեզու մը ըլ-լայէ, ամէն բառ իր կշիռքն ու ներկայութեան իրաւունքը ունի: Անոնք չինկան աւանդական թակարդներու, գիւրընկալ ձեւերու մէջ, այդ շրջանին երբ տա-փակուկ ոտանաւորներ արեւին տակ Հանգիստ պառկած՝ փառք եւ պատիւ կ'որոնային, Տէրեան եւ Մեծարենց, իրարմէ տարբեր բեւեռներու վրայ, իջան մարդկային Հոգիին խորխորատը, խորհրդապաշտութեան վարագոյրը բացին եւ Հոգեգէն կայծերու Հանդէս մը տուին: Մեծարենց մտաւ լեզուին Հանքերը, պեղեց եւ լոյսին վերադարձուց մեր լեզուին գանձերը: Եւ այս զոյգ թերթողնե-րուն տաղանդին գորութիւնը Հո՞ն է, որ իրենց կտորները երբեք չստապացեցան այդ աշխատանքէն:

Անոնք գիտէին, որ բանաստեղծութիւնը բառերը նուազել կամ ոսկե-զօծել չէ. եւ իրենց Հոգիին եռքը կրցան տալ բառերու Հնչականութեան մութ գիտութեամբ եւ գերանուրբ թեքնիքով. նրբաՀիւս երաժշտութեամբ բխուն տողեր Հրամացուցին մեզի, նոր մատուցուող նկանի պէս լուսարարախ: Իրենց-մով՝ ինչպէս ամէն վաւերական բանաստեղծով՝ մեր լեզուն նկարագիր ստա-ցաւ:

Քեան՝ լեզուական աշխատանքի եւ թեքնիքի վերաբերեալ, աշխարհ մը տարբե-րութիւն ունի: Նախ անշուշտ լեզուն է, որ իրեն Հետ կը բերէ իր աշխարհը — բառապաշարը, աւանդութեան Հետ կապերը: Աշխարհագրական գիրքը՝ արեւմտահայ եւ արեւելահայ՝ տարբերած է գիրենք:

**ԿԼԻՄԱՅ, ՎԱՅՐ ԵՒ ԱՆԱՆՈՒՆ ԶԱՅՆ**

Սկսելու համար պէտք է տալ նախ իրենց բանաստեղծութեան կլիմայի տարբերութիւնը: Եթէ բնորոշիլ պիտակ մը պիտի տանք, Տէրեանինը թախ-ծեղրութիւն է, Մեծարենցինը՝ Հնչակերգութիւն:

Որովհետեւ նաև իրենց վայրը տարբեր է: Մեծարենցի աշխարհը գիւղն է — Հմայիլ եւ միամիտ. մանուկ Հասակէն դիտած է անոր նախիրներու դար-մը, մօրը ծունկին քով լսած՝ Անտառնիները, գիւղին եւ բնութեան նոպայով բռնուած կը խայտայ ամէն թրթիւրի Հետ: Ո՞վ պիտի կարենայ իր յիշողութենէն ջնջել Մեծարենցի գիւղական նկարներու կախարդանքը, այդ նկարաշարը, որ վարպետի վրձինով գծեց, երբ դեռ քսան տարեկան չկար:

Տէրեանի աշխարհը քաղաքն է — Հմայիլ եւ խորագէտ. մեծ աշխարհի մը ծորուձը եղող զգայնութիւններու կրկէսը. Հողմածեծ քաղաք մը, մշուշի մէջ գառած մեղմ կրակներով:

- Քաղաքներ, ձեր մէջ կայ դժոխքի մի շշուկ,
- Քաղաքներ, ձեր բացտում մեռնում են երգ ու սեր,
- Քաղաքներ, մոռացայ ես երգերըս անեղ...

Հակառակ անոր, որ իրենց սիրտը, Տէրեանի բառերով՝ «անգէն, անզօր երեխայ է», անոնք սրտին տուեր են իրենց կեանքին զեկը: Հոգեթով է կեանքը: Տէրեան անդուլ փնտառուք մը ունի գէպի անանուներ, անաւարտը, անկարե-լին՝ կանչ մը.

Դու շրջում ես ամէճուրեք, դու չկաս,  
 Անեղբույք դու խօսում ես աշխարհում,  
 .....  
 Եւ աշխարհի ուզիներում ես մայր

Թափառում եմ եւ որոնում տխրադէմ,  
 Լսում եմ քո ձայնը անուշ-լուսաւոր,  
 Կանչում եմ քեզ, բայց անունըդ չգիտեմ:

*Նոյն անանուն ձայնին համար կը խօսի արեւին եւ հիւանդութեան  
 յանձնուած պատանին՝ Մեծարենց, բայց այդ ձայնը իրեն ուրիշ վիճակ մը կը  
 պարզուէ:*

Ձայնե՛ր՝ դիւրիչ աշխարհներէ, տարտա՛ւմ, անուշ, հեռաւու՛ր՝  
 որոնք անդին գիտ կը տանին երանաստան մը բազմոտ  
 ու կը նիւթեն արբշխո՛ւ՝ հովին դիւրիչ նեկտարն ըմպած հող:

*Տէրեանի զգայութիւններու մկանները — սիրելու, մոռնալու, կարօ-  
 տի, հրաժարումի — անդուլ կծկումի եւ բացումի գործողութեան մը ենթա-  
 կայ են, զոր ինք «տանջանք» կ'որակէ: Բայց ինչ ալ ընդգրկէ այդ տանջանքը,  
 կարծես Տէրեան թաքուն հանոյք մը ունի «տանջանք»-ին գոյութեան մէջ:*

Ոգոջն քեզ տանջանք, ահեղ հիւացում,  
 Գրկիր իմ սիրտը, քեզ օրհնում եմ ես,  
 Մանուկ օրերից իմ գումն ես ծնծում  
 Եւ յօժար հոգիս ընդունում է քեզ:

*Մեծարենց կը գրէ:*

Ես կը սիրեմ այս խաւարը տառապագին  
 ուր վիշտ մը լայն՝ սիրտս կուրծքէս դուրս կը նետէ  
 եւ ես կ'ըմպեմ սեւ հեշտանքը ցաւոտ կեանքին:

*Ուշադրութիւն ընելու է բային. Տէրեանի պարագային «ընդունել» է,  
 ամբողջ հոգիով կ'ընդունին, կը նշանակէ իր ներաշխարհին մաս կը կազմէ:  
 Մինչ Մեծարենց «կ'ըմպէ», մարմնին մէկ մասը կը հաղորդուի անով: Մէկուն  
 համար հատուն մարդու իրապաշտ խօսք է, միւսին համար՝ վիպական մթնո-  
 լորտ: Մէկուն համար կեանքի մեւ է այլեւս, միւսին համար՝ պահի մը յայտ-  
 նութիւնը: Տէրեանի «սեւ»ը յստակ անդունդ է, Մեծարենցին «սեւ»ը՝ լոյսի  
 անորոշ խաղ մը:*

*Եղած մէկ օրէն ճակատադրապաշտ է Տէրեան. տարաշխարհիկ գնացք  
 մը ունի դէպի անծանօթը. եւ տէրեանական բառ մը ստեղծած է «հետուն», որ  
 անտեսանելի վայրէ աւելի երանութիւն խոստացող վիճակ մըն է, առիւնդող  
 եւ տնհասանելի:*

Ես չար հոսանքով մղուած եմ հեռում,  
 Եւ անվերադարձ փակուած է ուզիմ,  
 Մի որք մանուկ է հոգիս մոլորում  
 Մատնուած մուրիմ եւ մոռախուզիմ:

*Մեծարենցի հոգին ալ որք է եւ մանուկ, բայց ինքզինքին մէջ կ'որոնէ  
 դարմանը: Տէրեանի պէս յանձնուած չէ, կը հաւասայ, որ ինք կրնայ փոխել  
 իրավիճակը:*

Ո՞ւր է ճանաչն, հուրքը ջերմի՞ն՝ որ մոռախուզն առնէ, տամի:

*Տէրեանի համար միայն բանաստեղծը չէ միակ որբը, ամբողջ աշխարհը  
 այդպէս անխնայում է, կ'ըսէ:*

Մեճք բոլորս որբեր ենք անտուն  
Արծուի թեւերով ջարդուած ու բնկուն,  
Յաւերք բանտարկուած այս անել բանտում:

*Ուրեմն՝ Տէրեանի քաղաքը կամ աշխարհը ո՛չ միայն սահման ունի, այլ  
էւ.՝ բանտ է: Իսկ Մեծարեանցի գիւղը թէ՛ անսահման է եւ թէ՛ երջանկութեան  
կախօրրան:*

**ՊԱՀԸ՝ ԱՌԻԹԻԻՆ ԿԱՄ ՅՈՅՍ, ՀԱՒԱՍԱՐ Է ՄԻԱՅՆՈՒԹԵԱՆ**

*Հակառակ կարծուածին՝ բանաստեղծները դիմադրաւորներ են: Փա-  
խուստ չկայ, երբ ստեղծելու արարքը ինքնին ամէնէն Հարազատ եւ ամբողջա-  
կան լարումով՝ այդ վիճակին մէջ մտնել կը նշանակէ:*

*Յաճախ երբ Տէրեան կը խօսի սենեակի մասին, սենեակը կը ներկայա-  
ցնէ աւելի բան մը, քան ինքնամաշուձ: Իր խորքերուն մէջ տրոփող աշխարհ  
մը: Տէրեան մութ գիշերներու ժամապահն է:*

Ես սիրում եմ աշման գիշերներ տխուր,  
Երբ հոգին – մեմուտը լալիս է խաւարում,  
Երբ բացուում է հոգիս մեմութեան տաճարում:

*Միայնութիւնը մայր է իրեն Համար, խնամատար:*

*Միայնութիւնը, դու ես անձայն ցաւըս օրքում քա օրքերգում:  
Եւ ինչպէս որ գաւակ մը ա՛յ յուսարեկ՝ իր մօրը պիտի գիմէ:*

Անցէ՛ք, յուշեր իմ ապարդիւն, դարձէ՛ք ընդմիշտ մոռացուած էջ,  
Անհուն փառսիր, սեւ լռութիւն, միայնութիւն իմ հոգու մէջ:

*Երկուքն ալ կը սիրեն Հեռացումը, առանձնութիւնը, Տէրեանինը միայ-  
նութիւն է, Մեծարեանցինը՝ մենութիւն: Մեծարեանցի «Իրիկուան իղձը»:*

Իրիկուան մէջ անհետելու յոյսն ունեմայ  
ու լռյետով պարածածեկի հիւանդ հոգին  
մեծ քաղցրութեան մը խառնուիլ ու մեմտեայ:

*Մեծարեանցի նախընտրած պա՛հը իրիկունն է. Տէրեանինը՝ գիշերը: Բայց  
գիշերը Մեծարեանցին տրտումութիւն չի տար, ինչպէս Տէրեանին:*

Ոհ, այս ինչ գրգանք, ոհ, այս ինչ անուրդ  
կու տաս դուռն ինձի, անճրեւոտ գիշեր:

*Տէրեանի սիրտը մայրամուտի պէս կը փակուի ինքնիր վրայ, Մեծարեան-  
ցինը՝ կը բացուի:*

Ու վարդի պէս կը բացուի սիրտս իբր ընծայ  
այն լուսառոգ պատարագին սրբանուէր,  
գոր ծափեցիմ իմ երազներս ծնողայ:

*Տէրեան կը թողու, որ իր նայուածքի արանքներէն սա՛հի ամէն բան, Մե-  
ծարեանց կեանքի թրթիւրը լիտրուուն որսացող երիտասարդն է: Մինչ Տէրեան*

վիշտը կը քամէ, ցմբուր կ'ըմպէ վիշտը, Մեծարենց յոյսի նշոյլին իսկ պիտի փարի կ'ըսէ:

Վիշտը նոր ուժեր / կը բերէ յանկարծ հագուոյս սիրավեր:

Երբ Տէրեան մութի շաւիղներէն կը քալէ, երբ իր նայուածքի անդունդը կը բռնէ խորը, յատակը: Մեծարենց դէպի վեր կը նայի, բա՛րժը, դէպի Աստուած, դէպի արեւ: Տէրեանի համար մահը իրականութիւն է, որ արեւնաբամ կ'ընէ զինք, զոր սակայն չի մերժեր: Մեծարենցին համար նոյնիսկ երբ Մեռել լոցը կը նկարագրէ՝ մահը հեքիաթ է կարծես, ուր ամէն իրականութիւն քաղցրութիւն մը ունի:

ԵՐԱՆԳ ԵՒ ԵՂԱՆԱԿ

Տէրեանի համար գոյներ շատ չկան. սեւն է, ոսկին կամ կարծիրը: Մեծարենց ծիսածանի երանգներով կ'երգէ: Մէկը յազեցած է կեանքէն, միւսը յայսնի է, որ երբեք պիտի չյազենայ: Մեծարենցի հոգին՝

Խօքը գայնի տե՛նչն ունի, լոյսի անհուն խաղերում.  
Երանգներու, շողերու կ'ըղձայ անուրջն օրօրում:

Սակայն երկուքին ալ տիրական զոյնը ոսկին է: Ոսկի աշունի մը մէջ իր բառերու Զուժակը կը նուազէ Տէրեան, Մեծարենցի համար մինչեւ իսկ նուազումը ոսկի է, — ոսկեծիծաղ, ոսկեկար, ոսկելոյս: Հաւանաբար զիրենց անգիտակցաբար կ'առնէքնէին ոսկիին մէջ գտնուող թէ՛ դեղինը, որ իրենց վիճակին՝ դալկութեան խորհրդանիշ է, եւ թէ ոսկիին փայլը, որ յոյսի խորհրդանիշ է:

Տէրեանի ներշնչումը աշնանամած մթնոլորտի մը մէջ կը բարսիւկեանքի այն հուրհրան պահն է իրը, ակամայ շիջելու, չորնալու, թաղուելու պարտադրուած: Մեծարենց գարուն է ոսկեծով. իր բառերը շող, համբոյր, հեշտանք, ծափ, ծիծաղ, ծաղիկ: Մեծարենց ամէն բան ծաղիկի մեւով կը տեսնէ, կ'ըսէ — մի՛ եղծեր ծաղիկը պաշտումիս, ծաղկապատար հիւղիմ գարունը, ծաղիկն սփոփամքիս, այգն է ծաղիկ երազով ի, շուշան հոգի, լոյսի ծփում ծաղիկ, մասիշակ գոլորշիներ, երկար քնուշ ծաղիկը կեանքիս, ծամերու ծաղիկ, կաթնածաղիկ գիշեր:

Տէրեանի պարագային մը՛ւնն է խռովք կամ անգործութիւն թերող այլքը, պէտք չէ մտնալ մտկոլկեան թանձր մտախառնը: Մեծարենցի պարագային՝ արեւի ճառագայթներն են, իր պիղը անհատնում լոյս մը ունի: Հակառակ անոր, որ կ'ըսէ, թէ իր հոգիին մէջ ալ «ձէզ ու իսաւար կայ եւ դժխեմ անդո՛ւթիւն», բայց կը սպասէ «յորդ ու վնիս լայսերում, որոնց բոցը պիտի ցոյլայ անձիւր ցայգուն մէջ հոգւոյս»:

Մեծարենց յաւիտենօրէն լուսադրոյժ պատանին է, որ կը ցանկայ թե՛նքնալ ու հալի, թաւուտքէ թաւուտք թուչկոտի: Իրեն համար լուսութիւնը անշարժ չէ, ինչպէս Տէրեանինը, որուն քով՝ մտապնդութեան մէջ, մենութեան մէջ, հրատարուածի մէջ ամէն բան կը քարանայ: Մեծարենցի համար կարծես լուսութիւնը բուրբաստան է. «Ահ, լուսութիւն, որ կը տեսէ, եւ ստուերներն, որ կը քայլեն»:

Տէրեանի համար բնութեան իրերը անշարժ են, զրեթէ կիսանիւրճի մը մէջ, իր խօսքն է, որ անոնց կենդանութիւն, շարժում կու տայ. միւրջնա Մեծարենցի համար անոնք մշտաշարժ են:



Մշուշը սնդուս լարեր կը փռէ

Բիլ եղբուանին տրտմութիւն կը ցանէ

Իրիկուան հովը կ'ուշամայ թալուկին տենդը մեզմելու

Գիշերը կը գլորի սարերէն

Գաշտավայրեր կը յագեցնան ազգամուզքով

Յարեկին բազմալեզու տենդը կը տնէ:

**ՔԱՂՅՐ ԼՈՅՍԻ ԵՒ ՍԵՒ ԱՆԴՈՒՆԵՐԻ ՄԻՋԵՒ**

*Միայ Հասկնալու չէ, Տերեանի Համար զգայնութիւններու Հրդեհը ան-  
հաճոյ չէ երբեք, բայց այնքան մեծ ու ծանր է, որ կ'ուզէ Հեռանալ մոռնալու,  
հրատարուծի, մէկ խօսքով՝ մեյամաղձտութեան գաւիթներուն մէջ կ'ապրի-  
կ'անդրադառնայ, որ նոյնիսկ իր սիրած իրերը դարձան չեղան իրեն.*

Յագնեցի գրեթից անհամար,  
Աշխարհից այս խաւար ինձ տարէք,  
Ինձ տարէք այս երկրից անարեք:

*Մեծարեցի մօտ յոգնութեան նախանշանը իսկ չկայ: Նոյն բանը մե-  
կուն Համար տանջանք է, տաժանք, միւսին՝ օրհնութիւն.*

Ետ՛ տ էր լեցուն հոգւոյս, ո՛վ Տէր, բազմազեզումն այս շրջա-  
փիւռ...

*Որքա՛ն անընդգրկելի պիտի ըլլայ Տերեանի տանջանքը, որ հիւանդի  
նժան պաղատի.*

Փրկեցէ՛ սուրբից այս սուրսայր,  
Խորախոց խոհերից իմաստուն,  
Մեր սարերը տարէք, տարէք տուն:

*Ուրեմն փրկութիւնը առնեն է. դժգոհ է վայրէն: Տեղ մը կ'ուզէ երթալ,  
նորէն Հեռու տեղ մը, այս անգամ «տուն» կ'որակէ, յամենայնդէպս Հեռուն,  
որ Հանգստավայր մըն է: Իր մահացած Հարազատներուն պիտի դիմէ, պիտի  
խոստովանի հօրը. եւ ահա իր հօրը աշխարհը չէ, որ ցուրտ է, այլ՝ իրը.*

Յայերս կրկին հեռացան ինձնից,  
Կեանքի թախիծն է գրկել ինձ այսօր,  
Ես քեզ եմ դիմում այս ցուրտ աշխարհից,  
Ես քեզ եմ բերում յոյզերս բաւօր:

*Պիտի ըսէ՛ ձօրը.*

Զգտայ, չգտայ ցանկալի համգրուան,  
Զգիտեմ, ես ոչինչ չգիտեմ:

*Եւ այս դառնազի իրականութեան մէջ — որովհետեւ յաւիտենական մանուկ մը կայ ռեւէ արուեստագէտի մէջ — անիրական բան մը պիտի փնտռէ, որ Հեքիաթն է:*

Այն մոռացուած, մոռացուած  
 Հեքիաթները պատմիր ինձ:

*Մեծարենց եւս, չէ՞ որ մանուկ է, քուժայթ պարիկներ պիտի կանչէ, երգի նայեատներ, իրիկուան պահապան հոգին: Մեծարենցի խորհրդաշատ բառը Արեւն է, միշտ զլխագիր. այսինքն՝ իր Հեքիաթը՝ արեւն է ու սէրը:*

Սէր-արեւիդ բոցն երկարէ խորերն հոգւոյս իմ պատանի:

Եւ Արեւին կը սպասեմ ես ցնծապատար

Միտքս երագով լեցուն համակ, ձեռքս՝ ծափով:

*Իր մխիթարանքը արեւն է.*

Ու դեռ տամուկ գիշերին վեուկը զիս շրնդգրկած,  
 վերջին անգամ մըն ալ,  
 Փարէ հոգւոյս խանդաբորբ ու կաթագին,  
 Հիւս՛նդ եմ, բարի՛ արեւ, շոգամ՛, շոգամ՛...

*Տէրեանի մխիթարանքը մէքն է ու մշուշը.*

Ոսկէ մէգն է ինձ գուրգուրում երեկոյ ու առաւօտ:

*Մէզը անդորրութիւն կը ծաւայէ, մօր դեր կը կատարէ, միայնութեան պէտ: Մ-ով սկսող բառեր — մշուշ, մառախուղ, մոռացութիւն, մենութիւն, մարիչ, մոսյոյ, մահ կարծես թէ զինք դուրս կը քաշեն այս աշխարհէն, զինք իր ներաշխարհին մէջ կը տեղաւորեն:*

ԿԻՆԸ՝ ՏԱՆՁԱՆՔԻ ԳԵՀԵՆ, ԱՆՈՒՐՁԻ ՔՈՒՐԱՅ

*Տէրեան իր յոյզերու մակընթացութիւնը պիտի տեղափոխէ դէպի կինը. մեկուսացող ազամարզը չէ հոս, շեռ հասկանում եմ — պիտի ըսէ — չքո խենթ աչքերի հրեղէն լեզուն: Լեզուի եւ ապրումի ինչպիսի հմտութեամբ զբուած է այս բանաստեղծութիւնը.*

Նայաւածքդ տէգ, ժպիտըդ նետ, օ՛, խնայի՛ր,  
 խայթում ես դու:  
 Ինճըդ արեգ, սերըդ աղէտ, օ՛, մի՛ նայիր,  
 դիւթում ես դու:

*Տէրեանի համար տանջանքը անհանդիս եւ ցաւը անընդունելի չէ. երանելի տանջանքներ ունի, ուր միշտ աչքի մը հետու մնալու սովորութիւնը կայ. մղկու, որ աշխարհը, երեւոյթները, անձերը իրենց գործը կատարեն և հաւատարմի հրահանգի բանաստեղծութիւն մը իրմէ, ուր ամէն ինչ կինը պիտի ընէ, որ զինք ազատէ տանջանքէն: Հետաքրքրական է, որ Տէրեան այս բանաստեղծութեան ձեռագիրին վրայ իր խորագիրը դրած է «Տանջանքի գիշեր» եւ յետոյ*

ջնջած: Այս քերթուածը կարելի է գուգահեռ դնել Դանիէլ Վարուժանի «Լա-  
լազէօին, երբ կը պատմէ Վարուժան, թէ այդ շող կէսօրին ինչպէս սեւամորթ  
կնկան գլուխը առաւ իր արեւուն մէջ եւ կուշտուկուռ համբուրեց, հնձաննե-  
րուն մօտ: Տէրհանի բանաստեղծութիւնը:

Մեզքի մթին քարայրից,  
Ուր հսկում ես դու անձում,—  
Մօսք ցանկութեամբ դիտիր ինձ  
Եւ փայփայիր ինձ թափում:

Սեւ գիշերով ինձ կանչիր  
Ամայի խուց աւ այնտեղ  
Հեզ մարմինըս չար տամբիր  
Գզուանձնեքում քո անեղ:

Եւ մութ խորշում անձաւի,  
Ուր սարսափ է, ուր սասկում,—  
Արիւնհաս թոզ ցաւի  
Իմ մարմինը քո գրկում:

Ես քեզ մերժել չեմ կարող,  
Ես ամէն ինչ կը տամ քեզ—  
Սեւ խորհուրդը մեզ գերող  
Ես գիտեմ, եւ դու գիտես...

*Ի՛նչն է, որ զերի դարձուցած է դինք այդ «սեւ խորհուրդին» մոռնալու  
անսպաս տենչ մը ունի: Կինն ալ խաւար է՝ ամէն բանի պէս, բայց կը բաղձայ  
կենդ ներկայութիւնը, որովհետեւ կ'ըսէ, «էս խաւարում կայ մոռացութեան  
մի սկիւրարք»: Եւ այդ մոռացութեան ակնթարթին հասնելու համար ամէն  
ինչ պիտի տայ: Բանի՛ տղամարդ պիտի այս անհուն բարութեամբ խօսի, եթէ  
«տղամարդկային արժանապատուութիւն» կոչուած բան մը կայ՝ պիտի անկէ  
ալ հրատարի, միայն թէ կարենայ մոռնալ, այսինքն՝ զգայնութիւններու վեր-  
բիւումը հեռանայ իրմէ:*

Եւ քաղցր է լինել քո կամքի գերին,  
Քո չարութիւնը բարիք համարել  
Կրժեաբաց ելնել ընդդէմ քո սրին  
Եւ այդ մահաբեր ձեռքը համբուրել:

*Լոյսը անշուշտ Ֆիդիբազան զոյութիւններու մէջ չէ, հոգեկան, վերա-  
ցական, իբր բառով՝ աննիթական բաներու մէջ է. իբր սիրային բանաստեղծու-  
թիւններ ասոր վկայութիւնն են, կնոջ Ֆիդիբազանը դինք այնքան ցանկաց-  
ւած մոռացութեան կը հասցնէ, անոր անո՛ւնն է, որ կը լուսաւորէ դինք-  
«Անունդ քոզ փարոս լինի ինձ / Սուր կեանքի եւ դառը մահու դէմ»:*

*Հագուադէպօրէն կ'երազէ Տէրեան, որ կինը քրոջ պէս ըլլայ: Մեծարենց  
ալ սիրերգակ է, բայց սերը փոթորիկ չէ իրեն համար, կը զրէ:*

Տարիներով իմ նրագո էր սիրոյ զարուս մը խաղաղիկ,  
Քիչ մըն ալ զո՛ւն ծպտէիր, ա՛հ, հոգւոյս համար՝ որ երուանդ է:

*Մեծարենց միայն մէկ տեղ կը գործածէ կին բառը, այն ալ գլխադիր: Իր  
սիրոյ ստորական ազդիկ է, կամ կոյսն է. «Ի՞նչ ինձի սրտիդ գուրգուրանքը*

կոյս»։ Գրեթէ անմարմին է, հոգեղէն արարած մը, հազիւ համարոյրի մը խօսքը կայ. կ'ըսէ «Էդոյն իմ անուրջին»։ Տէրեանի մօտ պատանեկան այս անմեղու-թիւնը, թոթովանքները չկան, Տէրեան կ'երազէ, որ կինը յօշոտ էր մարմինը, Մեծարենց կ'երազէ, որ իր՝ «Էդոյն այտերը կակաչի պէս շիկնին»։ Սիրաւէտ պատանի մըն է, որ Տէրեանի պէս չէ ինկած Փիզբէսկան սիրոյ ճանկերուն մէջ, իր կենսակիցը գիշերն է. ինչ պահը վերածած է կնոջ, ահաւասիկ. «Ազգամուզ-ջին մէջ գիշերը կ'երազէ / պայծառ այգուն վառ շրթները կեռասէ», «Իրի-կունը կը մարի սատափ բարձին վրայ ցայգուն»։ Սպասումը տաժանք չէ իրեն համար, ինչպէ՞ս Տէրեանին. բնութեան իրե՛րն անգամ իրարու սիրահա-րած են, կարգանք զգացումներու եւ տեսարաններու այս զուգորդումը.

Խարտեաշ յուրձերն ինկան գիրկ գրկի:

Լուսնի լոյսին կ'երկարին առուակի զոյգ մը թեւեր:

Առուն յորդառատ՝ դալարին ծոցն է նետուեր:

Սե իր հոյակերտ գործին՝ «Ջրտուգ»ին մէջ, որ գանձազան մակարդակ-ներով կը կարդացուի, պիտի նկատենք սիրային տեսարանները.

Թումբերն անդուլ կը բացուին, ջուրն անշաղար կ'առողէ վարդեմիճը, Քթաստանն, եւ ածուները բոլոր:

Հողը ծծեց ջուրերուն տարփանքն, որ դեռ կը հնչէ եւ հիմակ՝ թա՛ց — կը խոկայ իր երկունքին ապագայ:

Պիտի կարգանք ուրիշ քերթումներու մէջ.

Հիւզակը գագունի լեակին ծոցն է ինկեր:

Գարնան հիւզը տարփոտ շուք ունի:

Լիճերուն պորտը սարսուռն:

Իր շապրած եղեմէն որքա՛ն լոյսի շողի սրակեց Մեծարենց:

### ՀԵՌՈՒՆ՝ ՏՈՒՆԸ

Տէրեան գիտէ, որ բանաստեղծութիւնը անաւարտ է, եւ բաւը մոխիր: Իր անձկութիւններուն ամբողջ բանակը լոյսին հանքէ ետք՝ կը յիշէ անո՛նք, որ լոյսը տեսան ու, շատ չանցած՝ խաւարին գիւղը ինկան.

Ըզձեր, ըզձեր շուշան մաքուր  
Դեռ չբացուած դարձան անիւն:

Իրբեւ ներաւայեաց մարդ՝ իր յուշերուն մեծադոյն սիրահարն է Տէր-եան, եւ քանի որ յուշերը նախանձատ են՝ փրկութիւն չկայ.

Շղթայուած է իմ հոգին գերի թանգոտ յուշերիս,  
Սե չկայ ինձ ազատում անվախճան այս գիշերից:

*Հրահուան գիշերներէ ետք, անպայման պիտի սուղուի իր անձկուս-  
թիւններուն խորը տէրեանական ճշնագրեստ մը ունի այլևս, միշտ վախնալով  
բառերուն ներքին ճառագայթները լոյսին հանելէ:*

Ի՞նչ մնաց ինձ — մարգարտաշար յուշերի գանձ,  
Տրտում գիշեր եւ մեծութիւն անօգնական  
Սիրտ հեղեճոզ կարօտ անմաց՝ ուրիշ ոչինչ  
Երագմերից իմ հրավառ՝ մնաց փռշի  
Սին անուրջներ կորած կանանց — ուրիշ ոչինչ:

*Անհեթեթ, մահարեր, մահաշունջ կեանքէ՛ մը բխած՝ որքա՞ն բնորոշ են  
հետեւեալ աղոթքը, կարծես Տէրեանի քերթողութեան բանալին ըլլային, որ  
յանկարծ մեր նայուածքին կը հանդիպի:*

Լուի է եռուում երգը ցնծութեան,  
Եւ գուցէ չկար իմ ծնուած ժամից,  
Գուցէ ես ինքս եմ հնարել նրան,  
Որ սուտ յուշերով մխիթարեմ ինձ:

*Ուրեմն յուշերը՝ սուտ կամ իրաւ՝ բան չտուին: Երգը իր արձագանգը  
չուենցաւ, եւ օր մը գրեց. «Ո՞ւմ համար էք դուք հնչում մեղեդիներ սգա-  
ւոր»: Չհասաւ հետուն, քանի որ կը բացաղանջէ: «Արիւնճ՛տ ուղի... Երանի  
նրան, / Ով հայրենական տուն ունի հիմա»: Եւ հակառակ մտացուելու ցան-  
կութեան, կը տարակուսի, թէ արդեօք յիշողութեան լոյսը պիտի բացուի՞՝ իր  
երգերուն վրայ — ո՛չ թէ իբր անհատ անշուշտ, այլ իբր նայիրեան քերթող:*

Օ՞ սիրտ իմ, օտար երկնի տակ  
Մեռնում ես անտուն ու անմունց...  
Յիշո՞ւմ եմ արդեօք քեզ նյննեղ,  
Անուճըդ տայի՞ս եմ արդեօք...

*Այսուհանդերձ գիտակից է, որ հայ բանաստեղծը, նայնիսկ իրեն չափ  
նրբահիւս, մաղադիւուն բանաստեղծը, պիտի ուաղմիկի եւ մարտիրոսի հոգի  
ունենայ:*

Խօսքդ պիտի լինի դաշո՛յն, սիրտդ՝ կրա՛կ ահաւոր,  
Պիտի լինես հեզ, որպէս որր, վեհանձն, որպէս քազաւոր...  
Սուսնօտի օրերի մէջ պիտի վառուես որպէս ցահ,  
Որպէս բարիք ընդունես միշտ ե՛ւ տանջաճէ, ե՛ւ մահ:

*Պատերազմ կոչուածը, որ յաւիտենական հրէշի պէս աշխարհի կուրծքին  
չօքեր է, իր երախը բացած էր նորէն մեր պտըլիկ Հայաստանին վրայ: Տէրեան  
գիտէ, որ անզօր է: Բանաստեղծութիւնը խաղաղութիւն կրնայ բուրհել, բայց չի  
բերեր: Անզօրութեան սենեակին մէջ կը յայտնուի դարձեալ մահուան հմայքը,  
ուր պիտի փարատին իր տանջանքները: Այս բանաստեղծութեան մէջ  
զգուանքի կարօտ մահուկը կայ եւ այեւոր մարտիկի ձայնը. սիրտը նման է  
երկրին:*

Դրէ՛ք սիրտըս դարաւոր  
Հարագատ օրրան,  
Օրօրեցէ՛ք վիրաւոր

Սիրտըս նայիքեան...  
 Նուագնեքով պարզ ու մուրր  
 Գգուեցէք նրան,  
 Հայրենական երգով սուրբ  
 Սրգացէք վրան...  
 Ոսկէ թեւեր աւնէ մա, (Ձեռագրին մէջ՝ անբեծ անուրջ ունէր նա)  
 Ունէր բոցեր բորբ,  
 Արիւնամերկ է հիմա  
 Ու երկրիս պէս որբ:

*Կարեւոր անցում մը կայ իր յուշերէն.*

Կ'անցնեն յուշերդ — մշուշների պէս  
 Կը գայ խնդուքիւմ խոր ու անարատ:

*Եւ ան՝ որ կ'ըսէր.*

Ո՞վ պիտի գայ, գուցէ գումատ մի ստուեր  
 Լուս ներս սոգայ ու նարից լուս չճանայ...

Մի՞թէ չկայ ոչ մի հոգի հարագատ,  
 Մի՞թէ չկայ ոչ մի մոլոր ուրուական,  
 Որ ամոքէր քարացումը իմ գումատ,  
 Որ ինձ հանէր այս կոշմարից մոզական...

*Հիմա կ'ուզէ, որ ամէն բան անհետի, որովհետեւ ո՛չ իրականութիւնը  
 գարման եղաւ իրեն (Հոգի հարագատ), ոչ ալ հեքիաթը (ուրուական): «Հե-  
 ոուն» է իր անդորրավայրը, տեղը.*

Կարծես նեղ լինի աշխարհն անսահման,  
 Կարծես ոչ մի տեղ չի գտնում դադար:

*Պայթեցաւ Յեզաիոթութիւնը, եւ ոսկի մէզերէ եւ այլուն յուշերէ հոջ՝  
 կարմիրը լուսաւորեց Տէրեանի մթնոլորտը, իր մեղմավար խուփքներուն տար-  
 բեր թափ ու բոց տալով: Կարծես իրմէ դուրս անհուն բան մը պէտք է գալարէր,  
 որ կարենար դուրս ելլել Տէրեան իր Հոգիին անանցանելի վիճերէն, որ «Հե-  
 ոուն» զառնար յստակ վայր, եւ կամուրջ՝ իր եւ բարախուն կեանքի միջեւ:  
 Տարիներ առաջ շուր սարիքը տարէք, տարէք տունն՝ը պարագայ չէր գրած: Իր  
 երկրին «մէզը» փարատած տեսնել կարծելով՝ յանկարծ փարատեցաւ իր հո-  
 գիին մէզը: Ա՛յն էր պատճառը, թէ ոչ արգէն որուէ էլքէ պիտի դուրս գար իր  
 անձէն, իր անդնդախոր միլամտադատութենէն: Մի՞նչ այդ ամէն բան մըմունջ  
 էր, մըմուն, սարսուռ, այստեղ աղաղակ կայ: Կարծես գարեքով նիրհած  
 ցնծութիւն մը, ուժ մը կը թուէր իր Հոգիէն. կը վարանիմ այս բանաստեղծու-  
 թիւնը կտրատել, այնքան ամբողջական է.*

Չեմ հաւատում ճիշերիմ ձեր գնծագին  
 Եւ խանդավառ ազմուկններին այդ շփոթ.  
 Գաղտնի մի բայն կեղեքում է իմ հոգին  
 Եւ ձեր խինդը սարսեցնում է, որպէս բոթ:

Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին իմ ւեր,

Ո՞վ է քարզման մեր դարաւոր տանքանքին...

Մի՛ խառնէ՛ք մեզ ձեր վայրի, արշի ցեղերին,  
Մեր երկիրը անբուսած, բայց սուրբ է եւ հին:

Որպէս լեռն է մեր պայծառ տեսել հազար ձիւն,  
Այնպէս նոր չեն մեզ համար դաւ ու դառնութիւն:

Բարեւունն է եղել մեր պիտոյեանը, տե՛ս —  
Անհետ կորել, անցել է — շար մշուշի պէս:

Ասորիքն է եղել մեր թշնամին — սահ՛  
Դաշտ է տեղը եւ չըկայ քար քարի վրայ:

Ամրակուր է մեր հոգին — դարերի զաւակ՛  
Շատ է տեսել մեր սիրտը աներ ու կրակ:

Շատ է տեսել երկիրն իմ ցաւ ու արհաւիրք,—  
Լաց է այնտեղ ամէն երգ եւ ողբ — ամէն գիրք:

Գերուած ենք մենք — ո՛չ ստրուկ — գերուած մի արծիւ,  
Զարութեան դէմ վեհսիրտ միշտ, վատի դէմ ազնիւ:

Բարբարոսներ շատ կը գան ու կ'անցնեն անհետ,  
Արեւայական խօսքը մեր կը մնայ յաւեւ:

Չի հասկանայ ձեր հոգին ե՛ւ ծայլ, ե՛ւ օտար,  
Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամէն քար:

Եզիպտական բուրգերը փոշի կը դառնան,  
Արեւի պէս, երկիր իմ, կը վառուես վառման:

Որպէս փիւնիկ կրակից կ'ելնես, կ'ելնես նոր  
Գեղեցկութեամբ ու փառքով վառ ու լուսաւոր:

Արիացիր, սիրտ իմ, ել հաւատով տոկուն,  
Կանգնիր հպարտ որպէս լռչս լեռն է մեր կանգուն:

### ՄՈՒՅ ՈՒ ԲՈՅ, ՆԵՐՉԱՅԵԱՅ ԵՒ ԱՐՏԱՀԱՅԵԱՅ

*Նրստուհիք տարեկան էր Տէրեան երբ Օրհնարկի մէջ փակեց իր աւրբը, յանձնուելով թողախտի ճանկին եւ հարուածին: Որով տարհնեց ատալ, 1908ին, Պոլսոյ մէջ, իր ջախերկորդ գարունին՝ Նոյն Հիւանդութեան գրհ կ'երթար մեր միւս Հանճարեղ բանաստեղծը՝ Միսաք Մեծարեանց: Մեծարեանց կարծես Տէրեանի համար գրած ըլլայ սա տողերը.*

Ու դառնայի ուրախութեան ճիչ մը լայն,  
բանաստեղծի հոգիներուն մէջ նըկում,  
ուր կը թախծի խոհանքն ամպոտ, անանուն՝  
ինչպէս որի՛ քառած շիրմի մը գլխուն...

Տէրեանի զերթողութեան նկարներէն կը հոսի հեռանալու ազդակը, աղերասանքը, անգոր զայրոյթը, Մեծարենցի բնանկարներէն կը ցայտէ կեանքի աշտղակը եւ շարունակը երկնատաք օրհնութեան: Հոն՝ ուր Տէրեանի հոգիին մուխը կայ — ուրուականներ եւ յուշեր կը սարունցենն զինք, հոն կայ Մեծարենցի հոգիին բոցը, ուր ինչ բոցաթել քիթեանիկի պէս գարնան անուրջը կ'երգէ: Տէրեան թափառու է ու մտայլ, անամոք է ամէն բան, շղատիմ խոհերի եւ դարձայ գերիք, կը գրէ. Մեծարենց ըզձածորան զերթուածներու մէջ գունակ—գունակ կը սահեցնէ իր հոգեկան երաժշտութիւնը, կեանքի իւրաքանչիւր պահը երանութիւն համարելով. ինչ զրկանք ալ — ալքատութիւն, հիւանդութիւն, մերժում — արուի իրեն՝ հեշտագալար բուրաստան է կեանքը: Երկուքն ալ կը տեսնեն Պարապը, կեանքին մթամած ծայրերը: Տէրեանի համար ներածննդի, ինքզինքին մէջ սուղուելու պարապ մըն է այդ, Մեծարենցի համար՝ վերածնունդի, ինքզինքէն դուրս գալու պատճառ: Մէկ կողմէ Տէրեանի հրամարումը, միւս կողմէ՝ Մեծարենցի վարակիչ կենսունակութիւնը: Մէկ խօսքով՝ Տէրեան ներհայեցող է, Մեծարենց արտահայեցող: Տէրեան երբ իր անձկութիւններու եւ զգայնութիւններու լիութեան մէջ կը խորատուզուի ներանձնական, ներածննդի թթուածինով, Մեծարենց կը բազմայ մեծնալ՝ հորիզոնական ծաւալիլ, իր ձայնաշարը կ'ուղղուի գէպի համամարդկայինը — յնկկապատար իրիկո՛ւնը ըլլար, գէպի իր գգուանքը կանչող հի՛ւղը ըլլար, ծաղի՛կ ըլլար, հո՛ւրը ըլլար, բազցրութիւնով օծուն բառեր փոփոար, ըլլար կեանքի փաղփուն, պատմու ճանը ծիրանի եւ, վերջնապէս, համայնական ձայնը ըլլար — այն ձայնը՝ որուն խորհուրդէն տարուած էր գիտակցութեան աւազին մէկ օրէն — անոր պէս իր հուրն ու սուկին տար: Տէրեանի նման կեանքէն սպասելիք չունի, որ յուսախար ըլլայ, անդագար տալիք ունի կեանքին Մեծարենց. եւ իր ծաւալումի գործողութեան անհունութեան, անպարփակելիին կը հասնի երբ անանձնական ուրախութեան մէջ կ'իյնայ: Կը յանձնուիս զերթուածին ուժգին հոտանքներուն եւ կը միանաս բնութեան, մարդերուն, աշխարհին հետ: Ահաւասիկ իր գիրկընդխառնումէն քանի մը տեսարան.

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
գունգակներու պէս գայն կախիմ ամէն դըրամ՝  
ու գերթ մարտ ամէն դրան գայն պսակեմ:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
ու չըլլայ, որ ուրիշներու կոծն ու կակամ  
խնդրելու գեմ զըրվէժին մէջ դափսիս ձայնին:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
ժողովել՝ հոգւոյն մէջ ծերերուն, կոյսին, մանկան,  
պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանուարին:

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական.  
ժողովել՝ հոգւոյն մէջ ամէնու՛ն, համայնական  
հոգւոյն ամէն մասնիկներուն մէջ՝ ամէն ժամ:

Ճամբաներէ՛ն, ու գետերէ՛ն, ու դաշտերէ՛ն,  
անառակներէ՛ն, ու լիռներէ՛ն, ու ձորերէ՛ն,  
տանիքներէ՛ն, ու տուներէ՛ն, ու գուռերէ՛ն՝

Տո՛ւր ինձի, Տէ՛ր, ուրախութիւնն անանձնական:



Մտուննք պահ մը Հարիւրամեակի մը պարտադրանքը, որովհետեւ այս քերթողներուն մեզի յանձնած լուսածրարը Հազարամեակները պիտի պահպանեն եւ Հազարդուի, եթէ աշխարհը տեւէ: Անոնք նոր կ'ընեն իսկոյնի պէս, որ մէկ բառով քաղցու կ'ըսուի, կարծես այսօր գրուած ըլլան: Իբր Հայ ընթերցող՝ եթէ կրնանք մտուննք պահ մը նաեւ, որ անոնք Հիւժարտի ճիւղաններուն զոհ գացին: Մահը կարեւոր չէ՝ ի՞նչ գրեցին, ան է կարեւորը: Ասոնք իրենց ապրումներուն պահուստը չտուին, այլ՝ իրենց հոգիին դիտակից եւ անդիտակից ամբողջ Համագրոյթը: Տարբեր բեւեռներէ՝ մեր գրականութեան օտկեպտ, ծփանուս մեղեդի մը բերին: Լուրջ արուեստագէտներ էին, լլաւարկեցին իրենց գրիչը՝ իբր լիարիւն բանաստեղծներ՝ երգեցին օրերուն յիսարյած, Համատրփի եղերգութիւնը: Ամենայն բարութեամբ, բծախնդրութեամբ, Հայ լեզուին հանդէպ ակնածանքով, գերանկուն թեքնիքով եւ, մահանաւնդ՝ մշտական լարուսով՝ հրամցնելով իրենց հոգիին մեղքն ու մոխիրը, բռին՝ որ գրելու արուեստ կոչուած բան մը կայ:

Կը ցաւիմ, որ տեղը չէ անդրադառնալու իրենց յօդուածներուն, յատկապէս Մեծարենցիին, իր իսկ գրականութեան մասին, որ Հասկնանք ի՞նչ բառ է առանց հսի փրոցի եւ անպարծ զոհունակութեան, ըլլալ տարօրէն քնարերգակ, ե՛ւ մտածում, ե՛ւ դիտակցութիւն ունեցող բանաստեղծ: Անոնք շորդեգրեցին, չգործածեցին մեր լեզուն, այլ՝ յղացան ու պաշտեցին: Եւ Տէրեանի խորարմատ յոյզերն ու գաշնաշունչ թարմութիւնը Մեծարենցի՝ լոյսին հանեցին անկազմեյի սերուշխարհ մը, որ հոգին է, մեր գիւղը, հիւղը, հրճուա՞նքը: Մնած մէկ օրէն անթառամութեան ճակատագրով պսակուեցաւ իրենց մրժուցնելու եւ օրհնելուներու այդ ծաղկաշղթան: Եւ զարմանալի չէ բնաւ՝ որ Հայ բանաստեղծներ էին:

Եւ Հակոտակ անոր, որ իրենք դաշկախտով մահացան, Հասկեցուցին, որ պիտի շաւարտի անյողթելի Հայ բանաստեղծութեան ձայնը, այդ խորհրդաւոր անանունը, դիւթական եւ հեռու ձայնը, որ տարիներով իրենց մէջ եւ իրենց՝ մէկ դուրս ամէն տեղէ լսեցին, եւ իրենց օրերը մկրտուեցան անոր խորհուրդով:

Եւ Հակոտակ անոր, որ իրենք անարիւն մահացան, Հասկեցուցին, որ ժամանակի դարերը, տարածութեան անցարգելները եւ աշխարհի բոլոր լեզուները պիտի չկարենան կատեցնել Հայ գրականութեան մաքուր, առողջ արեան լրջանատութիւնը:

1986  
ՆԻԻ ՃԸԲԻ

ՎԵՃԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

# ՄՕՐ ՊԱՏՄԱԾԸ

Պոլսոյ շնորհաբարձ միութիւնը կ'որոշէ յետադէպ շնորհակցում մը անդրազանապէս Մենարեանցի մահուան 14րդ տարեկցին (1922): Այդ առիթով պարտականութիւն կը տրուի Հրանդ Բալուեանի եւ քանի մը ընկերներու, որ երթան եւ բերին նաեւ բանաստեղծին մայրը: Բալուեան եւ իր ընկերները Պէշկիթաշի գաղտնիքը դաժնուող հայոց եկեղեցիին փողոցը դաժնուող փայտաշէն տնակի մը մէջ կը հանդիպին Մենարեանցի ժորը եւ զայն կը տանին տղուն ի պատիւ տրուած մենարեանի: Հրանդ Բալուեան Պարբէշի շնորհակցումը մէջ պատմած է այս հանդիպումը՝ սա յառաջարկով: «Ո՛ր մէկ հարցում. ձգեցինք, որ ինք խօսի: Նախ Միտաքի քանի մը խօսքեր լինց, նկարագրէր քանի մը դիմեր, լուսանկար ու յետոյ արցունքի կաթիլները զինք լուսուցին»:

Շարունակութիւնը շարունակ է բանաստեղծին ժորը լրջփնտրելն—

«Քանի հազար անգամներ կ'ըսէի. «Տղա՛ս, մի կարգար, մի գրեր, ինքզինքդ մի հատցներ, պիտի մեռնիս», մտիկ չէր ըներ. դպրոցէն դարձին, սա դրասեղանին առջեւ անցած՝ մինչեւ կէս գիշեր գլուխը վեր չէր առներ գիրքերուն մէջէն, եւ երբ զինքը կ'ընդմիջէի՝ կ'ըսէր. «Անուշիկ մայրիկ, ինձի հայրենի երգերէն երգ մը ըսէ», ու իբր թէ իմ երգս էր, որ մտիկ կ'ընէր՝ ինքն անդին, դարձեալ թուղթերուն մէջ թաղուած՝ կը գրէր:

«Գիւղի հազուատներով զինքը Սերաստիս տարինք. չափազանց ծայր տղայ մըն էր. միշտ իր երեսին կը պոսայի. «Դուռն մարդ չպիտի ըլլաս». մտիկ չէր ըներ. ո՛չ մարդու մէջ կ'ենլէր, ոչ ալ փողոցը, դրան առջեւ ընկերներու հետ կը խաղար. կը քաշուէր այգիներու շուքն ու ժամերով միս-մինակ ծառերը դիտելէ վերջ, երկոյցին չոպանի պէս տուն կը վերադառնար: Չինքը տեսակ մը ջղայնոտ խենթի տեղ դրած էի. չափազանց եւ նոյնիսկ վերջին ծայր բծախնդիր էր մաքրութեան. իր հազուատներուն վրայ փօշիկ բիծ մը չպիտի գտնուէր. կոկիկ պիտի հագուէր, ճերմակ եւ մաքուր:

«Վերջին ծայր կատակասէր՝ իրիկունները մեզ ժամերով կը խնդացնէր. իր կեանքը տարօրինակ սրամտութիւններով լեցուն ամբողջ քրթիլ ու զուարթութիւն էր

«Յայնուս, — շարունակեց մայրիկը, — աղջիկներէ ամչցող կարմրող բնաւորութիւն մը՝ կը սարսուտար, երբ մատները բարկամուտի մը դաշտէն, ու այդ տեսեց մինչեւ իր մահը: Իր Հիւանդութեան սկիզբը օրերով գաղտնի պահեց. կ'ըսէի. «Միտաք, տղա՛ս, ինչո՞ւ տժգոյն ես, ի՞նչ կ'ըլլաս»:

— Ոչինչ, մայրիկ, պզտիկ յուզում մը եւ այդքան:

«Ճերմ գինքը օգափոխութեան համար թոփ Գափու փոխադրեցինք՝ կրկին իր նախկին բնաւորութիւնը. քերասը, արեւին տակ ժամերով նստած՝ գիրքը մեռէին չէինք կրնար առնել:

Ու յսկնարծ Միտաքի լուսանկարը առնելով ըսաւ.

«Մենած օրն ալ ասանկ Յիսուսի պէս պզտիկ մարդ մը ունէր:

Յուլիս 22ին, Կիրակի առաւօտը, հաստ արեւի մը մէջէն, միմակս գացի



Մեծարեւոյցի մայրը

Մեծարեւոյցի մայրը հաւաքօրէին բերելու: Տաւնէն դուրս ելած պահերնուս՝ ըսաւ.

«Տղաս, կի՞տա ինձի Միսաքին Հարսնիքին տանելու էիր: ... Այդ ամառը Շարաթէն Կիրակի լուսնալու գիշեր մը, աքաղաղներու կանչէն պահ մը առաջ, տղուս անկողինին վրայ ոտքերու կողմը նստած կը նսկէի: Կուրծքին հեռք այլեւս չէր լսուեր, մերթ ընդ մերթ չոր Հազ մը պզտիկ շիւններ եւ այրքան: Մէկէն ինձի դառնալով՝ «Մայրիկ, վայրկեան մը անուակէն դուրս կ'ելլե՞ս, ես հիմա ընզի պիտի կանչեմ եւ դարձնալ կու գաս կը նստիս այս անգամ շատ-շատ»: Ու Հազիւ դուրս ելած՝ լսեցի իր ձայնը, որ կը Հծծէր. «Հոգի՛ս, հոգի՛ս»: Հիտզ վայրկեան դբան առջեւ սպասելէ վերջ, ձայնեցի. «Միտա՛ք, տղա՛ս, ներս մտնե՛մ»: Ոչ մէկ ձայն. կրկնեցի, լուռ էր: Ու անկէ վերջ, վայրագ կերպով անկողինին վրայ ինկայ:

«Քեղծ եւ անուշիկ տղաս, սիրաբ այնքան բարի էր, որ նոյնիսկ մահը չուզեց ինձի ցոյց տալ, տառապու՞մս նուազեցնելու Համարք:»

Երեկոյ մը, Պոլիս, լուսինաց փողոցի մը պատի կողքին յամբաշայլ Մեծարեւոյց կը կարդայի: Բանասեպծ Վ. Թաթուլ Հանգրայեցաւ, Միսաքի ամենամտերիճ ընկերներին մին ու սկսաւ Մեծարեւոյցի կեանքը բրբրել: «Նոր տարիքէն Հատրիկը ձեռքս առնելով՝ առաջին բացուածքին «Անուան մերձագրով զերթուածը տեսաւ ու ըսաւ.

«Կեանքիս մէջ այդ որը չեմ կրնար ծոռնալ. Թո՛փ Գափու Մեծարեւոյցը տեսնելու զացած էի, առաջարկեց զի՛ մը դարչո բարձրանալ, նամբան ցորենի արտի մը եզերքը պատահմամբ ցանկապատի մը տակ պզտիկ ծաղիկ մը զունելով Հարցուց.

— Վայրի ծաղիկ, անուան ի՞նչ է:

«Ու զի՛ մը անգին ծունկերու վրայ «Անուանը անկողնադրծելով, վերջաւորութեան՝

Գիտե՛ս, ծաղի՛կ, անուան ի՞նչ է դոզի՞ն՝ գոր ինչ տրուաւ հովիկ, ու ձայնին որ զիս կը կանչէ:...

«Այդ պահուն առաջին անգամ Համարձակեցաւ ինձ ըսել. «Վարձում, զի՛-գի՛ պիտի Հասնիմձ (Ենուասարք)» 1925, Պուքրէշ, պրակ Գ.):

ՀՐԱՆՆԵՐ ԱՆՍՆՈՒՆ

### ԱՆՍՆՈՒՆ

Վայրի՛ ծաղիկ, անուան ի՞նչ է. բա՛ւ, մատուր ու կանանչէ՛ ցանկապատին շուքին մտած վայրի՛ ծաղիկ, անուան ի՞նչ է:

Ըսպիտակ, կար՛ ու մագտակէ բուրոզ ծաղիկ, անուան ի՞նչ է. բա՛ւ, էի՛ մը գէթ չե՛ս դոզար, հովիկն անուան Երբոր փըշէ:...

Հըպարտ ծաղիկ, անուան ի՞նչ է պարիկին, որ անցաւ քովէդ, հեզուկ ու սեւ սաքի վէտ վէտ ցայտ մը ձրգած իր քանակէն:

Գիտե՛ս, ծաղի՛կ, անուան ի՞նչ է դոզի՞ն՝ գոր ինչ տրուաւ հովիկ, ու ձայնին՝ որ զիս կը կանչէ:...  
ՄԻՍԱԳ ՄԵՃԱՐԵՆՑ

Խոսք՝ Մ. ՄԵՆԱՐԵՆՅԻ

ԵՆՐՆՈՒՆ

Երաժշտ.՝ ՍԻՐՎԱՐՅ ԳՐԻԳՈՐՆՆՈՒԿԱՆՆԻ

*p*


Վայրի ծա - դիկ ա-նունդ ի՞նչ է, ը-տե մա-տուր ու կա - ճանչ է.

*mf*

ցան-կա-պա - սին շու-քին նրա - տած վայրի ծա - դիկ, ա-նունդ ի՞նչ է,

ը-սի-տակ կար ու մազ - տաք է. բու-րող ծա-դիկ, ա-նունդ ի՞նչ է,

ը - սե քիչ մը գիր չես դո - դար, հո - վիկն ա - նուշ երբ որ փե - չէ.



## ՄԻՍԱՔ ՄԵՆԱՐԵՆՑ

Միսաք Մեծարեկ

Ճանաչիր գոյները, թիթեռ,  
 հրածեշտի բազուկի,  
 բուհիկներով և փխրուն  
 ինչ արագ ես սլանում  
 դէպի աւարտը օրուայ:  
 Ըս ո՞վ է քեզ այսֆան նուրբ  
 ու գեղեցիկ նկարել —  
 ծերունագարդ վարպետի իմաստնացած  
 ձեռքի տակ  
 մատիտի վարժ,  
 սահուն վագր — յետագծի պէս կայծի  
 խարոյկից վեր սուրացող —  
 յղացման կարճ ակնթարթ  
 մթութեան սեւ կտաւին  
 եւ ինչ գծեր աւարտում...  
 Վաղամեռիկ պոետի երագի պէս գունագեղ  
 եւ առաւել կատարեալ,  
 եւ առաւել գեղեցիկ, բազմապատկուած գոյներով —  
 չէ՞ որ նա քեզ նայել է արցունքոտուած այճերով...  
 Իսկ երբ իջնի իրիկուն եւ ազմուկները մարեմ  
 եւ գոյները վերանան, քիչ-քիչ խամրեն խաւարում՝  
 թուերդ անգոր տարածած կ'անշարժանաս դու մթնում  
 եւ աստղերը գարմանում  
 քեզ կը նայեն վերելից  
 համրացումի այդ պահին —  
 փոքրիկ մի սիրտ է լռել,  
 բայց այս ինչ մեծ լռութիւն  
 յանկարծ տիրեց աշխարհին...

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

## ՅԱԻԵՐԺՈՒԹԵԱՆ ԳԵՂԱՊԱՇՏ ՊԱՏԱՐԱԳԻԾԸ

Բանաստեղծը բնութեան ցուացումը պէտք է ըլլայ. թէ ոչ բանաստեղծ չէ՛ իբր պէս. քերթուածները իբրև բառ պէտք է ունենան տերևիկն քրթառումը, թռչումնին դայլայլը, մարդերուն գորովը, դաշտին ու լիբան մշտանոյն գորով-թիւնը: Բանաստեղծին ձայնը տիեզերական յարաբերականութեան մը լարը պէտք է ըլլայ, բոլոր գայութիւններուն համադրական քրթառումովը տրոփում:

*«Ինքնադատութեան փորձ մը...»*

Մ. ՄԵՆՍԻՆԵՑ

### I

Բնութեան և բանաստեղծութեան միջև գոյութիւն ունեցող զարաւոր յարաբերութեան տիեզերական բնոյթին դիմաց պահ մը կանգ առնող և ճշմարիտ շերթուածը սահմանող Մ. Մեծարեանի վերի արագ հաստատումը, անկասկած, կրնայ հասու լոյս սփռել մեծարեանցեան գրականութեան ոլորտներէն ներս թափանցել փորձող որեւէ իմացական ճիգի ընթացքին, ներքին լոյսին օժանդակ նպաստովը բանալով այս արտակարգ և գտարիւն բանաստեղծին շերթողական տրամարանութեան ողջ համակարգին գաղտնիքներուն դուռները, բայց, մա՛նաւանդ՝ այդ տրամարանութեամբ երկնուած իւրաքանչիւր ստեղծագործութեան շեղուիւն և արիւնին ճմութ մնացած անկիւնները, ինչպէս պիտի սիրէր ըսել նոյնիւքն Մ. Մեծարեան: Այս ներքին լոյսը յատուկ նշանակութիւն կը ստանայ մա՛նաւանդ անոր համար, որ բնութեան յատկանիշներէն երկուքը՝ խաւարն ու լոյսը բազմիմաստ և գործօն ներկայութիւն են Մ. Մեծարեանի շերթողութեան մէջ: Մութը, որ կու գայ դիւշերուան հետ, խորքին մէջ միայն բնութեան սովորական մթութիւնը չէ, այլև

տեսանելի պատկերն է աներեւոյթ միւս մութին, բանաստեղծին ներաշխարհին վրայ նստած անձկութիւններու եւ աստապանքներու այն ներքին մութին, որ կը յաճախէ «Կենտրոնի պէս քայծադէմ», ապա կը դառնայ «անյաղթան հարեի գիտակցութիւն» («Կենտրոն կը սպասէ, մտքին մութին մէջ դաժման») եւ որուն՝ «չյարդ ալիքները մութին», «կը հոսիմ գալար գալար»:

Բանաստեղծութիւն առ բանաստեղծութիւն եւ Հոգեվիճակ առ Հոգեվիճակ տարբեր բովանդակութիւն եւ իմաստ ստացող մութը տակաւին է Մ. Մեծարեւնցի ապրած տաղնապաններն ու անձկայի կացութիւնները խտացնող, բողբոջող եւ խորացնող լիզուն, որ լոյսին Հետ դաշնակցելով՝ Հոգեկան երկխօսութիւնը կը վերածէ ստեղծագործ բազմաձայն գրոյցի: Լոյսը եւս, իր կարգին, միայն բնութեան կենսութիւնը չէ, այլեւ է՝ Հիւանդ Հոգիի մը անպարտեւիտութեան վճռականութեամբ զպանակուած անթաղելի ճշմարտութիւնն ու անյաղթահարելի ուժաղբիւրը, Հակառակ Մ. Մեծարեւնցի այն խոր գիտակցութեան, որ «չյայնս իմ հոգւոյս բիշ բիշ կը մաշի»...

Մահազուշակ անդորրութեան խաւարին եւ յախտեմութեան անմարարշալոյսին միջեւ ծոււլող ու խորացող էսպէս ներանձնական տրամ մըն է վազ տարիքէն մահուն անդունդին Հասցեագրուած «այս Հիւանդ, Հանճարեղ պատանիին» ողբերգութիւնը, որ ընթերցողին կը ներկայանայ «բոյր գոյութիւններուն Համագրական թրթուսովը տրոփուն», իբր օսկի լարը «տիեզերական յարաբերականութեան», տարօրէն Համամարգէլային եւ անանձնական երանգներով եւ, իբրեւ այդպիսին՝ ցարդ կը մնայ եզակի նուաճում մը Հայ գրականութեան մէջ:

Ահա թէ ինչու Մ. Մեծարեւնցի բանաստեղծութիւնները շուրջ 80 տարիէ ի վեր կը կարգանք եւ պիտի շարունակենք կարգաւ ճիշդ այնպէս՝ ինչպէս երկնաշէջ, անատրոյ, ծովն ու գեփեւոր կը կարդանք: Այսինքն՝ կը կարդանք ու պիտի շարունակենք կարդալ մեր ներքին աչքով, արեան բանականութեամբ եւ զգայարաններուն տրամաբանութեամբ:

## II

Անկախ թափանցիկ ու գրեթէ աներեւոյթ երանգներով բառուած Մ. Մեծարեւնցի բերթուածներուն վարակիչ շերտութենէն եւ այդ Հոգեզգայլ շերտութենէն բխած անանձնական անդրազարմեբէն, նոյնքան եւ աւելի թելադրական է այդ արտոմները փակող-բացայայտող այն գեղապալատ մտածողութիւնը, որուն լոյսով իմաստացած զգայութիւններու եւ յոյզերու միտախփարհը ամենայն նրբութեամբ պատկերարանաստեղծած գոհարները կը կոչուին «Ձմրան պարզ գիշեր», «Միքերգ» («Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին...»), «Երագի պահեր», «Աֆասիաներու շուրջն տակ», «Կիրակի-մուտք», «Մթնաշաղկներ», «Արեւներ», «Կապոյտ յաճուճներ», «Ջրտուֆ», «Ատտաճաճաճաճ», «Առնչուքիւն», «Հիւրը» եւ «Ալլայի» ներու ամբողջ շարքը:

«Լոյսին», «Գոյնին», Չեւին ու Բոյրին» տարբերով երկնուած իրապէս նշար տաղեր են գրութեան ներքին լոյսով կրկնապատկուած, վերալուստացուած Հնչեղութեամբ զպանակուած այս բանաստեղծութիւնները, ուր նիւթէն աննիւթին բացուող պատկերներու լեզուով Մ. Մեծարեւնց լայն կը բանայ իր յուզաշխարհին տեսազաշար:

«Միտուն ձայններու, «ժխտիչ վարդներու, «գիւնով լոյսներու, «բուրեան հրազներու, «սաստափէ մթնշաղջներու, «ցօղէ աչքեր»ու, «արեւաշող փայտաններու, այլ մանաւանդ «հաշիւով օծուն ու բալասանով» «Նշտագին

գիշերքներու այս անդրիրական աշխարհին մէջ է, որ ան կ'ապրի ե՛ւ ցնծութեան, ե՛ւ անկման ժամեր, երբ լիառատ ծծելէ ետք Հնչտազին՝ «կաքը մեղմահոս լոյսիդ տարփամփին՝ / Ու զով շաղերուդ կախարդանքը քաց», էգին միտերէն եւ արիւնէն բարձրացող երանութեան արուեստներուն դէպ չհասած, յանկարծ, ձայներու, զգայնութիւններու եւ խոկումներու դիւթաշխարհը անգամ մը եւս լայն կը բանայ գիշերուան խորհրդաւոր վարագոյրը, անջրպետբանաստեղծութիւնը կը սկսի խորանայ յուշիկ-յուշիկ, քան-ա-ստեղծը կը բռնուի իր իսկ ողբերգութեան բանէն սակզծուող խորհուրդին լուսահիւս ցանցին մէջ, գիշերուան լուսութիւնը աւելի եւս կը շեշտէ իր լուս ողբերգութիւնը, ու ան ինքզինք կը զգայ լքուած ու սկար՝

Լոյսը մարտծ սենեակին մէջ,  
 Ուր կը հասին գայար գայար  
 Յորդ ալիքները մալթին,  
 Ու կ'անհետին  
 Արծաթ շողերն երազի...

«Ծաղիկն սփոփանքին» երազելէ պարտաւած Հոգին առաւել եւս կը ծանրաբեռնուի «անծկութիւնով անպատու», երբ «զարանքն ու կասկած»ը կը դառնան իշխող ներկայութիւն, երբ իր ձանձրոյթն ու վիշտը երազին սփոփանքով մեղմել փորձող բանաստեղծը ի գուր կը շարունակէ սպասել

Ջոյգ մը աչքեր՝ մեղեսիկէ որոնց ճըրագը վառի  
 Հոգւոյս մէջ ու խաւարի  
 Ամդոհուրեան մէջ դժխեմ:

Իրականութեան գիտակցումը, որ նաեւ իր անզօրութեան լուսեայն խոստովանութիւնն է, «մթաճած ճամբուն» թանձր պատկերով կը հաստատազրէ խաւարին զօրութիւնը: Բայց գիշերը, որ արեւին եւ սիրոյ ներածականն է նաեւ, կը շրջանցէ իր սեւ խորհրդանիշը, երբ «ինչպէս ծով անհուն» կը սկսի հստի «զէշպի արուեստն երազին», կը դառնայ լուսածոր ծննդավայրը իր հոգիին վերջերուն, Հաշիւով օծուն նիրվանա, որուն ծէսերուն հետ կը ծնի իրիկուան մէջ անհետելու յոյսը, «ժառոտրունց հետ եղբայրանալ / տարփա՛զն՛զն ըլլալ ծաղիկներուն...» անզսպելի ցանկութիւնը, որուն թափանցիկ հմայքէն գերյա՛ն յսմ ունենալ...» անզսպելի ցանկութիւնը, որուն թափանցիկ հմայքէն գերյա՛ն յսմ՝ «Համբոյրիդ, գիշեր՛ր, պատուիման է քաց» պոսթիկուճով իր տուայտանքներուն կարօտները բանածեւած բանաստեղծը կը նոյնանայ լոյսին հետ, կը դառնայ լուսեղէն ներկայութիւն, երբ՝

սիւք մը կ'անցնի, տնքուներ ծա՛փ կը գարնեն ցնձագին.  
 վարէն քուրը կը խայտայ, կը խնդայ լոյսն ալ վերէն:

Եւ լուսնակով արբիւր ծղրիդներու ճլուսարծաթ բարբառով՝ եւ անուներու լիացումով գրկնով մշակին պարզ, բայց խորապէս իրաւ երջանկութեամբ աննիւթացած սիրոյ արուեստ բանաստեղծը, այս կենսաթրթիւր պահին մէջ, կը նոյնանայ բնութեան հետ, կ'ըլլայ գերազոյն լիացումը՝ Եարժուճին, կենդանութեան խրախճանքին աննիւթեղէն երգը, երգը Հոգին արօփուն, աւելի նութեան խրախճանքին աննիւթեղէն երգը, երգը Հոգին արօփուն, աւելի ճիշդ՝ նոյնինքն կենսաթի արբիւր ոտողուած անզաւանան հոգը, որ «ծըրծեց քուրիքուն տարփամփն՝ քր դէս կը հնչէ, / եւ հիմակ՝ քա՛ց՝ կը խոկայ իր երկունքին ազգայն»:

Այսպէս, յաւերժական խորհուրդին ուղեւոր լուսահարը, բնութեան ու մարդու կենարար միաձուլման տօնահանդէսի լուսեղէն ծովուն մէջ, իր վաղ-



ւան երկունքը խոկացող մարցեղինացած հողին այս յուզիչ, այլ տարորէն վա-  
րակիչ պատկերով՝ կը քնջէ խաւարին կապարեայ տիրութիւնը եւ նոյն գիշերէն  
կ'արարէ անոր հակապատկեր ճշմարտութիւնը, երբ գիշերուան յաղթահարու-  
ած բնկորներին կը ժայթքեցնէ աղջամուղջի շողերը եւ կը գառնայ միւս իրի-  
կունք՝

Լի երգովը քոչուններուն, մարդերուն,  
• ու տարբերուն ազադակովը տրոփուն

Լի գանգակին զօղանջներովն երկեանքն՝  
Խնկապատար, օծուն, քառուած ժամի պէս

Բայց մա՛նաւանդ՝

համայնակեան, չքնազ, քաղցրիկ, լուսազէս.

որպէսզի՝

եւ ամէնուն տայի հուրբէս, ոսկիէս:

Եւ մի՞թէ այլ բան եղաւ բանաստեղծութիւնը այս սիրտունչ քերթողին  
Համար, որ անսակարկ ինքնաբաշխումի լուսահանդէսի մը վերածեց իր մա-  
հաստուեր կեանքը, շարունակ դարպասելով շտերեւիմ քրքրումը, քոչունիմ  
զայլայլը, մարդերուն գարովը, դաշտիմ ու լեռան մշտանորոգ գորութիւ-  
նը: Ատ՛նք: Եւ ասոնցմէ առաջ եւ վերջ՝ այս եւ այլ մշտանորոգ գորութիւն-  
ներուն ակնադրիւրը — Տիեզերական Խորհուրդը: Եւ մի՞թէ կրնար այլ ըլլալ  
ուզին Աստուծոյ էութեան հետ ընդելուզումը գերագոյն նպատակի վերածած  
լուսապաշա ուղեւորին, որ հազաւ «կեանքի փազվում պատմութեանը ծի-  
րանի- / կենսաբազմիկ հոգւոյն երազն անպատում», որպէսզի, իր կարգին,  
ըլլայ լուսյս, Ձեւ, Երանգ, Թրքրում- / բանաստեղծի հոգիներուն մէջ մե-  
նիկ»:

Բանաստեղծներու հոգիներուն մէջ եւ հոգիներուն մէջ բոլոր տառա-  
պահարներուն եւ նզովեալ ծնունդներուն, որոնց Համար Տիեզերական Խոր-  
հուրդը կրնայ մնալ անթարգմանելի առեղծուած, անհասանելի գաղտնիք՝  
մարդկային սահմանափակ ուղեղին: Ահա թէ ինչու Արեւը, Սէրը, Բնութիւնը  
մահէն գերիվեր եւ գերազօր դաւանած բանաստեղծը ապրեցաւ արարչագոր-  
ծութեան միտքը, բիւրեղեայ, լուսաջերմ անջրպետին մէջ՝ իրբն լուսատու  
արեգակի մը, որուն Համար կեանքը զարձաւ ինքնաճանաչման եւ, այդ ճամ-  
բով՝ տիեզերական խորհուրդներու ճանաչման լուռ պայքար, հոգեկան եւ  
իմացական գոյամարտ, որուն շիկացած Հարցադրումները գտան մէկ ու միակ  
պատասխան — ԱՆՀՊՇԼԻ Եւ ԱՆԺԱՄԱՆՑՆԵՒԼԻ ՄԵՍԸ: Եւ անհպելի ու ան-  
մամանցելի յաւերժութեան աննիւթեղէն էութեան հետ նոյնացման տենդով  
վարակուած բանաստեղծը թափանցեց իրերուն ներքին լուսակունքներուն,  
աներեւոյթ՝ լոյսը դիտեց եւ ապրեցաւ արեգակին շողերուն մէջ, լուսնակին  
պլպլացումներուն խորը, կենթ մէն մի գիծին մէջ («ճայտածֆիդ մէջ երանո-  
սան»), ու տակաւին՝ Թուղթին վրայ երկնուող յարաբերութիւններու լոյսին,  
Բանաստեղծութեան լոյսին մէջ, որուն ճառագայթներով գրեց իր մահը, իր  
մահը վերածեց Մնունդի, վախճանէն թե ու թռիչք առնող իմացահոգեբանա-  
կան լուսաթռիչքի:

Վերջապէս, իր բանաստեղծական փորձառութեամբ Մ. Մեծարնց  
Հաստատագրեց, որ մահուան անխուսափելի վախճանակէտին ձգուող մարդ-

կային գոյութեան ճշմարտութիւնը է՝ նաեւ ճշարտորոշ պայթար՝ նոյնինքն այդ ուղեւորութեան գէժ:

Աւելի՛ն. ան եկաւ փաստելու, որ պայթարի հիմնական զէնքերը կը կոչուին, Յոյս, Մէր եւ Բանաստեղծութիւն: Բայց մա՛նուանք բունաստեղծութիւն, որովհետեւ բանաստեղծութիւնը միակ ուժն է, որ չ'ենթարկուիր կացութեան՝ ճը այլ կացութիւն անցնելու մարդկային գոյութեան ճշմարտութեան, այլ. ընդհակառակն, ո՛չ միայն կը վերանուանէ կորուստներու շարքին անցած պահը կամ յոյսը, այլև կը չըջանցէ նոյնիսկ մահը:

Որովհետեւ՝ բանաստեղծական փորձառութեամբ նուաճուած լիզուին լոյսը, որ կարելի չէ կաշկանդել ժամանակի եւ տեւողութեան կաղապարներուն մէջ, կ'անցնի մահէն առաջ, կը ներխուժէ իրերէն եւ կացութիւններէն ներս, կը մերկացնէ զանոնք իրենց գնայուն զգեստներէն, կը միաձուլուի անոնց էութեան հետ, կը դառնայ մնայունին տեսիլն ու խուլարկու աչքը, որ կը չըջանցէ նաեւ բանաստեղծն ու անոր ժամանակաւոր գոյութիւնը (մահը) եւ կը հաստատէ իր անժամանցելի եւ յաւերժական խորհուրդը:

Եւ ճիշդ այս անբացատրելի ուժին կ'ակնարկէ գերման փիլիսոփայ Մարթին Հայտեփէր, երբ կ'ըսէ. «Բանաստեղծութիւնը խօսքիմ միջոցաւ կատարուած հաստատումն է՝ խօսքիմ մէջ»: Եւ թէ՛ մը անդին կ'աւելցնէ. «Բանաստեղծութիւնը գոյութեան հաստատումն է խօսքի միջոցաւ»:

Քօսքին զօրութեամբ տիեզերական գոյութիւնը հաստատելու, իրերուն մեքափղզիք գաղտնիքները բացայայտելու եւ մահուան փորձառութիւնը մահացող սերմահատիկին մէջ իսկ թաքնուած ծիլին ուժով յաղթահարելու գաղտնիքը անձանթ չէր Մ. Մեծարենցին: Բնութեան ծոցին մէջ ծնած, բնութեան կանխաճշմարտութիւնները ապրում փորձառութեամբ ձեռք ձգած բնութեանապաշտ այս սիրերգակը նաեւ քաջ գիտէր, որ ժամանակաւորը, այսինքն՝ մահուան դատապարտուած իրականութիւնը նոյնինքն բանաստեղծն է, մարմինը, միե՛ջ հոգին՝ տիեզերական խորհուրդը, աւելի ճիշդ՝ բանաստեղծական փորձառութիւնը է եւ կը մնայ հաստատող-արարող մշտաբարոք կենսադրիւրը: Եւ այս փորձառութեամբ ու այս փորձառութեան էութեան մէջ է, որ կը հաստատուի, կ'ամրապնդուի եւ կը հարստանայ լուսապաշտ ժողովուրդներու պատմութիւնը, այս շօշափելի աշխարհին վրայ:

### III

«Կարելի եղածին չափ ինքզինքս ըլլալու գիտակցութեամբ հայ քերթողութեան անդաստանէն ներս հաստատ քայլերով մուտք դորձած բանաստեղծ մը եղաւ Մ. Մեծարենց, որուն բնութեանապաշտ էութենէն բխած լուսաշորք բանաստեղծութիւնը հայ սրբականութիւնը հարստացուց բիրենդեայ եւ ձոյլ բանաստեղծութեան արդար որակով:

Բնութեանապաշտ ու գեղապաշտ արուեստագէտի խառնուածքը, որուն ապացոյցը Մ. Մեծարենց սուուա իր առաջին իսկ նախափորձերով, ստեղծագործական կարճ կենսափորձի մը ընթացքին չըջանցեց ե՛ւ իր, ե՛ւ զալիք ժամանակը՝ հիմնելով յաւերժական, բացարձակ ժամանակին լոյսով ու շունչով, պոյներով ու ձայներով, խորհուրդներով ու տեսիլներով երկնուած սուկի քերթողութիւն մը, որ Ենթահայի - Նարեկացի - Քուչակ համայնական սիրերգութեան ակունքներէն սնանելով՝ հաստատեց իր գեղապաշտ գիմազիծը — նուրբ ու միատիք պատկերամտածողութեան մը մեծարենցեան համանուագը:

Մագիկներուն ու արշալոյսներուն, արասիաներուն ու հելդերուն, օտակի թելերուն ու զլուսէ շափրակներուն, երազող ջահերուն ու զկուսածին

այդերչուն, ազօթող ծառերուն եւ քրուրեան վարդերուն աննիւթեղէն էութեան ճշմարտութեան հետ նոյնացած այս տարօրէն բանաստեղծ բանաստեղծը, իր թէկուզ կարճ, բայց էպպէս խոսացուած ստեղծագործական կենսափորձերով եկաւ հաստատելու, որ բանաստեղծութիւնը իրերուն եւ վիճակներուն ներքին անտեսանելի լոյսը բացայայտելու արուեստն է, ստեղծագործական այն դրսապշտ պատարագը, որ մահուան գորշ եւ անշնչելի իրականութենէն իսկ զիտէ հիմնել լուսակարկաչ շարականներ եւ արարել մահուան սպառնալիքը կեանքի շողերով ու լուստեսութեան ծիածաններով երփնագրող, մաքրազրոյ ջերթողութիւնը:

Վերջապէս՝

«Սակայն ինչ որ կը մնայ, բանաստեղծները կը հառտատեն» գերման բանաստեղծին՝ Հոլտըրէյնի թէկուզ քիչ մը մեծամիտ հաստատումը, խորքին մէջ, ընդգծումն է այն գիտակցութեան, որ բնութեան ծով գազարները վերձանող, տիեզերական խորհուրդներուն խորը թափանցող եւ իրերուն ու էակներուն ներքին ճշմարտութիւնները յայտնագործող բանաստեղծներուն հաւատամքն ու կեանքի ստեղծագործ փիլիսոփայութիւնն է:

Բնութեան մէջ մի տարրին մէջ մարդկային գիծ մը, համադրական թրթիռ մը եւ յաւերժական լուսապատկեր մը որոնող Մ. Մեծարենց, հակառակ քանի մը տարիներու իր կարճ կենսափորձին, շնորհիւ բանաստեղծի իր ոսկեծոյլ տաղանդին՝ ո՛չ միայն յաջողեցաւ դատնայ ժամանակի մը եւ միջնորդի մը վկան, այլեւ՝ բոլոր ժամանակներուն ազնուազայն սիրերգականերէն մէկը, յաւերժութեան ու յաւերժական ապրումներու գեղապաշտ պատարագիչը:

Պատարագիչը՝ որ հայ բանաստեղծութիւնը օժտեց խորաթափանց տեսողութեան նրբադոյն որակներով եւ մեղմահունչ մեղեդիներու լուսեղէն համանուազներով: Ու տակաւին փիլիսոփան՝ որ աւանդեց լոյսի եւ սիրոյ հայկական ամենասուրբ ապրումները, կենսասփրութեան, ինքնարաշխուժի եւ տիեզերական խորհուրդներուն հետ միաձուլուելու անանձնական վարդապետութիւնը: Եւ վերջապէս բանաստեղծը՝ որ հայ բանաստեղծութեան բոլոր ժամանակներուն կտակեց բնութեան եւ մարդկային էութեան խորհուրդները բացայայտող այս ազնիւ ու բարի մտածողութիւնը, համամարդկային բիւրեղեայ աշխարհաշայեցողը, որուն լուսակերտ եւ ամենագոր աւանդը պիտի հնչէ բոլոր ժամանակներուն՝ իրբեւ մէկը հայ լուսապաշտ ժողովուրդի մշտաբարբոջ կենսաբայն լուսակուրքներէն:

Մ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

## ՏԵՍԻԼՔ

Միսաֆ Մեծարեցիկն

Վազուց մաշած, այլ անխորտակ նուակիս  
 Ես միս-մինակ թիավարն եմ այս գիշեր.  
 Ինչպէս եղաւ,— լուսաստղը ինք տարաւ գիս  
 Խորհրդաւոր, պակուցիչ այն ակիր, ուր  
 Աղբամուղջ է, նորէ՛ն մշուշ, ու յուշեր:

Յայգն է պայծառ... Ու ես եետդ եմ վերստին,  
 Տժգո՛յն տղայ. թաց եմ աչքերդ դառնահեծ,  
 Հանգչէ՛ սակայն, ա՛յ չես մնար առանձին,  
 Պարիկներդ եմ, որ կը պարեն պարն իրենց  
 Ու ֆնֆշանֆով ֆեզ կը կանչեն,— Մեծարե՛ց:

Տարփատենչիկ ազգիկն այն լոյս անուրջիդ,  
 Լուռ, սիրահալ, դէմդ է ինկեր ծերադիր.  
 Ինչպէս պայիկ՝ շունի քրֆիջ ու ժպիտ,  
 Քու պաշտումիդ ընծայաբերն է հիմա,  
 Արցունքն աչքին, ա՛հ, ֆարացած շափիւղայ...

Պիտի նակատդ համբուրեմ սրբանուէր  
 Երբոր հասնիմ աստուածեան ակդ անհուն,  
 Այիֆներու հարուածէն նաւս անհամբեր  
 Մօտդ է արդէն՝ Եփածանի ծիրանավա՛ռ դուն գօտի,  
 Նար տադերու թոյրի, բոյրի մեծատուն...

ԹԱԹՈՒԼ Ա.



# «ՆԱՐԵԿ»Ը ՄԵԾԱՐԵՆՑԻ ՀԱՅԵԱՑՔՈՎ

Որքան քաղցր պիտի ըլլար այս ամառ-  
ժամ դիչերտտ տիւրն մէկն ընդշմարեկ  
յանկարն կապտոտ բարութիւնը՝ որ ճա-  
ռագայթով ժը կը ժպտեր շոգիի սրահակ-  
ներուն մէկ ձերպցին՝ եւ աղբրագին  
կանչէր։

«Պողատիմ առ ինչ, յուսոյ ճառա-  
գայք...»

Բայց ա՛նա ճառագայթն է. բամենա-  
փայլ ճառագայթը», ժրտտոմխնեայ յոյ-  
օղը, ճարփացնցուց ցօղը», բտօնեխի  
խոնարհութիւնը», ճփրիական ճամ-  
բոյրն է այդ սփեթնի շուրջ շառայի՝ որ  
կը սաշի հոգիին խորը՝ քաղցրագած  
երազներու արցակը ժապաւինելու։

Նարնէր պեկնօտութիւն ժըն է. հոգե-  
կան վրդով ժրքիկ ժը եւ պեկնօտութիւն  
ժը՝ ուր բառերն ու կուտութիւնները  
այիբներու բախուժին շափութութիւնը՝  
անոնց ինքեակորձան շառամները՝  
անոնց իրարաւարած խաղաքքն ու ան-  
կուժները ունին։

Եւ այս պեկնօտութիւնուն մէջ յոր-  
ձակներու ախր ինկան պտօնի նաւակ  
ժը կայ՝ զոր կուտակները ուրիշի ժը պէս  
մեռքէ մեռք կը նետեն, ժիշկու խորտա-  
կուժ։

Մեծարե՛նք տեսնու՛մ է ճնարեկի  
ներքին ճոտանքները՝ տտոպանքի,  
մեղքերի մէջ տտոպաղող մարդու հոգու  
խաւարումները, որից մնում է միայն  
ժուտութեան մեղեգիները։ Մակայն նոյն  
այդ գիշերնորից, ինքնախարազանումից,  
տտոպանքներից եւ հոգեկան խաւա-  
րումներից անվերջ մտուող երազների մէջ  
նորից ժաղում է լուսաւող արեւը, տորուն  
տորիւ աղբրագին կը ճննննէ աղօթո-  
ղքը։ Սա ճննց այն էականն էր, որ տեսա-  
նորօրեայ բանաստեղծը ճփակչ աղօ-  
թագրքի մէջ։ Նրա գրիչ սակ ճնարեկից  
գորտ է գայիս եկեղեցական կաղապար-  
ներից, շոգում արեւի ճառագայթներով,  
ընդգծուժ յոյրի եւ ջերմութեան երազ-  
ներով։ Մեծարե՛նք շատ գեղեցիկ է բնու-  
թագրել արեւի ու յոյրի այդ անբօտանքը,  
հոգու այդ վարար ճոտանքը. ճլուսա-  
խնդիք աղաղակ կ'երկնէ։ Միջնաղա-  
րի բանաստեղծը թաղում մեծերով, կի-  
ւէջներով աղբրում է լուսոյ ճառագայթ,  
երազում է արդարութեան արեւի ճա-  
ճանքները. ճլրտացի կնիքը լուսոյ ի գեղ  
տեսակի...»։

Ա. ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՊՈԼՍՈՅ

«ՄԱՍԻՍ»Ը



Նկար՝ Գ. Մխիթարի

ԵՒ

ՄԻՍԱԲ

ՄԵԾԱՐԵՆՑ

Կարելի էր այս գրութիւնը նաեւ վերնագրել՝ «Ենովք Արմէն եւ Միսաք Մեծարեաց»։ Պոլսոյ «Մասիս»ը, որ հիմնուած ու խմբագրուած էր Կարապետ Իւսթիւնեանի կողմէ, վերջին 20ամեակին զանազան խմբագրերէն փոխուած էր։ 1906-1908 խմբագիրն էր Ենովք Արմէն։ Երբ լոյս կը տեսնէր Մեծարեացի «Միսաք» հատորիկը (1907), Ե. Արմէն կը գլխաւորէր անտեղի եւ անմտաբարկային խաշակութիւն մը։ Առանձնապէս կ'անդրադառնանք այս երևոյթին, որովհետեւ գրական ճաշակի, արուեստի հասկացողութեան արժեչափերը չէին (թէեւ դատումները կը ներկայանան այդ քողիմ տակ), որ ծնունդ կու տային այս խաշակութեան, այլ՝ անձնական պատճառներ։

Բնական բաղձանք մը կ'ուեննայ ցարդ իր լոյս ընծայած քերթուածները ամփոփել հատորի մը մէջ։ Հաւանաբար կը զգար, որ հիւսիստը իր աւերիչ դերը կը կատարէր։ «Մասիս»ի խմբագրութիւնը կը ստանձնէր Հայրութիւնը այս գործին։ Տնօրէն-խմբագիր Ենովք Արմէն պիտի գրէր յառաջարան մը՝ ներկայացը-

նելու համար Մ. Մեծարենցը: Մակայն, Մեծարենց գրուածքը չհասնելով՝ կը մերժէ գնել իր գրքոյկին սկիզբը: Յառաջարանը կը գրէ Արամ Անտոնեան եւ գիրքը լոյս կը տեսնէ ուշացուածով՝ 1907ի գարնան: Մեծարենցի այս մերժումը ծանր պիտի կշռէր իր վրայ: Իր եւ իր համակիրներուն վրայ բացուած յարձակողականը կամ խաչակրութիւնը ծնունդ կ'առնէր այս մերժումէն:

Գիրքին հրատարակումէն ետք, «Մասիս» կը գրէ. «Հրատարակութեամբ «Միաժաման», Բերթաւածմերու գրքին մը, Միսաֆ Մեծարենցի: Ծանուցած էինք քէն քէ՛՝ «Մասիս»ի Մատենադարանին առաջին հատորը պիտի կազմէ ան, օսակայն տիրոջը հետ գեղարուեստական խնդրի մը մասին անհամաձայնութեան մը պատճառով, նախընտրեցինք Մատենադարանին չկցել անոր հրատարակութիւնը» (1907, էջ 528):

Տիրքան Չօկիւրեան կը գրախօսէ «Միաժամանը»: Պարկէտ գրագատ մըն է: Գրական հասկացողութիւն, մասնաւոր հաստատութիւն ունի: Կը զգայ արժէքաւոր բանաստեղծի մը ներկայութիւնը Մեծարենցի մէջ: «Իր գործին մէջ ապագայ արժէքաւոր բանաստեղծի մը յատկանիշները ամէն տեղ ի յայտ կու գան» (էջ 581): Կը գտնէ որոշ թերութիւններ վերահարի եւ բովանդակութեան միջեւ, բովանդակութեան մէջ նրկթի անկապակցութիւն, եւ այլն: Մեղծ ու քաղաքավար է իր քննադատութեան մէջ: Մակայն, խըմբադրութիւնը, սողատակային ծանօթագրութեան մը մէջ, իր սուղձին նախնայաններ ցոյց կու տայ. «Եւ մասնաւոր «կապոյտ յաժամներ» ի՞նչ տեսակ բան է արդեօք այդ կապոյտ յաժամը. կրնա՞ն նկարագրել: կրնա՞յ հոյն ինքն նկարագրել անոր հեղինակը: Անխման սենյակիտի մը նմանողական գայթակմանը եւ մէկ քանի բանաստեղծներու փորձած այս մոլայր կապկուրիւնները» (էջ 582):

Յարձակողականը մեղծ է, որովհետեւ ունի իր պատճառները: «Միաժամ»ի բովանդակած զերթուածներուն մեծ մասը լոյս տեսած էր «Մասիս»ի մէջ: Տակաւին, լոյս պիտի տեսնէր «Մասիս»ի

անունով: Հետեւաբար, ծանր յարձակողականի մը պարագային՝ զո՛հը կրնար գտնուել նոյնիքն թերթին խմբագիրը:

Երբ լոյս կը տեսնէ Մեծարենցի Բ. հատորը՝ «Նար տաղեր», Ե. Արմէնի զօգուած գայրոյթը աղատ ընթացք կը գտնէ: Վեց էջոց խմբագրական յօդուածով մը սանձարձակ պարտաւ մը կը հրամայընէ:

Մեծարենց խորհրդապալա զորոյ մըն է: Իր մշակած գրականութեամբ, իրբեւ խորք եւ ձեւ, կը շեղէր 1900ական թուականներու Պոլսոյ մէջ մշակուած գրականութենէն (իրբեւ արդիւնք համիտեան գրաքննութեան), որ անկնիք ու ծեփեքուն ձեւերով կը մշակուէր, թէեւ մշակողները իրենք, մեծ մասամբ, այր մարդիկ էին: Նորութիւնը միշտ ալ ունեցած է իր ընդգիծալիքներն ու ընդգիծախօսանքը: Եթէ այս բնական հակումին վրայ աւելցնենք անձնական քինախնդրութիւնը, այն ատեն հասկնայի կը դառնայ Ե. Արմէնի եւ իր չրջապատին շրթոյազերծած խաչակրութեան էութիւնը:

Մեծարենցի բուն արժանիքները թիրախ կը գտնուեն Ե. Արմէնի բուն քննադատութեան: Հայ գրականութեան ինքնակոչ պահակի դերը ստանձնելով՝ Ե. Արմէն նիգակ կը ճօճէ Մեծարենցի եւ անոր ազդեցութեան դէմ: Մէջբերենք իր դատումներէն.

«Բանաստեղծի մտահանոյժ մը, Բերթաղական խաղ մը, արուեստակեալ ու բանագրօսիկ բառախաղութիւն մը, որ ոչ մէկ կերպով կը հակակշռէ գաղափարի պակասը, իմաստի ունայնութիւնը եւ նախադասութիւններու ոչընչաբանութիւնը» (էջ 939): Իրբեւ փաստ իր հաստատութեան, «Ջրտուռ» զերթուածէն կու տայ երկար հատուած մը, բնագրծելով այն բաները, որոնք, ըստ իրեն, թեր են: Կը մէջբերենք երեք տող՝ Ե. Արմէնի ընդգծումներով.

Հօյճօյ, առու յորդառատ  
 դալարին ծոցն է նետուեր,  
 Գաղղ տարփանգնով իր շուրին՝  
 ուր արևու կ'ապրի դեռ:  
 Վանքին բակը կ'ազօրծն հակա-  
 ծանոթ սարօրին:

Ե. Արմէնի Համար անկարելիութիւն են տարփանքին գաղղութիւնը եւ ծառերուն աղօթելը:

Մէջերեկնք քանի մը զգաստու՞մ եւս. «Նոր տաղեր»ու ընթերցումը չի տպաւորեր ու չ'ազդեր: Խոշոր պարայ մը կայ հոն, անհուն դատարկ մը»:... «Ամբողջ գիրքին մէջ, ո՛չ մէկ էջ՝ որ տպաւորէ, որ ազդէ, որ ցնցէ, որ խորհրդածի տայ»:... «Ո՛չ իսկ գիտ մը, նորութեան հրապոյր մը, անակընկալ իջի մը դիւթամքը՝ այդ փրթումներուն մէջ» (1907, էջ 941):

Ե. Արմէն այլամերժ եւ յանձնապատան զբող մըն էր: Ի՞նչ էր բոլոր անոնց, որոնք իր տեսակէտներուն դէմ կ'արտայայտուէին: Մեծարենցի Հատորները գնահատող գրադատներ գտնուած էին: Անկարելի էր մարտել այս երեւոյթը: Հետեւաբար, զրիչը ձեռք կ'ուռնէր ստորագրելու Համար 1908 Մարտ 1ի «Մասիս»ին մէջ 10 էջնոց (էջ 273-282) գատանետում մը՝ «Քապօթէնները», առանց նկատի առնելու, որ Մեծարենց Հայքի փոխազըւած էր, եւ վիճակը՝ անյոյս:

Ինտրայի, Ե. Գոյանճեանի վրայ յարձակելէ հոգ՝ ան նիզակը կ'ուղղէ Մեծարենցի խմբակին (Վահրամ Թաթուլ, Վահան Իսպիրեան) թէ՛ ան ունի գաճաճի դիրք, վտիտ իմացականութիւն եւ ոգորմելի տաղանդ: Մեծարենցը կը կոչէ «հեղինակը» որ Նոր տաղերը փսյած է»:

Իսկ պատշաճութեան ամէն սահման անցնելով՝ կը կատարէ անյուր Հաստատում մը: Պոլսոյ «Նշան Պապիկեան տա-

րեցայց»ին մէջ, Մեծարենց լոյս ընծայած էր երկու քերթուած — «Խուսիլ» եւ «Կազր»:

Ե. Արմէն ամբողջութեամբ կու տայ գանոնք եւ կը խորհրդամէ. «Բան մը հասկցա՞մ. ի՞նչ կ'ըսեն բանաստեղծութեան անունով երկնուած բանաստեղծութեան յայս երկու կղկղամբները» (ընդգծումը մեր կողմէ, էջ 280): Մոյեռանդութիւնը եւ չափի զգացումի բացակայութիւնը ահաւասիկ ո՛ւր կրնան Հասցնել մարդ արարածը:

Նոյն «Մասիս»ին մէջ (1908 Մայիս 30), Ե. Արմէնի փոքրաւորներէն մէկը՝ Փայլակ (Ժուլ Մայրապետեան), Հանելի լույսու Համար իր մեծաւորին, պիտի գրէր. «Միտա՞մ Մեծարենց... ըսուած սագի փետուրի մը, որ կը կարծէ, թէ կրնայ թռչիլ, որովհետեւ հովի պատահական քմահաճայք մը գետնէն վեր առած է զինքը»:

«Պարոն Մեծա...միտ»:

Ու մտածել, որ յսխուռն, շարամիտ եւ անմարտելի Հայհոյանքները կ'արտայայտուէին մահուան ճիւղներուն դէմ մաքառող բանաստեղծի մը Հասցէին:

Փայլակ կը նահատակուէր 1915ին եւ առիթ չէր ունենար իր մեղքը քուելու: Ե. Արմէն, այս գրութենէն յետոյ տարի հոգ ալ տակաւին կ'ապրէր եւ շղիջեցաւ հրապարակով իր գիտակից սխալը ընդունելի: Մեծարենցը քննադատողները միջակութիւններ եղան մեր գրակախութեան մէջ, իսկ Մեծարենց պարձաւ մեր գրակախութեան երկնակամարին մշտափայլ աստղերէն մէկը:

Ա. ՏէՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ



...Փախուստ տալով կեանքից, այսօրինակ յոռեանտութեամբ ապաւինում է ջոսկէ փոշիներին», լացող ուռնիներին, աշուններին եւ հաշիւով ու բայասանով օծուն գիւրներին («Սիրիբրգ», «Յայգաճառագ», «Ուրիճնրու շուֆին տակ», «Աշնամայիճ հեծալքիճնր», եւ այլն)։ Եւ ձգտում է փոփոխել ու հանգստութիւն գտնել բնութեան ծոցում, սպրեւ ճողիչ, ջուրին ու քարին հետ»։... Սակայն նրա երգած բնութիւնը մեծ մասամբ խաւար է ու մառյլ։

...Մեծարեացի պանթէիզմը, բոսէութեան, ընդհանուր ոչինչ չունի իսկական պանթէիզմի հետ։ Նրա մօտ կեանք չկայ, այլ կան միայն «միտիքցուցումներ» («Հնովիմ անցքը») եւ լքուածի հիւանդապին նոսպաներ։ Իսկական պանթէիստներին կեանքն էր մղում դէպի բնութիւն, իսկ Մեծարեացիներ՝ յուսահատութիւնը, «մահուան սրփուքը»։ Նրանք կրօնական պատկերների տակ երգում էին կեանքը, բնութիւնը, իսկ Մեծարեացի կեանքի, բնութեան պատկերներով երգում է կրօնը, Աստուծուն։ Այս տեսակետից Մեծարեացի պանթէիզմը ժամանակավէպ է եւ ըստ էութեան թեակցին։ Փախուստ կեանքից, յուսալքում, մահուան երգ, անկումայնութիւն, դեզիզում մշտնապատ ու անորոշ երազների մէջ, «հեռուոր երանաստանների բաղձանք» («Գիտափի կրագանգ») խոր միտիցիզմ — ահա այն տրամադրութիւնները, որոնցմով տղարուած է Մեծարեացի բանաստեղծութիւնների մեծ մասը։

...Մեծարեացի պոեզիայում կողք կողքի գնում են անկումայինն ու օպտիմիստականը, որոնք այն, անկանարար, դարձնում են ո՛չ թէ ուղիղ գծով զարգացող, այլ իրեամէկը տրամադրութիւններով ու ներքին մաքսուածով աչքի ընկնող մի ստեղծագործութիւն։... Եւ գիւղում չի տեսնում սոցիալիստական—դասակարգային շերտաւորում, հարուստ ու աղքատ, կապիտալիզմ, որ պանդխտութեան էր մղում հազարաւոր մշակներին. եւ չէր ճանաչում 900ական թուականների գիւղը, այն երգում էր հեռուից, գիւղում անցկացրած պատանեկան տարիների տպաւորութեամբ։ Հասարակական—սոցիալական երեւոյթների հիշտ ըմբռնման եւ ընդհանրացման բացակայութիւնը՝ գիւղին ու գիւղացուն վերաբերող երգերի հիմնական թերութիւնն է։... Եւ չի կարողանում խորացնել իր հումանիզմի առողջ տարրը։ Աւելի՛ն. եւ հեռանում, վերստում է կոնկրետ մարդու հասկացողութիւնից ու սլանմ բարեքներն ու իր «անձնական ուրախութիւնը» իրրեւ անձրեւ ցօցողում է՝ ամէն դաշտի վրայ եւ իրրեւ արեւ «բաշխում» բոլոր հորիզոններին, բոլոր մարդկանց։ Այսպիսով, Մեծարեացի հումանիզմը ի վերջոյ վեր է ածուում մանրաբուրժուական, պասսիւ, հայեցողական հումանիզմի։

...Մեծարեացի ձգտել է երգել գուսանի նման պարզ ու հասկանալի, բայց դա նրան չի յաջողուել։ Անտուճիների նկատմամբ տածած ջրմտ սէրը եւ բանաստեղծութեան ժողովրդայնութեան մասին իր սկզբունքը եւ չի կարողացել հետեւողականօրէն իրականացնել իր ստեղծագործութեանը մէջ։ Ժողովրդին հետեւելու իր ձգտմանը հակառակ, Մեծարեացին չի յաջողուել արտացոլել նրա սոցիալական ծանր վիճակն ու բողոքը, որոնք հանդիսանում են գուսանական երգերի եւ Անտուճիների իդէական բովանդակութիւնն ու գեղարուեստական անդնահատելի արժանիքը («Հայ գրականութեան պատմութիւն», Բ. Հատոր, Երևան, 1951, էջ 435—444)։

Յ. ձ. ՍԻՐՈՒՆԻ



Գծ. Սեդր Դարբինեանի

## ՄԵԾԱՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Հայրենասէրը շատ քիչ ճանչցուած է Մեծարենցի մէջ: Բայց Մեծարենց Հայրենասէր մըն էր, ու աւելի՛ն. Հաւատացող մը: Ան կը պատկանէր երիտասարդ խմբակի մը, որ Հակոբակ շատ մը յուսախաբութեանց եւ տիրող ահաւոր սարսափին՝ դեռ վառ կը պահէր իր մէջ յեղափոխութեան շունչը.—Հաւատքը գալոց երջանիկ օրերուն:

Արտասահմանէն ստացուած թերթեր ու զիրքեր ամուր կը պահէին յոյսը եւ պայքարի տենչը այդ բուռ մը երիտասարդներուն մէջ: Մեծարենց ջերմեռանդ ընթերցող մըն էր այդ յեղափոխական գրականութեան: Վահրամ Թաթուլի միջոցաւ կը Հայթայթուէին իրեն այդ զիրքերն ու թերթերը, որոնց բերած յոյսն ու սարսուռը ծծելէ յետոյ՝ երկուքը միասին գանձեր կը յանձնէին մոռի մը բոցին:

Մեծարենց, այդպէս, ջերմեռանդ Հեփտեղ մը եղաւ «Իրօշակ»ին ու «Տիագմիկ»ին եւ կարգաց, դարձեալ, արտասահմանէն ստացուած ուրիշ Հրատարակութիւններ ալ, ինչպէս անգլերէն «Արմէնիան», թիֆլիսի «Մարմար»:

Այդ օրերուն էր, որ արտասահմանի մէջ, Հայ տառապանքը եւ մարտնչումը կը ստեղծէր ցեղին ամէնէն փառաւոր քնաբաւորներէն մէկը՝ Միամանթոն: Մեծարենց կարգաց մեծ դիւցազներգուին «Հագնվարի» եւ յայտի ցահերձը, որ Հազիւ ստացուած արտասահմանէն՝ Հայթայթուէր էր իրեն: Կարգաց ու պահ մը ինքն ալ սարսուց ցեղին շարժաբանքովը: Հայ ժողովուրդին երկու մեծ զաւակները կը Հազարուէին իրարու:

Մեծարենց, այդ եղբայրական Հազարութեան մէջ՝ ինք ալ ուզեց իր Հայրե-

նիքին տառապանքը երգել: Հիւանդ էր ինք այդ օրերուն, ու իրեն այցի եկող եղբոր մը տուն տուա ջերթուածը: Հիմա կորսուած է այդ բանաստեղծութիւնը, ու անկէ Հազիւ քանի մը տող կը յիշէ թաթուլ:

Հրապարակներուն վրայ, ամբոխը հաց, հաց, հաց կ'ազազակէ...

...Խեղղաման հայրենիքիմ աչքն էր լուսիներ...

Մեծարենց մինչև վերջը պահեց իր Հաւատքը: Իր շատ մը քերթուածներուն մէջ կը զգաս ազատութեան տենչը ու կարօտը արշալոյսին: Մէկ քերթուած մը միայն կ'ապրէ իրմէ, միակ երգ մը՝ ցեղին կեկիծին ու ոգորութիւն համար:

Մեծարենց Հայրենասէր էր, այո՛, բայց ան մանաւանդ կը տուրէր իր Հայրենիքին կարօտովը: Իր բոլոր քերթուածներուն մէջ կը զգաս կարօտը իր գիւղին: Բայց մանաւանդ իր իօսակցութիւններուն մէջ ան կը պատմէր այդ կարօտը: Ան շատ կը սիրէր յիշատակներ պատմել իր գիւղէն ու կ'ողբերուէր անոնցմով: Ան կը Հաւատար, թէ պիտի բուժուի, երբ Բինկեան երթայ:

Իր օրտակեց մէկ ընկերը՝ մեր Հէք Գեղամ Բարսեղեանը, կը գրէ Միտաքին մահուան յաջորդ տարին.

«Եթէ կարենար տակաւիմ իր ծննդավայրը երթալ, ինչպէս կը ցանկար այնքան անձկակարօտ՝ իր բանաստեղծութեամ տոհմայիմ գոյնը աւելի՛ եւս շեշտելու համար, բոլորովիմ գաւառացի դառնալու համար»:

Իսկ Միտաքին միւս օրտակեցը՝ Թաթուլ, կը գրէր բանաստեղծին ձօնուած քերթուածի մը մէջ, թէ Մեծարենց ոչ թէ Հիւժախտէն, այլ Հայրենաբաղձութենէն մեռաւ («Հայրենիք» ամսագիր, 1923, թիւ 10, էջ 6):

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

\* \*

Քո՛յր, մօտեցի՛ր կըրակին,  
ծըխէ տերեւն այս բուրեան՝,  
զի ամէն բան ինձ կրկին  
կը դարձընէ Նոտն արեան:

Քո՛յր, մօտեցի՛ր դարակին  
ու բեր Հեզուկն Հընձանեան,  
զի ամէն բան ինձ կրկին  
կը դարձընէ Համն արեան:

Քո՛յր, մօտեցի՛ր ճըրագին,  
մարէ՛ դայն, թող լուսինկան,  
զի ամէն բան ինձ կրկին  
կը դարձընէ Ղոյնն արեան:

Քո՛յր, մօտեցի՛ր նըւագին,  
երգէ՛ դաշտերն ու ցորեան,  
զի ամէն բան ինձ կրկին  
կը դարձընէ ձայնն արեան:

Քո՛յր, մօտեցո՛ւր իմ ձեռքին  
աստուածաբոցն Հըրացան,  
զի ամէն բան ինձ կրկին  
կը յիշեցնէ վրէ՛ժն արեան...:

ՄԻՍԱԳ ՄԵՄԱՐԵՆՑ

Պ. ՄՆԱՊԵԱՆ

## ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ ՇԱՂԱԽՈՎ

Աշխարհի բոլոր գրականութիւնները ունին բացառիկ տիպարներ, որոնք, իրենց յայտնարեքած նորութիւններով՝ թեր ու դէժ կարծիքներու փոթորիկներու գլուռ բացին օրին, հրասքանչ ժառանգութեան մը տէր զարմնելով յաջորդող սերունդները:

Միտաք Մեծարենց մէկն է գրականութեանց պատմութեան մէջ երեցած այդ բացառիկ ծնունդներէն, որ աւաւառիկ ու թառու ապրիներէ ի վեր յափշտակութեամբ կը կարգացուի ու վերլուծման կ'ենթարկուի մեծ ձեռնաշատութեամբ, եւ սակայն անսպառ կը մնայ անոր խորհուրդը, ստեղծագործական թարմութիւնը, քնքշութիւնը ապրումներուն, պատկերներուն նկարէն գրաւուութիւնը ու խորհրդազգածութեան այն զեղումը, որ կ'այլակերպէ ընթերցողը, յուզելով քաղցրութիւն մը անոր սրտին, խորհուրդներու աշխարհին մէջ սուզուելու տենչ մը, ու մա'նաւանդ ըլլալու ու պատարագուելու մարդկայնութիւն մը:

Անունը հագիւ արտասանուած, ընթերցողին մտքին մէջ կը բացուի բուրոյնի տարրեր աշխարհ մը, տարրեր լեզու մը, տարրեր ոճ մը, ընկալութեանց տարրեր սարք, անսպասելի, բոլորն ալ, թարմ, հմայիչ, նման ամէն օր ծագող արեւին՝ անձալ ու կենսատու:

Զհաշուած Սերաստիոյ մէջ իր եղբորը եւ Պոլսոյ մէջ Հօրը հեռ ստանձնած առևտուրի գործերը, Միտաք Մեծարենց, անշուշտ հիւանդութեան հետեւանքով՝ որեւէ պաշտօն չէ վարած ու իրեն մնացած կարճ կեանքին կարճ ժամերը միայն կրցած է յատկացնել գրականութեան, որչոյցը, իրարմէ միայն երեք ամիս տարրերութեամբ՝ հրատարակելով թուական կազմած իր երկու մատենաները՝ «Միածան» եւ «Նոր տաղեր»:

Մեծարենց գրած է արձակ կտորներ՝ պատմուածք, տպաւորապաշտ կառուցուածքներ, վերլուծական յօդուածներ, բանավիճային գրութիւններ ու նամակներ: Ասոնք, ինչպէս նաեւ արձակ ու չափածոյ թարգմանութիւնները մեծարենցեան չափանիշով անստղիւտ ստեղծումներ ըլլալէ աւելի՝ բանաստեղծին ստեղծագործական գաղտնիքներուն վրայէն վարագոյրը չափով մը վերցնելու դէր մը կը կատարեն, լոյսի որոշ շերտեր նետելով նաեւ անոր գրական հետաքրքրութեանց վրայ: Յիշեալ վաստակին մէջ հետաքրքրական է մա'նաւանդ Մեծարենցի թափանցելու ուժը եւ ձեւակերպելու կարողութեան

պայծառութիւնը: Արդարեւ, եթէ Մեծարեւոյցի բանաստեղծական յայտնութիւնները «Հողեզրու» Հիւսուցի մթնոլորտին մէջ կ'առնեն ընթերցողը, աւոր արձակները, մա'նաւանդ գրական դէմքերուն, Հարցերուն ու լեզուական երեւոյթին մասին պարզած տեսութիւնները պարզապէս զարմանք կը պատճառեն՝ իրենց հասունութեամբ և արտայայտչական պայծառութեամբ:

Մատնանշենք մէկ-երկու հատը իր տեսութիւններէն, ատկէ առաջ չմոռնալով անդրադառնալ այն ընդհանուր օրէնքին, ըստ որում՝ քսանը, քսանմէկը, քսաներկուքը այնպիսի տարիներն են մարդու մը կենանքին մէջ, արկածախնդրութեան, գուցէ ամբողջական զոհարելութեան ու հերոսութեան տարիներ, հասեալ արուեստներու աշխարհը տարերային պոռթկումներով հարստացնելու ձեռնտու տարիներ, բայց երբեք կամ քիչ անգամ հաստատ ու պայծառ մտածումներ բանածելու մղող հանգրուաններ:

Քսանամեջ Մեծարեւոյց Հոս եւս կու տայ բացառիկ իմացականութեան մը փառար, Հարազատ ակերէ ժայթքած իրաւին և հետեւապոստեամբ Հիւսւած կեղծին յայտարար նշանները ընդգծող անսխալ բնազդով:

Եիմ մտաեզուրիքիս, — կը գրէ Արտաշէս Յարութիւնեանին ուղղուած նամակի մը մէջ, — իմ մեծ ծարաւս իսկատիպ գրականութեան մը իրականացումն է: Եւ աւտար համար, գէթ իմ մասին, անիրաժեշտութիւնը կը զգամ հոգիս և չուրիս և քարին հետ ապրելու:

Մեծարեւոյցի մտքին մէջ Հողը, բնական է, որեւէ Հող չէ, Զուրը որեւէ Զուր չէ, քարը որեւէ քար չէ: Այլուր յայտնուած պապականերէն արգէն գիտնէք, որ իր առընչութիւնը մասնաւոր Հողի մը, մասնաւոր Զուրի մը ու մասնաւոր քարի մը հետ էր, իր մանկութիւնը օրօրած խարենական Հողին հետ, Զուրին ու քարին, որոնք սերունդներու կտակած ժառանգութեամբ՝ յուշերով, ազօթքով, խուսկով, արիւնով սրբացած են եւ օժտուած ճիսկատիպը՝ կարելի ու կարկաչուն դարձնող յարուցիչ զօրութիւններով: Ան գիտէ ու կը զգայ խորապէս, որ մարդու մը Հողիին յարամանուած ձայները, դոյնները, բոյրերն ու ձեւերը աւելի ուժգնութեամբ կը խայտան վերագտնուած Հարազատ աշխարհին մէջ, եւ Հողին ու միւսներուն գրգռները աւելի արագ ու մեծ զօրութեամբ կը պայթեցնեն արեան արարչահիթերը:

Հարազատ տարերքին բեղմնափոշին, բայց նաեւ արուեստը, որ կ'ապահովէ ընդգրկուած իւրաքանչիւր նիւթի նոր շնչառութիւնը, ըստ Մեծարեւոյցի՝ երբ բանաստեղծը Հնու մնայ մա'նաւանդ ճանհրապոյսը՝ խաւարագլու մներէ, կերծ՝ «ոչնչարանութիւններէ ու Հարթվայրային տազտուկներէ», այլ փողփողի ճեւիտ ցոլքով և ինքնութեան դրոշմով, եւ մատուցուի մարդոց փրկականին ու պարզին վճիռ զգացողութեամբ:

Մեծարեւոյց իր գործերը երկնեց վերը ամփոփուած ըմբռնումներուն լոյսին տակ, Հարուսակ հաւատարիմ մնալով արուեստագէտի խղճմտանքին:

Իր ծանրութեան կեղրոնը սակայն, աւելորդ է ըսել, բանաստեղծութիւնն է, «Միաժամանակն ու «Նոր տաղիւրուն» մէջ գիտեղուած քսանէ աւելի շլուխ-գործոցներն են եւ ասոնց յաջորդած տար ամիսներուն ընթացքին հրաշագործած պաղպաղուն կտորները:

Ինութեան, խորհրդազգածութեան, սիրոյ ու մարդկայնական ապրումներու երգիչ է Մեծարեւոյց, որ իր ընդգրկած աշխարհներուն հետ յայտնաբերեց լեզուական, ոճական ու թեքնիքայնային՝ նոս ու անտիպ շնորհներ, որ առաջին օրէն արուցեալ իրեն մեծ բանաստեղծի պատիւը:

Հոս տեղն է հաւանաբար անդրադառնալու այն տպաւորութեան, ըստ որում՝ Մեծարեւոյցի գործերը ունին յղացման ու կենսագործման տարերային

բնոյթ մը: Իրապէս, շատեր կը կարծեն, թէ յաւելումներու ու յապաւումներու ճամբով լրացուցիչ աշխատանքներ չեն կատարուած անոնց ճարտարագետական կառուցիին մէջ:

Պատճառածրային բերուած, բխուած, ի հարկէ, առաջին տեղը կը գրաւէ ապրող գործ մը ձեւաւորելու մեքենականութեան մէջ, բայց երբեք ճիշդ չէ մտածել, որ Մեծարենց ոչինչ կը պարտի շինարարի, տանիանքի, աննինջ Հնոցօրին: Բոլոր մեծ բանաստեղծներուն պէս, իր բանաստեղծութիւններէն մեծ մասին վրայ ան կատարած է չակայական աշխատանք, նոյնիսկ արիւնած է ոմանց համար, մտապատկերին համապատասխան ձեւ մը նուաճելու կորովին ընթացին: Բաւարարուիչք յիշելով օրինակներէն մէկը, «Աստուածամա՛ր» խորագրուած նշանաւոր բանաստեղծութեան երկու տարբերակներուն պատմութիւնը: Էնոր տաղերչուն մէջ անցնելէ առաջ անիկա լոյս տեսած է Երիւզանդիանը շաբաթաթերթին մէջ ու աներեւակայելի է երկու «Աստուածամա՛ր»ներուն տարբերութիւնը, յօգուտ երկրորդին, որ բանաստեղծին մէջ գործադրողմասնէին վերջին փայլատակումով եղած է չքնադ տեղծում մը:

Միտք Մեծարենց իր հրահրութեան ամէնէն ծանր օրերուն ու ամիսներուն գրեց իր բոլոր հանդամանաւոր բանաստեղծութիւնները, ԵՄԻԾԱՄՃԻ տասէ աւելի թանդակներէն մինչեւ Էնոր տաղերչուն Թիւով աւելի զոչարները եւ մինչեւ մամոյ մէջ ի կենդանութեան լոյս ընծայած կարգ մը հրաշակերտները, «Արդի մարդուն Հայր մերը», եւ միւս պոսթիւմները, սերերգները նորէն, ԸՄԱՅԻՆԵՐԸ:

Մահուան մօտիկութիւնը, մահազգացումը ի՛նչ դեր ունեցած է եւ ունի անհատի մը ներքին գաղտնարաններու դասները լոյսին հանելու անապարանքին մէջ, ինչպէս բնագծուած է տարբեր ժողովուրդներու եւ եղբարախոս մեր միւս բանաստեղծներուն ոտիթով: Սակայն Մեծարենց, նակատադրական նոյն հարուածը կրելով ու զգալով հանդերձ, հոս եւս կը պարզէ համարեա՛րտ լորովին ինքնուրոյն նկարագիր մը, որուն բերումով խուճապահար, անդունդներ ապրող ու նզովքներ կարդացող բանաստեղծի մը փոխարէն, Հայ գրականութիւնը ունեցաւ նրբագին, քաղցրագին, ցնձագին զգացումներ քնարերգող բանաստեղծի անկրկնելի տիպարը, որ ամէն ինչ ջրաւ, որ մեր նակատագիրը մոռնալու համար ու ամէն ինչ ջրաւ, զոչնց իր թանկագին վայրկեանները մարգ էակին ի հաշիւ, անոր օրը քաղցրացնելու եւ հոգին ուրախութեամբ ողողելու մարդկայնութենէ մը կլանուած:

ՏՈ՛Ր ԻՆՅԻ, ՏԷ՛Ր, ԱՐԲԱՌԱՅԻԱՆ ԱՄԱՆՃԱՎԱԿԱՆ...

Պէտք է կարծել, որ աշխարհի հանդէպ ու մարդոց հանդէպ ունեցած յորդանոս սէրերուն հետ ստեղծագործական հանդէքը առանձին գեր մը խաղացած է Մեծարենցի այս անդիմադրելի ու զոչարբութեան հասնող տենդին մէջ, ընծայելով մեզի իր հոգեղէն նակատադրէն վեր կանգնած մարդու մը հազուադէպ օրինակը, որ բանաստեղծութեամբ շարունակ կ'աղօթէ կարծէք, բնութեան մէկ տեսարանին գիմաց ըլլայ թէ աղկան մը, արեւի հետ խօսած ատեն թէ տենչանքերուն տարադնացիկ մեղուները արձակած պատուէն, ամէն վայրկեան, բոլոր առիթներով, ԸՄԱՅԻՆԵՐԸ շարքին ընդմէջէն մանաւանդ: Նոյն արամադրութեամբ յաղեցած շարք մը գրուած է արդեօք երբեւիցէ: Ըլլալ՝ ուրիշին համար, բայտուելու տենդով, ամէն հոգիի հասնելու, մարդը ճրագներ վառելու ըզձանքով, ամէնուն հուրք, ոսկի տալու պապակով մը, ձկնորաներուն, անժաման ուղեւորին ու բանաստեղծներուն երգ, բարեք ու խնձիղ շուայիլու վարար մարդկայնութեամբ մը, այ՛ս, ԸՄԱՅԻՆԵՐԸ, անոնց

ողին, թարմաշունչ, յանկուցիչ, ու ըլլայինքրու տրամաբանակ զարգացումը հանդիսացող «Արդի մարդուն Հայր մերը»:

Ներսէն հիւանդութիւն, գուրսէն թուրք, արիւն՝ ամէնուրեք, իր թոքերէն, Հարազատներու սրտէն, վերէն տառապանք, այլ իր հոգիին լուս անյիշաշարութիւն մը, ամէն ինչ բարի, առողջ, լիբրաւ ու լիհաճուն տեսնելու բազմանք ու պատարաք:

Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախութիւնն անանձնակամ...

Վստահարար ոչ ոք կը խոժոռի, ո՛չ Աստուծոյ ծառայութեան նուիրուած պաշտօնեաները եւ ոչ ալ ջերմեռանդ հաստացեալներէն մէկը կամ միւսը, երբ Մեծարենց լուսեան անբաւարար կը համարէ տէրուական աղօթքը եւ բարձրաձայն կ'առաջարկէ իր ոգեղէն յափշտակութիւնը:

Միտաք Մեծարենցի այս տաղօթքսին, ըլլայինքրու շարքին եւ ասոնց անանց թարգմանութեամբ օժտուած միւսներուն գաղտնիքներէն մէկը լուծելու համար, հաւանարար ճիշդ կ'ըլլայ կանգ առնել իր «Ի՛նչ արբեցուքեալնք խորագրուած բանաստեղծութեան առջև: Հոն ծառեր արբեցութեամբ կ'ըժպեն կեանքի յորդ ճաճանչը, խոտը նոյնպէս արբեցութեամբ լոյսին կը բանայ իր գմայլուն սէքերը, ծաղիկները սպասուծի արբեցութեամբ կը նուաղին, բուրները նարօտ կը կապեն արբեցութեամբ, ու թոշունները, թիթեռները, մեղուներ, ծովը, լիճերը, առուները, ամպերը, շնչաւոր ու անշունչ բոլոր իրերը արբեցութեամբ կը յայտնաբերեն իրենց առաւելագոյն էութիւնը, թոխչի մէջ, կարկառի մաշչ, գունալատութեան մէջ, ու Հոգին կ'ընդգրկէ այդ զբաղմունքներուն մէջն ու խունկէն», համարելով այդ բոլորը անզբաւարձու մը Աստուծոյ, զոր եկաւ, չե՛ս գիտեր ուրիշ...»:

Մեզի կը թուի, թէ Մեծարենց, քնարական իր հերոսներուն պէս, ծլարձակման, ծաղկումի, թոխչի ու շարժումի հանած ծառին, ծաղիկին, թռչունին, մեղուին ու միւսներուն պէս սկսաւ ու աւարտեց իր քերթուածները, արբեցութեամբ: Կը թուի, թէ ատիկա մնայուն վիճակ էր իր մէջ եւ շնորհիւ այդ պատճառին կրցաւ որսայ ներսի ու գուրսի աշխարհներուն խորհուրդները, ձայները, շարժումները՝ ուժեղ, պաղպաջուն ու անկրկնելի:

Բանաստեղծի մը ստորագրած բոլոր թուղթերը չեն եղած ու չեն կրնան անպայման յաւերժօրէն կարկառոյ որակով մը օժտուած ըլլալ: Ճիշդ այդ պատճառով է, որ ա՛նգամ հանճարեղ ժառանգութիւնը կը բաժնուի երկու մասի, մէկ մասը զբաղիտութեան համար անհրաժեշտ, միւս մասը, անհո՛ւշտ աւելի նշանակալից, թաւալող կեանքին, յաջորդական սերունդներուն իբրեւ Հոգեկան ու իմացական հանապաղօրդ հաց, մշտաճուն զօղանջ, ճանապարհի լոյս եւ երթի կշռոյթ:

Միտաք Մեծարենցի պարագան չէր կրնար տարբեր ըլլալ, ու ո՛չ միայն մեր անդառնանէն ներս, այլեւ միջազգային համբաւի տէր բանաստեղծներէն ունէ մէկուն շնչող բանաստեղծութիւններուն թիւին չափ ապրող բանաստեղծութիւններ կարելի է մէկտեղել իրմէ: Գրական որոշ մշակոյթն ու Հոգիին կտոր մը մարդկայնութիւն փայտաբայած ամէն ոք, հայ ըլլայ ան թէ օտար, անկարելի է, որ հոգեպէս չխայտայ Մեծարենցի իրական աշխարհին թէ խորհուրդներու տիեզերքէն յայտնաբերած գոյներով, ձայներով, ձեւերով, պատկերներով ու չհրճուի Բանին վայելչութեամբ յագեցած անոր խոհական գիւտերով:

# «ԲԱԳԻՆ»Ի

## 1986Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

### ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Վ. ՀԻԻԿՕ	Բանաստեղծաբաններ.....	1
» »	(Թարգմ. Մ. Իշխան)	
» »	Ուրուականները.....	1
» »	(Թարգմ. Մ. Պեշիկպաշխան)	
» »	Ուրուականները.....	1
» »	(Թարգմ. Եղիշե Արք. Դուրբան)	
» »	Լիզ.....	1
» »	(Թարգմ. Վ. Թեֆեան)	
» »	Ultima Verba.....	1
» »	(Թարգմ. Ա. Ալիֆեան)	
» »	Տղան.....	1
» »	(Թարգմ. Ս. Կապուտիկեան)	
» »	Տրամաբան Օլիմփոյի.....	1
» »	(Թարգմ. Մ. Ս. Կիրեան)	
» »	Ցանձի եղանակ-իրիկունը.....	1
» »	(Թարգմ. Եղիշե Արք. Դուրբան)	
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Ցան.....	1
» »	Հարկինք.....	6
» »	Վան Արտըվնդի արձանին.....	9
» »	(Թարգմ. Ե. Փամպուլեան)	
Պ. ՀԵՐԵԱՆ	Նման թիթեռին.....	2
» »	Եղի՛ր.....	2
» »	Գիշատիչ բռնում.....	2
» »	Եթէ պիտի գաս.....	2
» »	Լոզանք.....	10
» »	Արգանդ.....	10
» »	Վեց ֆազա.....	2
Հ. ԶԻՅԹԼԵԱՆ	Օտար աշխարհի կունկին.....	3
Մ. ԻՇԽԱՆ	Կար ու չկար.....	3
» »	Սառ ծիրանի.....	3
» »	Իմ երգս.....	3
» »	Այս տղան անշուք.....	3
» »	Ինչու՞.....	3
» »	Գարուն եկա.....	3
» »	Ինչպե՞ս տանիմ.....	3



<u>ՀԵՂԻՆԱԿ</u>	<u>ԽՈՐԱԳԻՐ</u>	<u>ԹԻԻ</u>
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Խորշակէն Խոբ . . . . .	3
» »	Միջակէտ . . . . .	7
» »	Փակագիծ . . . . .	7
» »	Վախճանակէտ . . . . .	7
Ա. ՃԻՒՂԵԱՆ	Գամբանական աշխրուզ վրայ կը գրեմ . . . . .	3
» »	Մարդ իր մարթազ . . . . .	3
Փ. ՎԱԼԵՐԻ	Ամփիոն — Քնարախաղ — . . . . .	3
» »	» » . . . . .	4
	(Թարգմ. Շ. Պերպերեան)	
Գ. ԷՄԻՆ	Սիամանթոյի մենախօսութիւնը . . . . .	4
Բ. ԵՂԻԱՅԵԱՆ	Խորեմացիին՝ Սիամանթոյի . . . . .	4
Մ. ՀԱՃԵԱՆ	Արեւը վառէ . . . . .	4
» »	Անուն . . . . .	4
» »	Լեռ, մոռէ՛լ՝ ինծի համար . . . . .	4
» »	Խաչելութիւն . . . . .	4
» »	Ստուերս . . . . .	4
ՎԱՐԱՆԻ	Հանրակառք . . . . .	4
»	Հայտերն ու կայքը . . . . .	4
»	Փակ փեղկեր . . . . .	8
Վ. ԿՐԵՆՑ	Լոր գիւղի այգում . . . . .	5
» »	Ծագկումն երգի . . . . .	5
Ա. ԱԼԻՔԵԱՆ	Փոքորիկներին ժամաղիք . . . . .	5
» »	Բառաշխարհ . . . . .	5
Ա. ԳԱՐՔԻ	Բժնազի կոշտուկը . . . . .	5
» »	Կլասիկի մահը . . . . .	5
» »	Խոնկորի կարծիքը . . . . .	5
Հ. ԷԴՈՅԵԱՆ	Ձեռն զանգագ բարձրամուտէ . . . . .	5
» »	Ինժուզորիս . . . . .	5
» »	Արեւածաղիկ . . . . .	5
» »	Էլէգիաներ . . . . .	5
» »	Մի խօսք . . . . .	5
Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Անհունը . . . . .	5
» »	Հայաստան . . . . .	5
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Փոխասացութիւն փոխուող հորիզոններու . . . . .	6
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Իրրու անպիղծ մեղեդի . . . . .	6
» »	Թարգմանութեան պէս կիսաեզրայ . . . . .	6
» »	Առասանգով միացում . . . . .	10
» »	Գոյարշի . . . . .	10
ՎԱՐԱՆ ՈՒԺ	Անստորագիր մամակ մը . . . . .	6
» »	Ջգայահերձ մանապարհորդը . . . . .	6
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Բասիմ կ'անցնի . . . . .	6
» »	Բուրմունքի գիշեր . . . . .	11-12
Վ. ԹԵՔԵԱՆ	Սփիւռքի քանաստեղծին . . . . .	6
ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ	Եզը . . . . .	6
Յ. ՍԻՄՕՆԻ	Մահուան երկիւղ . . . . .	6
» »	Սպասում . . . . .	7
» »	Կը ճիւղէ . . . . .	7
» »	Հո՞վն է կը փչէ . . . . .	7
» »	Երա՛ն . . . . .	7

<u>Հեղինակ</u>	<u>ԽՈՐԱԳԻՐ</u>	<u>ԹԻԻ</u>
<b>Յ. ՍԻՄՕՆԻ</b>	Կապոյտ աչքերուն .....	7
» »	Սիրտս սիրախոց .....	7
» »	Մահասարսուռ .....	7
» »	Ի գուր սյրես դուն գգեզ .....	7
» »	Աղօթք .....	7
» »	Գարնան գիշեր .....	7
» »	Երաժշտութիւն .....	7
» »	Երազ գիշեր .....	7
» »	Վայրեր սիրելի .....	7
» »	Ջոյզ մը արեւով կ'ապրիմ ես .....	7
» »	Երազայիմ .....	7
» »	Անկում .....	7
<b>Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ</b>	Լեռնային կայան .....	8
» »	Փիւնիկեան խլեակներ .....	8
» »	Անկայուն վայրեր .....	8
<b>ԱՐՄԱՆՏ</b>	Խօյապար .....	9
»	Վէրքերս եւ գրում .....	9
»	Յիշում էք .....	9
<b>ՇԱՀԱՆԴՈՒԿՏ</b>	Կենսագրական վեզարի .....	9
<b>ԴԱՆՏԷ ԱՎԻԳԻԵՐԻ</b>	Ատուածային կատակերգութիւն .....	9
	(Թարգմ. Արթուր Տայեան)	
» »	Ատուածային կատակերգութիւն .....	9
	(Թարգմ. Ռուբէն Ղուկեան)	
<b>ԵԴ. ՊՅՅԱՃԵԱՆ</b>	Մարդը .....	10
» »	Մարդը նորէն .....	10
» »	Լինելութիւն .....	10

**ԱՐՁԱԿ**

<b>Վ. ՀԻԻԿՈ</b>	Նամակներ Ատէլ Փաշէիմ .....	1
» »	Թշուառները .....	1
	(Թարգմ. Գ. Ջիլիմկիրեան)	
<b>Ա. ՏԸԲՕ</b>	Վիքթոր Հիւկոյի վերջիմ սերը .....	1
	(Հայացուց՝ Փ. Ճ.)	
» »	Վիքթոր Հիւկոյի վերջիմ սերը .....	2
	(Հայացուց՝ Փ. Ճ.)	
<b>Հ. Գ.</b>	Տունը .....	1
<b>Ս. ՓԱՆՈՍԵԱՆ</b>	Պապուայեց հարսը .....	2
» »	» .....	3
» »	» .....	4
<b>Ս. ՍԱՆԿԵԱՆ</b>	Հազարգութիւն .....	2
<b>Ն. ՔԻԻՋԱՆՆԻԱՅԻ</b>	Առաջին ժամանակ .....	2
» »	» .....	3
» »	» .....	4
» »	» .....	6

<u>Հեղինակ</u>	<u>ԽՈՐԱԳԻՐ</u>	<u>ԹԻԻ</u>
Ա. ԱՅՎԱԶԵԱՆ	Կերոնի . . . . .	2
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Աշնանալիք արձակուրդ . . . . .	3
» »	Եզնիկը . . . . .	6
» »	Արեւադարձ . . . . .	10
Ա. ՀԱՅԿԱԶ	Հաղորդում մը . . . . .	4
Ս. ՍԻՄՈՆԵԱՆ	Ան ուրիշ էր . . . . .	4
ԼԵՌ ԿԱՄՍԱՐ	Հարտարապետների ուշադրութեան . . . . .	5
» »	Հարկադրուած յարութիւն . . . . .	5
Ա. ԱՐԱՔՍՄԱՆԵԱՆ	Երկունիք — Թատերախաղ — . . . . .	5
Մ. ԱՐՄԷՆ	Հեղձար ազբիւր . . . . .	5
Բ. ՅՈՎՍԷՓԵԱՆ	Սերմնացանները չվերադարձան . . . . .	5
Գ. ԱՐՇԱԿԵԱՆ	Սեւ Եւ սպիտակ կարապներ . . . . .	5
Ն. ԱԴԱԼԵԱՆ	Պատմութեան դասը . . . . .	5
Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ	Սթրաքեժի . . . . .	6
» »	Հոգիները մերկացած . . . . .	9
» »	» » . . . . .	10
Ս. ԱՅՎԱԶԵԱՆ	Տուր ձեռքդ, կեանք . . . . .	6
Ս. ՅՈՒՅՈՒԼԵԱՆ	Երկու հանդիպում Սեւակի հետ . . . . .	6
Վ. ՕՇԱԿԱՆ	Ժամադրութիւն . . . . .	7
» »	» » . . . . .	8
Բ. ՔԷՊԱՊՃԵԱՆ	Դուռը, մահը, հրեշտակը . . . . .	8
Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ	Ինչո՞ւ դժբախտ եմք . . . . .	8
Լ. ՄԿՐՏՅԵԱՆ	Իմ ծննդավայրը . . . . .	8
» »	Դպրոցականների ամառնային նամբարում . . . . .	9
» »	Յովհաննէս Կոստանեան . . . . .	10
Վ. ԹԵՔԵԱՆ	Նշանագիր XXI . . . . .	9
Գ. ԱՐԷԼԵԱՆ	Թիլեկ-թիլեկ . . . . .	9
ԵԴ. ՊՕՅԱԶԵԱՆ	Տուն մը . . . . .	10

**ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ**

Ա. ՏԸՔՕ	Ամբողջ ֆրանսան հիւկոյապաշտ պիտի դառնայ . . . . .	1
Շ. ՏԱՄԱՊԵՏԵԱՆ	Վիքթոր Հիւկո . . . . .	1
» »	Յակոբ Սիմօնի . . . . .	7
Հ. Գ.	Les Têtes de Séraïl . . . . .	1
Բ. ԹԱՇՃԵԱՆ	Վիքթոր Հիւկո եւ Ն. Թուրինեան . . . . .	1
Ա. ԶՕՊԱՆԵԱՆ	Վիքթոր Հիւկո . . . . .	1
Վ. ՕՇԱԿԱՆ	Վիքթոր Հիւկո . . . . .	1
Մ. ՄԻՆԱՍԵԱՆ	Երկու խօսք . . . . .	2
Ն. ԷԼԻՉՊԱՐԵԱՆ	Յառաջաբան . . . . .	2
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Ազատի Այվազեան եւ յաւերժական Թիֆլիսը . . . . .	2
» »	Սիրոյ գիրքէն մինչեւ քառորդ . . . . .	4
» »	Քերթողական ահող սահմաններ . . . . .	5
» »	» » . . . . .	6
» »	Բեզուկ աշխատանք . . . . .	10
» »	Մեծապիտան Կոստան ամիր . . . . .	11

<u>Հեղինակ</u>	<u>Խորհուրդ</u>	<u>Թիտ</u>
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Գրաբնուութեան խորհրդային համակարգը . . . . .	2
» »	» » » . . . . .	3
» »	Համարարյին մի վկայութիւն . . . . .	7
» »	Յուշագրութեան վերաբերեալ մտածումներ . . . . .	8
» »	Խորասուզումների բանաստեղծը . . . . .	11-12
Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ	Օշական երևույթը . . . . .	2
» »	Անշարժութեան անի շրջանակը . . . . .	4
» »	Սերունդի մը տագնապներուն յանձնառու արձակագիրները . . . . .	6
» »	» » » . . . . .	7
» »	» » » . . . . .	8
» »	» » » . . . . .	9
» »	Յանքերիցեան գեղատաշտ սպտարագիրը . . . . .	11-12
Թ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Ա. Սեփեքեանի «Ես սեւ եմ... բայց գեղեցիկ»-ը . . . . .	2
» »	Եր. Պոյանեանի աշխարհահայեացքը . . . . .	10
» »	Համայնատաշտ ապրումներու գուրբքուն հրաւիրակը . . . . .	11-12
Փ. ՎԱԼԵՐԻ	Պատմութիւն Ամփիոնի . . . . .	3
Ա. ՊԱԼԵՈՋԵԱՆ	Պիլ եւ Վասիլ — Պատմութիւն երկու հայերու . . . . .	3
» »	Զարեհեան արձակներ՝ անգլերէնով . . . . .	10
» »	Ե. Պէրպէրեանի «Սպարեակ»-ը . . . . .	10
Վ. ԹԵՔԵԱՆ	Անեղ եւ հողահօր . . . . .	6
» »	Շօշափիւն երկու բանաստեղծական աշխարհներու — Միսաք Մեծարեհց եւ Վահան Տերեան . . . . .	11-12
Կ. ՓՈՒԱՏԵԱՆ	Զրոյցներ . . . . .	7
Թ. ԿԱՐԱՊԵՆՆԸ	Գրողը եւ իր գործը . . . . .	7
Ա. ԽԱՆՈՒԼԻՆ	Տաղանդի սպանութիւնը . . . . . (Թարգմ. Լ. Մկրտչեան)	7
Հ. ԶԱՐԿԱՐԵԱՆ	Ինքնակենսագրութիւն . . . . .	8
» »	Գէորգ Զատուշի մասին . . . . .	8
» »	Սիամանթօ եւ իր ոճը . . . . .	8
Մ. Լ.	Հայաստանի գրողների 9րդ համագումարը . . . . .	9
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Դանիէլ Վարուժան . . . . .	9
» »	Արքեպիսկոպոսի շաղախով . . . . .	11-12
ԳԱՐԵԳԻՆ Բ.		
ԿԱՐՈՂԻԿՈՍ	Հայ գիրքը՝ «օճանասփիւռ» հայութեան . . . . .	10
» »	Մեծարեհցեան մթնոլորտ . . . . .	11-12
Ս. ՏԵՐ		
ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ	«Մոռնայ Հերոստրատը» . . . . .	10
ՇԱՀԱՆԴՈՒԽՏ	Հարս հովիտ . . . . .	11-12
ՆԱԶ ՏԵՐ		
ՍԱՐԳՍԵԱՆ	Միանուլում բնութեան նսին հետ . . . . .	11-12
Ա. ՏԵՐ		
ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ	Պոլսոյ «Մասիս»-ը եւ Միսաք Մեծարեհց . . . . .	11-12
Պ. ՇԱՀԱԶԵԱՆ	Հայաստանից եկեղեցիներ եւ Միսաք Մեծարեհցի գրական ժառանգութիւնը . . . . .	11-12
Ե. ԱՐՄԷՆ	Գրական նոր հոսանքի փորձ մը . . . . .	11-12

ԽՈՐԱԳԻՐ

ԹԻՒ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

*Վիթթոր Հիլիոյի Մասին՝* Եղիւ Տէմիրձիղու շէնքին, ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆ, ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ, ԳԱՔՐԻԷԼ ՍՈՒՆՆՈՒԿԵԱՆ, ՐԱՅՅԻ, ՇԻՐՎԱՆՋԱԳԷ, ԳՐԻԳՈՐ ԶԻՄԻՆԿԻՐԵԱՆ, ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԻԱՆ, ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ, ՌԷԹԵՈՍ ՊԷՐՊԷՐԵՐԵԱՆ, ՀՐԱՆՏ ԱՍՏՈՒՐ՝ 1  
*ՀՐԱՉ ԶԱՐԴԱՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ՝* ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ ..... 8  
*ՄԵՅԱՐԵՆՆԻ ՄԱՍԻՆ՝* ԳԱՄԷՐ (ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ), ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ, ԵՐՏ՝ 8  
 ԱՆԴՐԷԱՍԵԱՆ, «ՄԱՍԻՍ», Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ, ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂԵԱՆ, ԱՐՏԱՇԷՍ ԶԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Յ. Գ. ՄՐՈՐԵԱՆ, ԲՐԻՋԱՆԴ ԳԷՉԵԱՆ, Ե. ԱՐՄԷՆ, «ԾԱՂԻԿ», ՏԻԳՐԱՆ ԳԱՍԱՊԵԱՆ, ԹՈՐՈՍ ԱԶԱՏԵԱՆ, ԵՂԻԱ ԵՐՈՒԱՆԴ ՄԵԼԻՔԵԱՆ, Յ. ՕՇԱԿԱՆ, ԳՈՒՐԳԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ, «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ», ՎԱՂԱՐՇԱԿ ԿՈՐԵՆՏ — ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ — ՎԱՀԱԳՆ ԳԱԻԹԵԱՆ ..... 11-12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ


Վիթթոր Հիլիո ..... 1  
 Վիթթոր Հիլիո — Դանիել Վարուժան ..... 1  
 «Բագին» անձկութեամբ կը սպասէ ..... 2  
 Մեր կոլլեզիական կանաչ արտերում ..... 3  
 Կարուստներ ու կսկիծ ..... 4  
 Արամ Հայկազ ..... 4  
 Մկրտիչ Հանեան ..... 4  
 Սիմոն Սիմոնեան ..... 4  
 Կիսանուռն ղոզանջներ ..... 5  
 Սարգիս Սարգիսեան ..... 6  
 Հն'լ արա, եզո՛՛ ..... 6  
 Յակոբ Սիմոնի ..... 7  
 Զգալի բացակայութիւն մը ..... 7  
 Վեցերորդ բոթ՝ Հրաչ Զարդարեան ..... 8  
 Քաան տարի եղաւ ..... 10  
 Միսաֆ Մեծարեանց բուսականներով եւ քիւերով ..... 11-12  
 Սոցիալիստական ենուզք Արմէն մը ..... 11-12

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

61.- Մ. ՄԵՆԱՐԵՆՑ	. . . . .	Աճախաներու շուքին տակ
61.- » »	. . . . .	Իրիկուան իզձ
62.- Վ. ԹՈՐՈՎԵՆՑ	. . . . .	Կեանքը հին հոսովմէական ցամաքարիի վրայ
64.- Մ. ՄԵՆԱՐԵՆՑ	. . . . .	Աստուածամա՛ր, Աստուածամա՛ր
65.- » »	. . . . .	Աստուածամա՛ր
66.- Վ. ԱՍԼԱՆԵԱՆ	. . . . .	Այց մը Մեծարեցնցիմ
67.- Վ. ԴԱԻԹԵԱՆ	. . . . .	Մեծարեցնցի հետ
68.- Թ. ԱԶԱՏԵԱՆ	. . . . .	Մահաշուք կղզին
69.- Վ. ԹԵՔԵԱՆ	. . . . .	Շօշափում երկու բանաստեղծական աշխարհներու Միսաք Մեծարեցնցի եւ Վահան Տէրեան
83.- Լ. ԲԱԼՈՒԼԵԱՆ	. . . . .	Մօք պատմածը
84.- Մ. ՄԵՆԱՐԵՆՑ	. . . . .	Անանուն
85.- Ս. ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ	. . . . .	» » ( երաժշտութիւն)
86.- Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	. . . . .	Մ. Մեծարեցնց
87.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	. . . . .	Յաւերժութեան գեղապաշտ պատարագիչը
93.- ԹԱԹՈՒԼ Ա.	. . . . .	Տեսիլք
94.- Հ. ԹԱՄՐԱԶԵԱՆ	. . . . .	Հնարեկ-ը Մեծարեցնցի հայացքով
95.- Ա. ՏԷՐ ԿԱԶԱՏՈՒՐԵԱՆ	. . . . .	Պօլսոյ «Մասիս»ը եւ Միսաք Մեծարեցնց
98.- Ե. ԱՐՄԷՆ	. . . . .	Գրական մար հոսամքի փորձ մը
99.- * * *	. . . . .	Սացիալիստական եմովք Արմէն մը...
101.- Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ	. . . . .	Մեծարեցնց հայրեմասէր
102.- Մ. ՄԵՆԱՐԵՆՑ	. . . . .	Քո՛յր, մօտեցի՛ր կըրակիմ...
103.- Պ. ՍՆԱՊԵԱՆ	. . . . .	Արքեցութեան շապիթով
107.- * * *	. . . . .	«Քագիմ»ի 1986ի բովանդակութիւնը

ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Է. Ջրբաշեան, Լ. Բալուլեան, Մ. Մեծարեցնց, Գ. Գրիգորեան



ՀԻՐԱՆՄԱՆ

Հատուկագրա 20 Լ. Ո.

Տարեկան բաժնեգին 200 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատուկագրա 20 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տալար

بَاكِين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية  
المدير المسؤول  
السيد ارتين كارنيك فزالمجيان

PAKINE

REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր  
ԳՐԱՍՄԱՊԵԱՆ

Խմբագրության անդամներ  
ՅԱՐՈՒԹԻՆ ՊԵՂԵՐԵԱՆ  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու  
Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban

Tel. 296898